



Համաֆինանսավորվում է  
Եվրոպական միության կողմից

Youthpass



# ՄԱՆՐԱՄԱՍՆ՝ YOUTHPASS-ի ՄԱՍԻՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՄԵԹՈՂՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ  
ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ՕԳՏՎԵԼ YOUTHPASS ԳՈՐԾԸՆԹԱՑԻՑ

Այս հրատարակումը կարելի է անվճար ներբեռնել հետևյալ կայքից՝  
[www.SALTO-YOUTH.net/YouthpassUnfolded/](http://www.SALTO-YOUTH.net/YouthpassUnfolded/)





# ՄԱՆՐԱՄԱՍՆ՝ YOUTHPASS-ի ՄԱՍԻՆ

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ  
ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ՕԳՏՎԵԼ YOUTHPASS ԳՈՐԾԸՆԹԱՑԻՑ**

Սույն փաստաթուղթը պարտադիր կերպով չի արտահայտում Եվրոպական հանձնաժողովի, ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոնների, JUGEND für Europa-ի կամ դրանց հետ համագործակցող կազմակերպությունների պաշտոնական տեսակետերը:

# ՍԱԼՏՈ-ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է...

Աջակցություն և առաջադեմ ուսուցման ու վերապատրաստման հնարավորություններ  
«Էրազմուս+ Երիտասարդները գործելիս» ծրագրի շրջանակներում:

ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնը (Գերմանիայում) կենտրոնանում է երկու հիմնական ոլորտների վրա: Այն աջակցում է Եվրոպական հանձնաժողովին և Ազգային գործակալություններին Եվրոպական վերապատրաստման ռազմավարության իրականացման ու զարգացման գործում, ինչպես նաև աջակցում Youthpass-ի՝ որպես ոչ ֆորմալ ուսուցման և երիտասարդական աշխատանքի ճանաչման ռազմավարության զարգացմանը:

[www.SALTO-YOUTH.net/TrainingAndCooperation/](http://www.SALTO-YOUTH.net/TrainingAndCooperation/)

ՍԱԼՏՈ ներառման և բազմազանության ռեսուրսային կենտրոնը (Բելգիա, Ֆլանդրիա) աշխատում է Եվրոպական հանձնաժողովի հետ՝ ավելի քիչ հնարավորություններով երիտասարդներին Էրազմուս+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուսի ծրագրերում ներառելու համար:

[www.SALTO-YOUTH.net/Inclusion/](http://www.SALTO-YOUTH.net/Inclusion/)

ՍԱԼՏՈ կենտրոնները տրամադրում են հետևյալ ռեսուրսները՝

- վերապատրաստման դասընթացներ հատուկ թեմաներով և հատուկ թիրախային խմբերի համար.
- վերապատրաստման և երիտասարդական աշխատանքի մեթոդներ ու գործիքներ՝ միջազգային նախագծերին աջակցելու համար.
- գործնական և մոտիվացնող հրատարակումներ միջազգային նախագծերի համար.
- արդի տեղեկատվություն ճանաչման և ներառման թեմաների վերաբերյալ.
- Երիտասարդական ոլորտում դասընթացավարների և մասնագետների համար ակնարկ.
- շահագրգիռ կողմերի միավորում՝ համապատասխան ռազմավարությունների հաջող իրականացման համար:



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |           |
|---|-----------|
| <b>Ներածություն. գործնական մոտեցումներ Youthpass-ին</b>     | <b>6</b>  |
| Ինչի՞ մասին է այս Ձեռնարկը...                               | 8         |
| Youthpass գործընթացը  | 9         |
| Մեթոդներ և գործիքներ  | 10        |
| <b>Մաս I՝ Youthpass գործընթացը</b>                          | <b>11</b> |
| <b>Հետնաբեմային նախապատրաստում Youthpass գործընթացին</b>    | <b>12</b> |
| Ճանաչել ինքներդ ձեզ որպես սովորող                           | 14        |
| Ճանաչել ինքներդ ձեզ որպես ուսուցման վարող (ֆասիլիտատոր)     | 14        |
| Իմանալ ձեր թիրախային խումբը                                 | 15        |
| Իմանալ ձեր հասկացությունները և գործիքները                   | 16        |
| <b>Ուսուցման նկատմամբ հետաքրքրության առաջացում</b>          | <b>17</b> |
| Ինչպե՞ս դա անել   | 18        |
| Երիտասարդի ուսուցման վերաբերյալ իրազեկվածություն            | 20        |
| Ուսուցման ուղղորդում և պլանավորում                          | 23        |
| <b>Աջակցում մարդկանց և զարգացման ցանցերին</b>               | <b>25</b> |
| Մտորումներ ուսուցման վերաբերյալ                             | 27        |
| Ուսուցման արդյունքների բացահայտում և գրանցում               | 31        |
| Ուսուցման արդյունքների նկարագրում Youthpass հավաստագրում    | 35        |
| Ֆասիլիտատորի (վարողի) դերը                                  | 41        |
| <b>Youthpass գործընթացը դեպի ներառականության ճանապարհով</b> | <b>46</b> |
| Երբ կա ցանկություն, կան նաև միջոցներ                        | 47        |
| Ներառման հետ կապված մարտահրավերներ                          | 48        |
| Ներառման հետ կապված առավելություններ                        | 48        |
| Օժանդակում ներառմանը  | 49        |
| Մեթոդներ և լրացուցիչ միջոցներ                               | 50        |

|  |            |
|--|------------|
| «Ուսումնական փայտամածների» ռազմավարություններ                      | 50         |
| Հատուկ կարիքների համար նախատեսված գործիքներ                        | 51         |
| <b>Մաս II՝ Youthpass գործիքներ ԵՎ մեթոդներ</b>                     | <b>52</b>  |
| 1. Ուսուցման գործարան  | 56         |
| 2. Youthpass օկտա-կարողություններ                                  | 58         |
| 3. Ի՞նչ է Youthpass-ը  | 60         |
| 4. Շոն գառնուկը՝ Սահմաններից դուրս                                 | 64         |
| 5. Youthpass կղզիներ   | 66         |
| 6. Նավապետի մատյան   | 72         |
| 7. Ուսուցման վերաբերյալ հարցազրույց                                | 76         |
| 8. Ուսուցման ծով   | 82         |
| 9. Ուսումնական մատյան  | 84         |
| 10. Սովորում ենք ձեռնածություն անել                                | 88         |
| 11. Իմ խորհրդանիշը, իմ ուսուցումը                                  | 90         |
| 12. Ի՞նչ սովորեցիք այսօր   | 92         |
| 13. Կոլաժավորեք ձեր ուսուցումը                                     | 94         |
| 14. Ֆոտոնովել  | 96         |
| 15. Ուսուցման «Ֆրանկենշտեյնի մեթոդ»                                | 100        |
| 16. Բարդ մարտահրավերների վերաբերյալ հարցազրույց                    | 102        |
| 17. Սովորողների մանդալա  | 106        |
| 18. Գնահատող հարցադրումը՝ որպես ուսուցման նկատմամբ հետաքրքրություն | 112        |
| 19. Որտե՞ղ եք ուսուցման հարցում                                    | 116        |
| 20. Ինքնուրույն ուսուցման ինքնագնահատում                           | 118        |
| <b>Հղումներ</b>  | <b>120</b> |
| <b>Նշումներ հեղինակների մասին</b>                                  | <b>122</b> |



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ YOUTHPASS-ԻՆ

Youthpass-ը «Էրազմուս+ Երիտասարդություն» և Եվրոպական համերաշխության կրթայուսի ծրագրերի շրջանակներում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման ճանաչման ու վավերացման ռազմավարություն է:

Youthpass-ը ներկայացվել է 2007 թվականին և շատ ավելին է, քան մասնակցության մասին հավաստագիր: Այն նկարագրում է այն նոր հմտություններն ու գիտելիքները, որոնք մասնակիցը ձեռք է բերել երիտասարդական

նախագծում: «Youthpass գործընթացն» աջակցում է այն կրթական գործընթացներին, որոնք տեղի են ունենում երիտասարդական աշխատանքի շրջանակներում և ընդգծում նման նախագծերի կրթական ներուժը:

«Սովորել՝ ինչպես սովորելը» շատ կարևոր կարողություն է ժամանակակից հասարակությունում: Ուսուցման մասին իրազեկ լինելը հնարավորություն է տալիս երիտասարդներին և երիտասարդական աշխատողներին ուղղորդել այդ ուսուցումը ցանկալի ուղղությամբ: Youthpass-ը գործիք է երիտասարդական աշխատողների և ձեզ նման երիտասարդական առաջնորդների համար՝ ձեր աշխատանքի արժեքը տեսանելի դարձնելու համար: Միևնույն ժամանակ, այն աջակցում է այն երիտասարդների ապագա կարիերային և անձնական հեռանկարներին, ում հետ դուք աշխատում եք:

- Այս հարցերի վերաբերյալ ընդհանուր ներածությունը կարելի է գտնել 11-րդ էջից սկսած:

Youthpass-ը կարևոր հարցեր է բարձրացնում. Ինչպե՞ս եք դուք, որպես երիտասարդական աշխատող, աջակցում ձեր ծրագրերի մասնակիցների ուսուցմանը՝ առանց զվարճանքը խաթարելու: Արդյո՞ք կարիք ունեք այլ կերպ աջակցելու տվյալ ուսումնական գործընթացին, երբ աշխատում եք հաշմանդամություն ունեցող երիտասարդների հետ: Եթե այո, ապա ինչպե՞ս կարող եք Youthpass գործընթացը դարձնել «ներառման ապացույց»:

- Ներառման վերաբերյալ որոշ մտորումներ կարելի է գտնել 46-րդ էջից սկսած:

ՍԱՆՏՈ ուսուցման և համագործակցության ռեսուրսային կենտրոնը հաջողությամբ մշակել և գործարկել է տեխնիկական գործիք Youthpass-ի համար ([www.youthpass.eu](http://www.youthpass.eu)): Այժմ ՍԱՆՏՈ-ն շատ ավելի մեծ ուշադրություն է դարձնում կրթական աջակցությանը Youthpass-ն

օգտագործողների համար: Ամբողջ Եվրոպայում ստեղծվել են տարբեր մեթոդներ, որոնք դյուրացնում են ուսուցման վերաբերյալ մտորումները և աջակցում «Youthpass գործընթացին»:

- Մի շարք մեթոդներ, վարժություններ և գործիքներ կարելի է գտնել 52-րդ էջից սկսած:

«Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը նկարագրում է Youthpass-ի գործընթացը և օգնում երիտասարդական աշխատողներին և ձեզ նման երիտասարդական առաջնորդներին որոշել ձեր դերը դրանում: Այն առաջարկում է մի շարք մեթոդներ, որոնք դյուրացնում են գործընթացի տարբեր փուլերը՝ ուսուցման վերաբերյալ ընդհանուր իրազեկվածությունից մինչև երիտասարդներին աջակցություն՝ Youthpass հավաստագրի համար իրենց ուսուցումը նկարագրելու հարցում: Այս ձեռնարկը հատուկ ուշադրություն է դարձնում մի շարք թիրախային խմբերի, որոնք կարող են խոչընդոտների հանդիպել գործընթացի ընթացքում:

- Կարող եք ստանալ գաղափարներ տարբեր մեթոդների միջոցով, որոնք հատուկ հարմարեցվել են կոնկրետ խմբերի համար:

«Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը ՍԱՆՏՈ վերապատրաստման և համագործակցության ու ՍԱՆՏՈ ներառման և բազմազանության ռեսուրսային կոնտրոլների համատեղ հրատարակումն է, որը լույս է տեսել JUGEND für Europa-ի՝ «Էրազմուս+ Երիտասարդություն» ծրագրի հարցերով Գերմանական ազգային գործակալության և Եվրոպական համերաշխության կորպուսի հետ համատեղ:

## ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ Է ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿԸ

Այս ձեռնարկ երկու բանի մասին է՝ «Youthpass գործընթացի» և այդ «Youthpass գործընթացն» իրականացնելու համար մեթոդների ու գործիքների մասին:

Գրքույկը նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր ներգրավված են երիտասարդական աշխատանքի ոլորտում երիտասարդների ուսուցման գործընթացի օժանդակման գործում՝ մենթորներ, երիտասարդական աշխատողներ/առաջնորդներ, քուլչներ և դասընթացավարներ:

2007 թվականին Youthpass-ի՝ որպես ԵՄ երիտասարդական ծրագրերում ճանաչման գործիքի ներդրումից ի վեր շատ երիտասարդական աշխատողներ մտորում են այն գաղափարի շուրջ, թե ինչ նոր միջոցներով կարող են աջակցել երիտասարդներին իրենց ուսուցման գործընթացում: Youthpass-ը մարդկանց դրդեց մտածել ուսուցման մասին և քննարկել այն որպես առանձին թեմա:

- Ի՞նչ և ինչպե՞ս են երիտասարդները սովորում երիտասարդական աշխատանքի գործընթացում:
- Ինչպե՞ս կարող ենք դյուրացնել դա:
- Ինչպե՞ս կարող ենք ճանաչել ուսուցումը:
- Ինչպե՞ս կարող ենք փաստաթղթավորել այդ ուսուցումը:
- Ինչպե՞ս կարող են ուրիշները տեսնել այս ամբողջ գեղեցիկ աշխատանքի արդյունքը:


Ժամանակն է ի մի բերել այս բոլոր դիտարկումներն ու քննարկումները և բարձրացված բոլոր հարցերը, և միգուցե նաև որոշ պատասխաններ տալ:

Այսպիսով, սա է ձեռնարկը նպատակը. մի կողմից՝ փորձել նկարագրել այսպես կոչված «Youthpass գործընթացը» որպես ուսուցման մոտեցում և տեսնել, թե ինչպես այն կարող է իրականացվել. մյուս կողմից՝ տրամադրել մեթոդներ և գործիքներ, որոնք մշակվել են վերջին մի քանի տարիների ընթացքում՝ ծրագրերի տարբեր գործողություններում ուսուցումը դյուրացնելու համար:

## YOUTHPASS ԳՈՐԾԵՆԹԱՅԸ

«Youthpass-ն ավելին է, քան հավաստագիր»: Դուք հաճախ կկարդաք և կլսեք այս նախադասությունը, երբ մարդիկ ներկայացնեն Youthpass-ը: Ձեզ կպատմեն «Youthpass գործընթացի» մասին, որը կենտրոնացնում է ուսուցումը: Բայց ի՞նչ նկատի ունենք, երբ խոսում ենք այս Youthpass գործընթացի մասին: Եվ արդյո՞ք նույն բանը նկատի ունենք:

Այս ձեռնարկի առաջին մասում մենք փորձել ենք նկարագրել Youthpass գործընթացը, որն ունի հետևյալ տեսքը.



Ձեռնարկի տարբեր գլուխներ հետևում են այս սխեմային սկզբից մինչև վերջ: Որպես ելակետ մենք վերցրել ենք Երիտասարդական ծրագրի ժամանակացույցը՝ նախապատրաստումից մինչև Youthpass հավաստագրերի հանձնում Երիտասարդներին:

**ԻՆՉԻՄԱՍԻՆ Է ԱՅՍ ԶԵՌՆԱՐԿԸ.**

- Ինչպե՞ս պատրաստվել ուսուցմանը,
- Ինչպե՞ս ավելի իրազեկ դառնալ սեփական ուսուցման մասին,
- Ինչպե՞ս և արդյո՞ք կարող եք պլանավորել ձեր ուսուցումը,
- Դ՞նէ մտորման կարևորությունը,
- Ինչպե՞ս բացահայտել և գրանցել ձեր ուսուցման արդյունքերը,
- Ի՞նչ է այս ամենը նշանակում ֆասիլիտատորի դերի համար,
- արդյո՞ք հարկավոր է այլ կերպ մոտենալ ներառական խմբերին, թե՞ ոչ...

**ՄԵԹՈՂՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ**

Ինչպե՞ս կարող եք իրականացնել այս ամենը: Ի՞նչ է գործնականում նշանակում Youthpass գործընթացը: Ձեռնարկի երկրորդ մասում (էջ 52) ձեզ ներկայացվում են Youthpass գործընթացի տարբեր փուլերի հետ կապված մեթոդներ և գործիքներ: Մենք առաջարկում ենք մեթոդներ տարբեր տեսակի միջոցառումների համար (Երիտասարդական փոխանակումներ, կամավորական ծրագրեր, Երիտասարդների մասնակցությամբ միջոցառումներ, վերապատրաստում և այլն) և ապահովում տարբեր տեսակի մեթոդներ՝ անհատական, խմբակային, ստեղծագործական, գրավոր և այլն:

- Մենք նշել ենք, թե Youthpass գործընթացի որ փուլն է լավագույնս համապատասխանում յուրաքանչյուր մեթոդին:

Այս գրքուկում ներկայացված մեթոդները, վարժությունները և գործիքները մասամբ հավաքվել ու մշակվել են Youthpass-ի գործիքների և մեթոդների վերաբերյալ սեմինարի ընթացքում (Բեռլին, 2010 թվականի նոյեմբեր) մի խումբ մարդկանց կողմից, ովքեր սերտորեն ներգրավված են եղել Youthpass-ի զարգացման գործում վերջին մի քանի տարիների ընթացքում: Որոշ մեթոդներ մշակվել են ոլորտի այլ մասնագետների կողմից, ովքեր փնտրել են Youthpass-ի հետ աշխատելու ավելի նորարարական ուղիներ:

Մաղթում ենք ձեզ լավ և ոգեշնչող ընթերցանություն:



ՄԱՍԻ  
YOUTHPASS ԳՈՐԾԵՆԹԱՅԸ



## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ YOUTHPASS ԳՈՐԾԼՆԹԱՅԻՆ

«Նա, ով ճանաչում է ուրիշներին, կրթված է, իսկ ով ճանաչում է իրեն՝ իմաստուն», Լաո-ցզի

Իհարկե, ոչ ֆորմալ կրթությունը բեմում ելույթ ունենալը չէ, և նույնը վերաբերում է Youthpass գործընթացին: Այնուամենայնիվ դուք՝ որպես երիտասարդական աշխատող/ դասընթացավար/ մենթոր/ քույզ «հետնաբեմային նախապատրաստություն» պետք է կատարեք նախքան ձեր ծրագրի երիտասարդների հետ Youthpass գործընթացը սկսելը:


Սա ինքներդ ձեզ ճանաչելու, ձեր համոզմունքներին ու կասկածներին ամերեսվելու, ձեր մոտեցումը վերանայելու և ձեր գործիքակազմը ստուգելու պահն է: Սա ձեր՝ որպես սովորողի, ձեր՝ որպես ուսուցման վարողի, ինչպես նաև Youthpass-ը գործնականում կիրառելու նկատմամբ ձեր մոտեցման մասին իրազեկվածության բարձրացման պահն է: Սա կարող է փիլիսոփայական կամ նույնիսկ կրոնական հնչել ձեզ համար, բայց շատ կարևոր է հասնել

հստակության և պատրաստակամության որոշակի մակարդակի՝ դյուրացնելու Youthpass գործընթացը և աջակցելու ձեր մասնակիցներին/կամավորներին՝ դրանից առավելագույն օգուտ քաղելու համար:

Youthpass գործընթացը պարզապես մի քանի քայլ է, որոնք տանում են դեպի Youthpass հավաստագիր: Սա շատ ավելին է: Սա արժեքավոր անձնական և կրթական փորձ է: Այն հնարավորություն է տալիս երիտասարդներին դառնալու ցկյանս սովորողներ, որոնք ինքնավստահ և խանդավառ են իրենց զարգացման հարցում, ի լրումն երիտասարդական փոխանակման, վերապատրաստման դասընթացի, երիտասարդների մասնակցությամբ միջոցառումների կամ Եվրապական կամավորական ծառայության (ԵԿԾ) ծրագրի:

Youthpass գործընթացը միայն ուսումնական գործընթացում ուսուցման մասնիկները հավաքելը և Youthpass հավաստագրի ինքնագնահատման հատվածում դրանք գեղեցիկ դասավորելը չէ: Այն շատ ավելի մեծ ներուժ է պարունակում: Այն «գործող մեթոդ» է, որն օգնում է երիտասարդներին իրենց

ուսուցումն իրենց ձեռքը վերցնել և զարգացնել մի շարք մոտեցումներ ու հմտություններ: Ամենահզոր կարողություններից մեկն է սովորելը (տե՛ս ստորև նկարը): Youthpass գործընթացի միջոցով ուսուցումը դառնում է ավելի տեսանելի և միտումնավոր, այլ ոչ թե բազային գործընթաց:



Այսպիսով, ի՞նչ է այս ամենը նշանակում ձեր հետնաբեմային նախատապրաստման համար: Մենք առաջարկում ենք ձեզ քննարկել լչորս ոլորտի մասին.

- Ճանաչել ինքներդ ձեզ որպես սովորող
- Ճանաչել ինքներդ ձեզ որպես ուսուցման ֆակիլիտատոր (վարող)
- Իմանալ ձեր թիրախային խումբը
- Իմանալ ձեր հասկացությունները և գործիքները

### ՃԱՆԱԶԵԼ ԻՆՔՆԵՐԴ ԶԵՉ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂ

Երբ խոսում ենք «սովորելու» և «սովորել՝ ինչպես սովորելու» մասին, հետաքրքիր կողմերից մեկն այն է, որ երիտասարդական աշխատողները/ դասընթացավարները/մենթորները ուսուցման կազմակերպիչներ լինելուց բացի նաև սովորողներ են: Սա կարող է լինել ձեր լավագույն ռեսուրսներից մեկը Youthpass գործընթացի հետ աշխատելիս: Երբ դուք ինքներդ ձեզ ավելի լավ ճանաչեք որպես սովորող, դուք ավելի լավ կօժանդակեք մյուսների ուսուցմանը (հաշվի առնելով, որ տարբեր մարդիկ տարբեր կերպ են սովորում ձեզանից):

- ՄՏՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐ.**
- Ինչպե՞ս եմ նախընտրում սովորել:
  - Արդյո՞ք սովորելու նկատմամբ հետաքրքրություն ունեմ:
  - Ի՞նչն է ինձ օգնում ուսուցման գործընթացում:
  - Ի՞նչն է ինձ խանգարում ուսուցման գործընթացում:
  - Արդյո՞ք տեսնում եմ ինձ որպես ցլյանս սովորող:

### ՃԱՆԱԶԵԼ ԻՆՔՆԵՐԴ ԶԵՉ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱՍԻԼԻՏԱՏՈՐ (ՎԱՐՈՂ)

Ձեր մասնակիցների/կամավորների «սովորել՝ ինչպես սովորել» կարողության զարգացումը հարցեր է առաջացնում այդ գործընթացում ձեր դերի վերաբերյալ: Եթե խոսքը վերաբերում է երիտասարդներին «անկախ և ինքնուրույն սովորող լինելու» փորձից սովորելու հնարավորություն տալուն (այդպիսով զարգացնելով «սովորել՝ ինչպես սովորել» կարողությունը), ապա ինչպիսի՞ն պետք է լինեն ձեր մոտեցումն ու վերաբերմունքը, որպեսզի նպաստեք այդպիսի գործընթացի իրականացմանը:

- **Ֆասիլիտատորի դերի մասին ավելի մանրամասն նկատառումներ կարելի է գտնել 41-րդ էջում:**

- ՄՏՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐ.**
- Ո՞րն է իմ սեփական տեսությունը այն մասին, թե ինչպես է տեղի ունենում ուսուցումը:
  - Արդյո՞ք սովորելուն վերաբերում եմ ինչպես գնումեր կատարուն: Թե՞ այլ կերպ:
  - Ո՞վ է պատասխանատու երիտասարդների ուսուցման համար:
  - Ինչպե՞ս ստեղծեմ ճիշտ պայմաններ ուսուցման համար:
  - Ի՞նչ եմ հասկանում «սովորելու կարողություն» ասելով:
  - Ի՞նչ է նշանակում այս ամենը ինձ համար՝ որպես ուսումնական գործընթացի ֆասիլիտատոր:

## ԻՄԱՆԱԼ ՁԵՐ ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ

Ոչ ֆորմալ կրթության կամ Youthpass գործընթացի ոլորացման հարցում համընդհանուր լուծում չկա: Գործընթացը պետք է պլանավորվի՝ ուշադրությամբ հաշվի առնելով ձեր թիրախային խմբի իրական պայմանները, ակնկալիքները և մարտահրավերները: Այն երիտասարդները, ում հետ աշխատում եք, կարող են, ի տարբերություն ձեզ, Youthpass գործընթացը չհամարել ուսուցողական արկած:

Ըստ էության, Youthpass գործընթացը պետք է հզորացնի երիտասարդներին՝ հիմնվելով նրանց ուժեղ կողմերի և կարողությունների վրա՝ այդպիսով օգնելով նրանց բարձրացնել իրենց ինքնագնահատականը որպես սովորող: Սա կարող է հատկապես կարևոր լինել ավելի հաշմանդամություն ունեցող երիտասարդների հետ աշխատելիս:

### ՄՏՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐ.

- Ո՞րն է իմ թիրախային խմբի նախապատմությունը:
- Արդյո՞ք ես որևէ բան գիտեմ նրանց ուսուցման պատմության մասին:
- Արդյո՞ք նրանք կոգնոսկոպեն Youthpass գործընթացով:
- Ի՞նչ նախապաշարմունքներ ունեմ նրանց կարողությունների վերաբերյալ:
- Արդյո՞ք անհրաժեշտ է, որ ես այս գործընթացում լրացուցիչ աջակցություն ցուցաբերեմ:
- Արդյո՞ք կարող եմ ներկայացնել Youthpass գործընթացը նույնիսկ մինչև որևէ գործընթաց սկսվելը:

## ԻՄԱՑԵ՛Ք ՁԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Վերջապես, երիտասարդական աշխատողները / դասընթացավարները/ մենթորները պետք է կարողանան միավորել ուսուցման տեսությունների և քաղաքականությունների աշխարհներն ու երիտասարդների աշխարհը: Նրանք պետք է տեղյակ լինեն քաղաքականության զարգացումներից և համապատասխան ուղիներ գտնեն դրանք երիտասարդների հետ կապակցելու համար: Այսինքն՝ երիտասարդական աշխատողները պետք է կարողանան քաղաքականություն մշակողների և գիտնականների մասնագիտական լեզուն դարձնել հասկանալի և կիրառելի այն միջավայրում, որտեղ աշխատում են երիտասարդների հետ:

Եվ վերջում, ոչ պակաս կարևոր է հիշել, որ երիտասարդական աշխատողի մոտեցումը Youthpass գործընթացին մեծ ազդեցություն ունի երիտասարդ մասնակիցների/կամավորների հետ այն գործնականում կիրառելու ժամանակ:

### ՄՏՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐ.

- Արդյո՞ք գիտեմ, թե որն է Youthpass-ի նախապատմությունը:
- Որտեղի՞ց են գալիս ցկյանս ուսուցման բանալի կարողությունները:
- Որքա՞նով եմ տեղյակ Youthpass-ի արժեքի մասին:
- Ինչպե՞ս կարող եմ ներկայացնել այս հասկացությունները երիտասարդների համար հասկանալի ձևով:
- Ի՞նչ գործիքներ կարող եմ օգտագործել Youthpass գործընթացի տարբեր փուլերում տվյալ թիրախային խմբի համար:
- Որքանո՞վ եմ իսկապես համոզված, որ Youthpass գործընթացը հզորացման հնարավորություն է երիտասարդների համար:

### ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ.

- ⑦ Ուսուցման վերաբերյալ հարցազրույց (էջ 76)
- ⑬ Կոլաժավորեք ձեր ուսուցումը (էջ 94)
- ⑳ Ինքնուրույն ուսուցման ինքնագնահատում (էջ 118)



## ՌԻՍՈՒՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՇԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄ

Ուսուցումը շատ ավելի հեշտ է տեղի ունենում, երբ ունեք համապատասխան տրամադրություն:

Կան բազմաթիվ տարբեր պատճառներ, թե ինչու են երիտասարդները ներգրավվում երիտասարդական ծրագրերում. ինչու են նրանք մասնակցում երիտասարդական փոխանակմանը, վերապատրաստման դասընթացի կամ մեկ տարի անցկացնում Եվրոպական կամավորական ծառայության (ԵԿԾ) ծրագրում: Պատճառները մի քանիսն են՝ զվարճանալ, ճանապարհորդել, օգուտ տալ հասարակությանը, հանդիպել այլ երիտասարդների, ձեռք բերել որոշակի կենսափորձ, մարտահրավեր նետել իրենք իրենց և, հավանաբար, նոր բան սովորել:

Այնուամենայնիվ, եթե նրանց հարցնե՞ք՝ «ինչո՞վ եք տարված», ապա մի պահ զարմանալուց և տարակուսելուց հետո նրանք կպատասխանե՞ին այսպես՝ ընտանի կենդանիներ, երաժշտություն, պոեզիա, ճանապարհորդություն, սպորտ... Բավականին անսովոր կլիներ, եթե ինչ-որ մեկը պատասխանե՞ր՝

«ես տարված եմ ուսմամբ»: Միևնույն ժամանակ, բոլոր ուսուցանողների (ներառյալ երիտասարդական աշխատողների/ դասընթացավարների/ մենթորների) ամենամեծ երազանքներից է աշխատել ոգևորված, լիովին ներգրավված և խանդավառ սովորողների հետ: Ինչ-ինչ պատճառով թվում է, թե խանդավառությունը և ուսուցումը երկու առանձին աշխարհներից են: Ցավոք, հաճախ այնպես է պատահում, որ այս տարանջատումը ստեղծվում է ֆորմալ կրթության տարիներին:

Ավելին, ֆորմալ կրթական համակարգերը որոշ երիտասարդների, բառիս բուն իմաստով, գրեթե հոգեբանական վնաս են պատճառել: Նրանք թողել են դպրոցը՝ ուսումնական նախասիրությունների բազմազանության բացակայության պատճառով: Նրանց ինքնավստահությունը հաճախ բնութագրվում է այնպիսի արտահայտություններով, ինչպիսիք են՝ «ես լավ չեմ սովորելու հարցում»: Նրանց համար սովորելու

գործընթացը խիստ կառավարված է ազդեցիկ մարդկանց կողմից և ուղեկցվում է նրանց անցկացրած սթրեսային գնահատումներով: Իսկապես, կրթության մեջ իշխանության գործոնը հաճախ այնքան ուժեղ է, որ ի վերջո սովորողը կարող է ձեռք բերել «սովորեցված անգործություն» ուսման գործընթացում: Այսպիսով, զարմանալի չէ, եթե «ուսուցում» բառը ձեր ծրագրի սկզբում չառաջացնի դրական զգացմունքներ և հսկայական ոգևորություն մասնակիցներին/կամավորներին շրջանում:

**Միննույն ժամանակ, սա նաև հիանալի ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ է:**

Այս բացասական ենթադրությունները վիճարկելու համար Youthpass գործընթացի սկզբում դուք կարող եք ուսուցման օրակարում ներառել զգայուն, դինամիկ և բավանդակալից տարրեր: Իսկ նպատակն է հզորացնել ձեր մասնակիցներին/կամավորներին և խթանել նրանց խանդավառությունը սովորելու և զարգանալու հարցում, և ոչ թե հակառակը: Ոչ ֆորմալ կրթությունը կարող է երիտասարդներին ապահովել «ուղղիչ ուսումնական փորձով», հույսի և զվարճանքի զգացումով, որպես ուսուցման մաս, ինչը հանգեցնում է նոր ինքնավստահության և խանդավառ ներգրավվածության նրանց ուսումնական գործընթացում: Դա ընդհանուր առմամբ նպաստում է անհատի՝ ցկյանս ուսուցման նկատմամբ պատրաստակամությանը:


## ԻՆՉՊԵՍ ԴԱ ԱՆԵԼ

- Համոզվեք, որ ձեր բացահայտ ասածը համահունչ է ձեր գործնական վարքին. ներկայացրեք ձեր կրթական մեթոդը և առաջարկեք սովորելու այլ ձևեր:
- Պատմեք, որ ուսուցումը կարող է զվարճալի լինել, և որ այն կարող է իրականացվել տարբեր եղանակներով: Համոզեք երիտասարդներին, որ ուսուցումն ամենաարդյունավետն է, երբ կազմակերպվում է իրենց կողմից և իրենց ձևով: Ուսուցումը կարող է իրականացվել միայն սովորողի կողմից (մյուսները կարող են միայն աջակցել գործընթացին և ապահովել լավ ուսումնական միջավայր): Ուստի, ուսուցումը մեծ նշանակություն ունի երիտասարդի կյանքի համար:
- Իրախուսեք ձեր մասնակիցներին քայլ առ քայլ պատասխանատվություն ստանձնել սեփական

- ուսուցման համար: Հաշվի առեք, որ ինքնուսուցումը կարող է հզորացնել, բայց նաև վախեցնել գործընթացի սկզբում:
- Ապահովեք ուսուցման տարբերվող փորձ և մտորեք այդ մասին: Ինչպես ասել է իմ գործընկեր-դասընթացավարներից մեկը. «Մի քանի տարի անց մասնակիցները հավանաբար կմոռանան, թե ինչ ենք մենք արել, բայց նրանք միանշանակ կհիշեն, թե ինչպես ենք մենք դա արել»:
- Կենտրոնացեք երիտասարդների ուժեղ կողմերի և հաջողակ ուսուցման փորձի վրա: Ինչդրեք ձեր մասնակիցներին մտածել իրենց կյանքի այն պահի մասին, երբ նրանք ինչ-որ բան են սովորել խանդավառությամբ և նվիրվածությամբ: Ինչդրեք նրանց պատմել պատմություններ այդ մասին և քննարկել այդ խանդավառությունը

զույգերով: Դուք կարող եք նաև խնդրել նրանց նկարել այդ խանդավառությունը (տե՛ս ստորև նկարները): Սա կօգնի նրանց բացահայտել իրենց ուժեղ կողմերը որպես սովորողներ:

- Ուսումնասիրեք նաև 18-րդ մեթոդը՝ Գնահատող հարցադրումը որպես ուսուցման նկատմամբ հետաքրքրություն (էջ 110):
- Անդրադարձեք ուսուցման վերաբերյալ ենթադրություններին վարժության միջոցով: Որոշ իրավիճակներում (օրինակ՝ վերապատշաաստման դասընթացում) հնարավոր է ուսումնասիրել և քննարկման առարկա դարձնել սովորելու մասին ընդունված կարծիքները՝ պնդումների վարժության կամ նմանատիպ այլ վարժությունների միջոցով:
- Դուք կարող եք օգտագործել 19-րդ մեթոդը (էջ 114):
- Ցույց տվեք սովորել սովորելու և ցկյանս ուսուցման առավելությունները փոփոխվող աշխարհում, ինչպես նաև ներգրավված չլինելու հետևանքները: Երեկվա պատասխանները միշտ չէ, որ համապատասխանում են այսօրվա աշխարհին, և սեփական ուսուցումն ուղղորդելու կարողությունը կարևոր է դառնում անձնական զարգացման և աշխատունակության համար:



- Խանդավառ եղեք ուսուցման և Youthpass գործընթացի նկատմամբ: Խանդավառությունը, ինչպես նաև դրա բացակայությունը, վարակիչ են: Եթե դուք ինքներդ խանդավառ չլինեք ուսուցման նկատմամբ, ապա ուրիշներին այդպիսի խանդավառություն փոխանցելը դժվար կլինի: Բայց հստակ լինելու համար՝ խոսքը «Youthpass»-ը զովագրելու մասին չէ. այն ցկյանս ուսուցման և ոչ ֆորմալ կրթության հանդեպ հավատքի մասին է:

**ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ.**

- 6) Նավապետի մատյան (էջ 72)
- 10) Սովորում ենք ձեռնածություն անել (էջ 88)
- 14) Ֆոտոնովել (էջ 96)
- 16) Բարդ մարտահրավերների վերաբերյալ հարցազրույց (էջ 102)
- 18) Գնահատող հարցադրումը որպես ուսուցման նկատմամբ հետաքրքրություն (էջ 112)
- 19) Որտե՞ղ եք ուսուցման գործընթացում (էջ 116)



## ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՁԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Դուք ձեր ուսման արդյունքն եք: Այն ամենը, ինչ դուք գիտեք, այն ամենը, ինչ կարող եք անել, և այն ամենը, ինչին հավատում եք, դուք սովորել եք: (Պիտեր Հունի)

Ընտաքըքիր պարադոքսն այն է, որ մենք մեր կյանքի մեծ մասն անցկացնում ենք սովորելով՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար: Երբեմն մենք մտածում ենք (կամ մեզ ինչորում են մտածել) մեր սովորածի մասին, բայց մենք հազվադեպ ենք մտածում այն մասին, թե ինչպես ենք սովորում: Շատ հաճախ մենք տեղյակ չենք ուսուցման գործընթացի մասին, քանի որ հակված ենք ուսուցումը դնել «ավտոմատ» ռեժիմում: Այնուամենայնիվ, սեփական ուսուցման գործընթացների մասին իրազեկվածության բարձրացումը «սովորել՝ ինչպես սովորել» կարողության զարգացման հիմնաքարերից մեկն է:

Ընթացողվում է, որ որքան իրազեկ ենք մեր ուսուցման մասին...

- այնքան ավելի արդյունավետ կերպով կարող ենք առաջնորդել և ուղղորդել մեր ուսուցումը.
- այնքան ավելի ճշգրիտ կարող ենք հատկորոշել մեր ուսումնական կարիքները.
- այնքան ավելի միտումնավոր ենք ընտրում մեր նախընտրած ուսուցման ուղիները. և
- այնքան ավելի շատ ենք վերահսկում մեր ուսուցման գործընթացը:

Ընտաբար, սեփական ուսուցմանը հաղորդակից լինելը Youthpass գործընթացի առաջնային խնդիրներից մեկն է: Ընտկյալ հարցերը կարող են ուղղորդել ձեզ և երիտասարդներին այս ուսուցումը բացահայտելու գործընթացում.

**ՄՏՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐ.**

- Ինչպե՞ս եմ նախընտրում սովորել:
- Ո՞րն է իմ սովորելու ոճը:
- Ի՞նչ դեր են կատարում զգացմունքներն իմ սովորելու հարցում:
- Ինչպե՞ս կարող եմ ինքս ինձ մոտիվացնել սովորել:
- Ինչպե՞ս եմ խանգարում իմ ուսուցմանը:
- Ինչպե՞ս եմ վարվում խոչընդոտների և մարտահրավերների հետ:
- Ինչպե՞ս եմ տեսնում այլ մարդկանց դերն իմ ուսուցման գործընթացում:
- Ինչպիսի՞ ուսումնական միջավայր, մեթոդներ և գործիքներ են ինձ օգնում սովորել:
- Ինչպե՞ս կարող եմ ընդլայնել իմ ուսուցման եղանակները:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՄՏՈՐԵԼՈՒ ՄԻ ՔԱՆԻ ՄԵԹՈԴ

Կան բազմաթիվ եղանակներ և մեթոդներ՝ երիտասարդներին իրենց ուսուցման մասին ավելի իրազեկ դարձնելու համար: Մենք ներկայացնում ենք մի քանիսն այստեղ, բայց դուք կարող եք գտնել ավելին այս ձեռնարկի Գործիքակազմի բաժնում (էջ 52):

Օրինակ՝ երիտասարդական փոխանակման կամ վերապատրաստման դասընթացի ժամանակ դուք կարող եք ձեր մասնակիցներին դժվար ուսումնական իրավիճակի մեջ դնել (օրինակ՝ սովորել, թե ինչպես ձեռնածություն անել, կամ ինչպես պատրաստել օրիգամի նինջա աստղ կամ ինչպես պարել սալսա և այլն), ինչին կհաջողի մտորումը, որն իր հերթին կկենտրոնանա «ես որպես սովորող» գաղափարի ուսումնասիրման վրա՝ օգտագործելով նախորդ էջի որոշ հարցեր: ԵԿԾ ծրագրում դուք կարող եք օգտագործել կամավորի իրական կյանքից իրավիճակ՝ նույն հարցերի շուրջ քննարկել համար:

→ **Ուսումնասիրեք 10-րդ գործիքը՝ «Սովորում ենք ձեռնածություն անել» (էջ 88):**

Ուսուցման ոճերի հարցաթերթիկները նույնպես խթանում են ինքնավերլուծությանը: Դրանք կարող են օգտակար

տեղեկատվություն տալ՝ մասնակիցին / կամավորին օգնելու վերանայել իր ինքնընկալումը և հասկանալ՝ ինչպիսի ուսուցման ձևեր է նախընտրում, իսկ որոնք՝ դեռ զարգացած չեն: Սա կարող է հիմք դառնալ ուսուցման հետագա այլանավորման համար:

Այնուամենայնիվ, զգուշ եղեք և մի գերազնահատեք հարցաթերթիկների արդյունքները: Նրանք միայն ցույց են տալիս, թե որտեղ են հնարավոր զարգացման հնարավորությունները: Ուսուցման ոճերը ֆիքսված կամ ծնունդով տրված չեն, ինչպես հորոսկոպի նշանները: Ավելին, վերջին քննադատություններից մի քանիսում նշում է, որ «մարդկանց ուսուցման ոճերի վերաբերյալ ենթադրությունները կարող են ապակողմնորոշիչ լինել: Ուսումնառության տարբերությունները գոյություն ունեն ոչ թե մարդկանց, այլ իրավիճակների միջև. դրանք կապված են սովորողի և նրա ներկայիս հոգեվիճակի ու տրամադրության, նրա սպառվածության մակարդակի, ժամանակի, բովանդակության, ուսուցանողի, դերակատարների միջև փոխհարաբերությունների ու վստահության մակարդակի, միջավայրի, ասված ու չասված ակնկալիքների և այլնի հետ» (ԵՁԱԿԻ Ցանց (UNIQUE Network), 2010թ.):

Մեկ այլ տարբերակ է ուսումնասիրել երիտասարդների ուսումնական պատմությունը: Մասնակիցներին բաժանեք զույգերի և տրամադրեք նրանց մի շարք ուղղորդող հարցեր, որպեսզի նրանք կարողանան միմյանց հետ ուսումնական հարցազրույցներ անցկացնել: Երիտասարդները կարող են կիսվել անձնական ուսուցման պատմություններով և միասին ուսումնասիրել իրենց նախասիրություններն ու ուժեղ կողմերը:

→ **Լրացուցիչ բացատրություն կարելի է գտնել 7-րդ մեթոդում՝ Ուսուցման վերաբերյալ հարցազրույց (էջ 76):**

Որոշ մասնակիցների համար կարող է օգտակար լինել իրենց փորձն ուսումնական որոշակի տեսության հետ կապելը (օրինակ՝ փորձառական ուսումնական շրջան), որը կարող է հիմք ստեղծել ուսուցման գործընթացի վերաբերյալ մտորման համար: Երբ դրանք լավ ներկայացվում են և կապվում իրական փորձառությունների հետ, այս տեսություններն կարող են սովորողին տալ հավելյալ վստահություն և բարձրացնել նրա մասնակցության զգացումը ուսուցման գործընթացում:

Վերջապես, դուք կարող եք ակտիվացնել ինքնավերլուծությունը օգտագործելով մի շարք պատկերներ (օրինակ՝ կտրված ամսագրերից կամ ինտերնետից տպված): Ինդրեք երիտասարդներին ընտրել այն պատկերը, որը լավագույնս ներկայացնում է նրանց որպես սովորողներ և կիսել այն այլ մասնակիցների կամ մենթորի հետ: Միասին ուսումնասիրեք, թե ինչ է տվյալ պատկերը պատմում ձեզ անձի որակների և ուժեղ կողմերի մասին ու ինչպես դրանք կարող են օգտագործվել ուսուցման գործընթացում ծրագրի ընթացքում:

**ԱՌՆՉԱՐՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ:**

- 1 Ուսուցման գործարան (էջ 56)
- 4 Շոն գառնուկը՝ Սահմաններից դուրս (էջ 64)
- 7 Ուսուցման վերաբերյալ հարցազրույց (էջ 76)
- 8 Ուսուցման ծով (էջ 82)
- 10 Սովորում ենք ձեռնածություն անել (էջ 88)
- 13 Կոլաժավորեք ձեր ուսուցումը (էջ 94)
- 14 Ֆոտոնովել (էջ 96)
- 18 Գնահատող հարցադրումը որպես ուսուցման նկատմամբ հետաքրքրություն (էջ 112)
- 20 Ինքնուրույն ուսուցման ինքնազնահատում (էջ 118)

## ՌԻՍԻՈՒՑՄԱՆ ՌԻՂՂՐԴՈՒՄ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Պլանավորել<sup>1</sup>, թե՞ չպլանավորել. սա է հարցը:

Ուսուցումը կարող է լինել պրոակտիվ կամ ռեակտիվ, ինքնուրույն կամ անսպասելի: Այնուամենայնիվ, երբ մտածում ենք «սովորել՝ ինչպես սովորել» կարողության մասին, այն և՛ ակտիվ է, և՛ պասիվ: Սովորողներն ակտիվորեն օգտագործում են ուսուցման հնարավորությունները, և միևնույն ժամանակ նրանք բաց են սովորելու կյանքի իրադարձություններից, երբ դրանք տեղի են ունենում: Փաստորեն, սա հատկապես ճիշտ է երիտասարդական ոլորտում ոչ ֆորմալ կրթության համատեքստում: Թեմայի ուսումնասիրությունից բացի, սովորելու բազմաթիվ հնարավորություններ ստեղծվում են խմբի դինամիկայի և ուսումնական միջավայրի միջոցով: Իսկապես, արտասովոր չէ, որ երիտասարդները գործընթացին միանում են որոշ ուսումնական նպատակներով և ակնկալիքներով, այնուհետև ընթացքում փոխում դրանք՝ բացահայտելով ուսուցման այլ հնարավորություններ և նոր կարիքներ:

Տանկացած գործընթացի սկզբում՝ հետաքրքրությունները, նախասիրությունները և ուժեղ կողմերը ուսումնասիրելուց հետո, անհրաժեշտ է մտածել մասնակիցների ուսումնական հետաքրքրությունների և կարիքների մասին: Մասնակիցների համար պետք է պարզ լինի, որ այս գործընթացի պատասխանատուն նրանք են: Ուշադրության կենտրոնում պետք է լինեն երիտասարդների ուսուցման կարիքները, այլ ոչ թե երիտասարդական աշխատողների, դասընթացավարների կամ կազմակերպության կարիքները:

Սա հնարավորություն է մարտահրավեր նետելու ուսումնառության և կրթության նկատմամբ պասիվ մոտեցումներին: Հարցն այն է, թե «ի՞նչ պետք է սովորեն

մասնակիցները և ինչպես կարող են ուսուցանողներն աջակցել նրանց այդ հարցում, այլ ոչ այն, թե «ի՞նչ կարող են և՛ մասնակիցները, և՛ ուսուցանողները սովորել տվյալ գործընթացից»: Սա ևս մեկ կարևոր ու զորացնող քայլ է՝ սեփական ուսումնական գործընթացի ամբողջ պատասխանատվությունը վերցնելու համար:

Ուսուցման ուղղությունը սահմանելն ապահովում է անհրաժեշտ կենտրոնացում, որը խանդավառության և ոգևորվածության հետ միասին կապահովի ուսումնական գործընթացի անհրաժեշտ շարժիչ ուժը: Այնուամենայնիվ, չափազանց կարևոր է, որ ուսուցման ուղղությունը հիմնվի ուժեղ կողմերի վրա, և ոչ միայն կենտրոնանա թերությունների ու թույլ կողմերի վրա:

Ուսման պլանի մշակումը երիտասարդի հետ ևս մի կարևոր հարց է, որը պետք է հաշվի առնել: Այս հարցը կարող է ավելի կարևոր լինել երկարաժամկետ նախաձեռնության դեպքում (օրինակ՝ ԵԿԾ ծրագիր կամ երկարաժամկետ վերապատրաստման դասընթացներ): Որպես այլընտրանք, դուք կարող եք ընդլայնել ուսումնական պլանն ավելի լայն (ցկյանս) հեռանկարի՝ ի լրումն բուն նախաձեռնության վրա ծախսված ժամանակի: Տեղյակ եղեք, որ որոշ երիտասարդներ առում են պլանավորումը և ուսուցման այս մոտեցումը համարում են սահմանափակող ու արհեստական՝ պնդելով, որ «ծրագրի կառավարում» մտածելակերպը չի կարող կիրառվել ուսման նկատմամբ: Ուրիշ մարդիկ շատ հարմար և դյուրին են համարում ուսուցման նպատակները սահմանել և իրենց ուսուցումը պլանավորելու համար աղյուսակներ օգտագործել: Ինչո՞ւ է դա այդպես:

Ըետագրությունները ցույց են տալիս, որ կան անհատական տարբերություններ այն հարցում, թե ինչպես են մարդիկ պլանավորում իրենց զարգացումը (ՄակՔի, Բոյացիս, Ջոնսթոն, 2008թ.): Այս հետազոտության համաձայն՝ գոյություն ունի պլանավորման չորս հիմնական ոճ՝

- Նպատակաուղղված պլանավորողները կենտրոնանում են կոնկրետ նպատակների և արդյունքների հասնելու վրա: Դրանք միշտ չէ, որ կապված են երազանքին հետևելու կամ առաքելություն իրականացնելու հետ:
- Ուղղությունը կողմնորոշած պլանավորողները պատկերացում ունեն այն ընդհանուր ճանապարհի մասին, որը ցանկանում են անցնել, բայց չեն մանրամասնում: Նրանք ուժեղ զգացողություն ունեն նպատակի և առաքելության նկատմամբ և պատրաստ են ճյուղ լինել կոնկրետ նպատակների հարցում:
- Գործողություններին միտված պլանավորողները նախընտրում են չմտածել հեռավոր ապագայի մասին: Նրանք նախընտրում են հիմնականում ապրել ակնթարթով և պլանավորմանը մոտենալ որպես կոնկրետ առաջադրանքների կամ գործողությունների շարքի ընդլայնում:
- Գոյաբանական պլանավորողները իրականում «պլանավորողներ չեն»: Նրանք նախընտրում են չմտածել ապագայի մասին որևէ ձևով և ապրել ներկայում: Նրանց ուշադրությունը, կարծես, ավելի շատ ուղղված է ինքնության վրա, քան այն հարցին, թե նրանք ով կդառնան կամ ինչ կկատարեն:

Պլանավորման ոճերի բազմազանության մասին իրազեկվածության բարձրացումը պետք է նախապատրաստի երիտասարդական աշխատողներին տրամադրել տարբեր գործիքներ և հնարավորություններ՝ մասնակիցներին իրենց ուսուցումը պլանավորելու հարցում օգնելիս: Ի վերջո, հենց երիտասարդը պետք է որոշի, թե պլանավորման որ մոտեցումն է ցանկանում օգտագործել իր ուսումնական գործընթացում:

Տարբեր մեթոդներն ու գործիքները հնարավորություն են տալիս երիտասարդներին տարբեր ձևերով արտահայտել իրենց

ուսումնական պլանները: Որոշ մասնակիցներ կարող են այնքան էլ լավ գրի չառնել բառեր թղթի վրա, բայց նրանք կարող են ավելի հմուտ լինել իրենց ուսումնական պլաններն ավելի տեսողական, մուլտիմեդիական կամ թվային ձևով նշակելու հարցում: Ուսուցման ծրագիրը պետք է հետաքրքիր և գրավիչ լինի իրենց համար: Այն պետք է լինի ուսուցման օրակարգ՝ լի հիացմունքով և բացահայտման բերկրանքով՝ պարտադիր անելիքների ցանկի փոխարեն: Մոտեցումներից մեկն է առաջարկել ուսուցման տարբերակներ, որոնք համապատասխանում են երիտասարդների ուսուցման նախապատվություններին: Սա կխթանի պլանի ավելի դյուրին իրականացումը և ավելի շատ զվարճանքն ուսումնական գործընթացում: Այնուամենայնիվ, որոշ մասնակիցներ կարող են միտումնավոր ընտրել ուսուցման առավել քիչ նախընտրելի ձև՝ որպես իրենք իրենց մարտահրավեր նետելու միջոց: Սա նաև շատ արժեքավոր ինքնագարգացման վարժություն է ավելի ամբողջական և արդյունավետ սովորող դառնալու համար:

Վերջապես, նպատակների, ուղղությունների և ուսումնական պլանների մասին մտածելիս կարևոր է նշել, որ դրանք երբևէ չեն գրվում քարի վրա: Հաճախ, դրանք ընթացքում փոխվում են՝ պայմանավորված ինքնագիտակցման բարձրացմամբ և ուսուցման նոր կարիքներով, որոնք առաջանում են ուսումնական գործընթացի ընթացքում:

**ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ**

- ③ Ի՞նչ է Youthpass-ը (էջ 60)
- ⑨ Ուսումնական օրագիր (էջ 84)
- ⑯ Բարդ մարտահրավերների վերաբերյալ հարցազրույց (էջ 102)
- ⑰ Սովորողների մանդալա (էջ 106)



## ԱԶԱԿՑԵԼ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻՆ

Ինքներդ ձեզ իրապես տեսնելու համար հարկավոր է մի բան, որը հայելելու նման կարտացոլի ձեր իսկ էությունը:

«Ինքնուողորդված ուսուցումը» կարող է սխալմամբ ընկալվել որպես մի բան, որը դուք անում եք ինքնուրույն՝ ինքնագարգացման միայնակ ճամփորդության ընթացքում: Սա կարող է որոշ չափով ճիշտ լինել ու պահանջել անհատական ժամանակ և աշխատանք, բայց հիմնականում մենք այլ մարդկանց կարիք ունենք, որոնք կօգնեն մեզ մեր ուսումնական գործընթացում: Այն լավ է, եթե մեր բոլոր ուսուցման կարիքները որոշվել են, ուսուցման ուղղությունները և ուսումնական պլանները

մշակվել են, բայց դրանք գործնականում կիրառելու համար մեզ պետք է, որ ուրիշները մեզ ուղեկցեն: Սովորելը տեղի է ունենում վստահելի հարաբերությունների միջոցով, ապահով տարածքում, որտեղ մենք կարող ենք փորձարկումներ կատարել և խնդրել ու ստանալ անկեղծ կարծիք: Ըավանաբար, սոցիալ-կոնստրուկտիվիստները ճիշտ էին՝ ասելիս, որ այն ամենը, ինչ մենք գիտենք, ձևավորվել են ակտիվորեն՝ փորձի և այլ մարդկանց հետ սոցիալական փոխազդեցության միջոցով:

Բացի մեզանից՝ երիտասարդական աշխատողներից /դասընթացավարներից/ մենթորներից, երիտասարդներին պետք է որ Youthpass գործընթացին միանան իրենց հասակակիցները: Մյուս երիտասարդները կարող են հանդես գալ որպես հայելի, կողքից հայացք՝ ինքնաընկալումը և ինքնագնահատումն ապահովելու համար: Որպեսզի դա տեղի ունենա, երիտասարդներին անհրաժեշտ է ուսումնական միջավայր, որը կասկածների և հարցերի տեղ է տալիս, որտեղ նրանք կարող են աջակցություն ստանալ (և աջակցել ուրիշներին) և որտեղ նրանք կարող են քննարկել ուսուցման գործընթացի վերաբերյալ: Այս գործընթացում երիտասարդները զարգացնում են մի շարք սոցիալական հմտություններ, ինչպիսիք են կարեկցանքը, համագործակցությունը, ակտիվ լսելը, ինքնարտահայտումը, ինքնաբացահայտումը և այլն: Սա նաև կապեր ստեղծել և «սոցիալական կապիտալը» զարգացնել սովորելու միջոց է: Այս գործընթացում առանցքային տարրերից մեկը փոխադարձությունն է՝ այդ կապերի օգտագործումը փոխադարձ ուսուցման և օգուտի համար:

Կախված միջոցառման տեսակից, ուսուցման աջակցությունը կարող է ունենալ տարբեր ձևաչափեր՝ երիտասարդական փոխանակման և վերապատրաստման դասընթացների ժամանակ դուք կարող եք ստեղծել սովորող ընկերների համակարգ, ուսումնական եղյակներ, մտորման խմբեր և այլն: ԵԿԾ ծրագրում դուք կարող եք դիտարկել կամավորների միջև ուսուցման ցանց ստեղծելու հնարավորությունը, կամ օգտագործել հյուրընկալող կազմակերպության մարդկանց՝ որպես խոսափող ուսումնական գործընթացի ընթացքում:

Դուք կարող եք մտածել նույնիսկ սովորող բլոգեր դառնալու մասին՝ գրելով կարճ (և հետաքրքիր) ուսումնական պատմություններ ու հրավիրելով ավելի լայն համայնքին մեկնաբանելու և արձագանքելու:

## ՄՏՈՐԵԼ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

### Որովհետև միայն անելը բավարար չէ

Հաճախ ասում են, որ մենք շատ բան ենք սովորում փորձից: Սովորում ենք անելով: Այլ կերպ ասած՝ որքան շատ ենք անում, այնքան շատ ենք սովորում: Բայց արդյո՞ք դա իսկապես այդպես է: Եթե այո, ապա դա կնշանակի, որ մեր նախաձեռնություններում կարևոր կլինի մասնակից երիտասարդների համար հնարավորինս շատ փորձառություններ ներառելը:

Բայց ինչ-որ բաներ անելն անպայման չէ, որ հանգեցնի ուսուցման: Հավասարապես կարևոր է մտածել այն մասին, թե ինչ ենք մենք անում և վերհիշել, թե ինչպես ընթացան իրադարձությունները: Մենք պետք է վերլուծենք տեղի ունեցածը, խոսենք ուրիշների հետ փորձի մասին, որպեսզի իսկապես ինչ-որ բան սովորենք:

Մտորումը, հավանաբար, ուսուցման ամենակարևոր տարրն է: Մտորումը մեզ հնարավորություն է տալիս գնահատելու փորձը և որոշելու, թե ապագայում ինչը կարող ենք անել ավելի լավ կամ այլ կերպ:

Մտորման միջոցով սովորելը շատ հեշտ է մարդկանց համար: Հենց դա է մեզ տարբերում այս մոլորակի մյուս էակներից: Սովորական կոկորդիլոսի կյանքը վերջին 400 տարում առանձնապես չի փոխվել: Մարդիկ, մյուս կողմից, բոլորովին այլ կյանք են վարում: Մենք փոխվելու, զարգանալու բնական կարիք ունենք: Մենք մտորում և կատարելագործվում ենք:

Միևնույն ժամանակ, այն կրթական համակարգը, որն ուղեկցում է մեր ուսուցումը, և այն երիտասարդների ուսուցումը, ում հետ մենք աշխատում ենք, իրականում մեզ չի խրախուսում մտածել մեր ուսուցման մասին: Հիմնականում ուսուցիչներն են մեր փոխարեն որոշում՝ մենք ինչ-որ բան սովորե՞լ ենք, թե՞ ոչ: Այդ պատճառով մեր սեփական մտորման կարիքը չկա: Մտածելու մեր բնական կարողությունը չի օգտագործվել մեր ուսուցման համար:

Youthpass գործընթացում մենք ցանկանում ենք, որ երիտասարդներն ինքնուրույն որոշումներ կայացնեն իրենց ուսուցման վերաբերյալ և իրազեկ լինեն դրա մասին: Մենք պետք է օգնենք երիտասարդներին վերասկսիվացնել իրենց մտածելու կարողությունը: Մենք կարող ենք դա անել՝ մեր ծրագրերում՝ տարածք ստեղծելով ու նրանց տրամադրելով գործիքներ և մեթոդներ, որոնք կօգնեն նրանց մտածել:

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄՏՈՐՈՒԿՄԸ ՈՐՈՇ ՉԱՓՈՎ ՄԻԱՅՆԱԿ ԲԱՆ Է

Մտորելու ձևերից մեկն առանձին նստելն ու կատարվածի մասին մտածելն է: Կարող եք գրիչ վերցնել և գրել ձեր մտքերը: Շատ երիտասարդների համար սա կարող է դժվար առաջադրանք լինել: Բայց շատ երիտասարդներ սիրում են ամեն օր գրառումներ կատարել իրենց օրագրերում կամ իրենց բլոգներում: Դուք կգտնեք բավականին շատ կամավորների, ովքեր իրենց անձնական օրագրում գրում են կամավորականության հետ կապված իրենց բոլոր ուրախ, դժվար, հուզիչ և տխուր փորձառությունները կամ կիսվում մտածելու իրենց բլոգում: Նաև վերապատրաստման դասընթացների ժամանակ մասնակիցներից ոմանց շատ դուր է գալիս, երբ նրանց տրվում է ամենօրյա մատյան՝ օրվա վերջում իրենց ուսումնական փորձառությունների մասին մտածելու համար:

→ 9-րդ գործիքի նկարագրություն, Ուսումնական մատյան (էջ 84):

Օրագրեր կամ ամենօրյա մատյաններ բաժանելիս՝ մտորման գործընթացին օգնելու համար որոշ ուղղորդող հարցեր առաջարկելը կարող է օգտակար լինել: Նման օրագրերի ստեղծագործական օգտագործումը խրախուսելը կարող է օգնել նրանց, ովքեր հարմարավետ չեն զգում նախադասություններ և պատմություններ գրելիս: Նկարները, պատկերները և պարզապես առանձին բառերը նույնպես կարող են շատ բան արտահայտել: Ուսումնական բլոգը հնարավորություն է տալիս օգտագործել երաժշտություն, տեսահոլովակներ, ձայներ և այլն՝ մտքերով և զգացմունքներով կիսվելու համար:

Ինչպես արդեն նշվել է, շատ երիտասարդներ կհամարեն, որ ամենօրյա գրավոր վարժությունն իրենց բանը չէ: Նրանց համար դա ավելի գրավիչ դարձնելը կարող է հետաքրքիր մարտահրավեր լինել և օգնել նրանց հաղթահարել այս արգելքը:

→ Եթե ձեր մասնակիցները չեն սիրում գրել, կարող եք օգտագործել առավել գրավիչ մտորման գործիքներ, որոնք նկարագրված են գործիքակազմում (էջ 52):

## ՔՆՆԱՐԿԵԼ ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՇԵՏ

Ուրիշ մարդիկ կարող են շատ օգնել ձեր ուսուցման մասին մտորելիս: Փորձի փոխանակում ուրիշների հետ նշանակում է՝

- բառերով արտահայտել այդ փորձառությունները.
- համեմատել ձեր փորձառություններն ուրիշների փորձառությունների հետ.

- որ այլ մասնակիցները կարող են օգնել՝ տալով հարցեր և անելով մեկնաբանություններ, ինչը հնարավորություն է տալիս ավելի լայն պատկերացում կազմել փորձառությունների մասին:

Youthpass-ի գործընթացում «սովորել՝ ինչպես սովորել» տարրի հետ կապված դիսկն այն է, որ մենք չափազանց շատ ենք կենտրոնանում երիտասարդների անհատական ուսուցման վրա: Դրա արդյունքում սովորելը դառնում է անհատական աշխատանք: Իհարկե, ամեն մարդ, ի վերջո, ունենում է իր անհատական ուսուցման արդյունքները, բայց ուսուցման գործընթացի համար այլ մարդիկ կարևոր են: Երիտասարդներն օգուտ են քաղում, երբ ուրիշներն աջակցում, մոտիվացնում են նրանց, նմանեցնում են նրանց իրենց հետ մարտահրավեր նետում և կրկնօրինակում նրանց: Երբ երիտասարդները միայն իրենց են ապավինում ուսման հարցում, նրանց տեսադաշտը սահմանափակ է լինում:

Բարեբախտաբար, երիտասարդները ծանոթ են միմյանց հետ և միմյանցից սովորելուն: Ընտանոցները ցույց են տալիս, որ հասակակիցների ազդեցությունը երիտասարդների զարգացման վրա ավելի մեծ է, քան մեծահասակներիինը: Սա, իհարկե, չի նշանակում, որ երիտասարդական աշխատողների, մենթորների և դասընթացավարների կարիքն այլևս չկա: Հասակակիցների ազդեցության ամբողջական ներուժը ուսուցման մեջ կիրառելու համար կարևոր է ապահովել որոշ պայմաններ և նպաստել դրանց ձևավորմանը:

### ՉԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՇԵՏ ՄՏՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

«Իմբային քննարկումներ» տարիներ շարունակ օգտագործվել են վերապատրաստման դասընթացների և երիտասարդական փոխանակումների ժամանակ: Մասնակիցները յուրաքանչյուր օրվա վերջում հանդիպում են հինգից յոթ հոգուց բաղկացած խմբերով՝ կիսվելու իրենց փորձով: Հաճախ դասընթացավարը կամ երիտասարդական աշխատողը ղեկավարում է այս գործընթացը: Իմբային քննարկումները կարող են նաև բաղկացած լինել երկու կամ երեք հոգանոց հասակակիցներից: Նրանք պարբերաբար հանդիպում են երիտասարդական փոխանակման կամ վերապատրաստման դասընթացի ընթացքում՝ իրենց փորձառությունների մասին մտորելու համար: Հաճախ սերտ հարաբերություններ են զարգանում, որոնց դեպքում նրանք նաև կիսվում են, օրինակ, իրենց օրագրային գրառումներով:

Վերապատրաստման դասընթացների և երիտասարդական փոխանակումների ժամանակ պարբերական մտորումների համար խմբեր կազմելը համեմատաբար հեշտ է: Կամավորի համար ԵԿԾ ծրագրերի ընթացքում ամենօրյա մտորումների խումբ ձևավորելն ավելի բարդ է և, հավանաբար, կարող է ավելի հեռան տանել: Բայց կամավորի համար կարևոր է հնարավորություն ունենալ մտորելու իր փորձառությունների մասին և սովորել այլ մարդկանց հետ: Եթե կազմակերպությունը միաժամանակ հյուրընկալում է այլ կամավորների, նրանք կարող են միասին քննարկել: Անհատ կամավորները կարող են կիսվել և մտորել կազմակերպության այլ երիտասարդների կամ տարածքի այլ կամավորների հետ պարբերական հանդիպումների ժամանակ: Համացանցը կարող է նույնպես օգտագործվել կամավորների միջև մտքերի փոխանակում ապահովելու համար:

Միասին գրելը կամ նստելը և խոսելն ուսուցման մասին քննարկելը միակ ձևերը չեն: Ավելի ստեղծագործական գործիքներից են՝ ամենօրյա գրառումները, ֆոտոգրվուցը կամ ֆիլմի նկարահանումը, որը երիտասարդների համար ներուժ է ստեղծում՝ նախագծում իրենց փորձառությունները վերլուծելու, գնահատելու և դրանց մասին մտածելու համար: Ձեկույցներ գրելը, նկարներ ընտրելը, ֆիլմեր մոտտաածելը և խմբագրելը կամ հարցազրույցներ անցկացնելը՝ այն մեթոդներն են, որոնք աջակցում են մտածելուն, ինչպես և վերջնական արտադրանքի ընթերցումը կամ դիտումը:

**ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ.**

- ① Ուսուցման գործարան (էջ 56)
- ⑥ Նավապետի մատյան (էջ 72)
- ⑦ Ուսուցման վերաբերյալ հարցազրույց (էջ 76)
- ⑧ Ուսուցման ծով (էջ 82)
- ⑨ Ուսումնական մատյան (էջ 84)
- ⑪ Իմ խորհրդանիշը, իմ ուսուցումը (էջ 90)
- ⑫ Ի՞նչ եք սովորել այսօր (էջ 92)
- ⑭ Ֆոտոնովել (էջ 96)
- ⑮ Ֆրանկենշտեյնի մտորում ուսուցման վերաբերյալ (էջ 100)
- ⑰ Սովորողների մանդալա (էջ 106)
- ⑲ Որտե՞ղ եք ուսուցման գործընթացում (էջ 116)
- ⑳ Ինքնուրույն ուսուցման ինքնագնահատում (էջ 118)

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄ

Ես շատ բան սովորեցի, բայց ի՞նչ

Դուք ինչ-որ բաներ եք անում, զգում, մտածում, խոսում ուրիշների հետ, կարծում, որ այժմ հասկանում եք, լսում նոր տեսակետներ, գիրք կարդում, նոր հարցեր գտնում, ավելի ապահով զգում, լսում հետաքրքիր զեկույց, ամեն ինչ ավելի լավ անում, նոր հեռանկարներ ձեռք բերում, թվում է, թե սովորում եք: Համենայն դեպս, այդպես է զգացվում: Եվ հիմնականում դա լավ զգացողություն է:

Այնուամենայնիվ, երիտասարդները կարող են իրենք իրենց հարցնել, թե արդյոք իրենց գործը լավ են արել, արդյոք բավական բան են սովորել, արդյոք իրականում ճիշտ բան են սովորել: Ֆորմալ կրթության դեպքում նրանք ստիպված չեն տալ այս հարցերը, քանի որ պատասխանները կտան ուրիշները: Դպրոցում շատ պարզ է, թե ինչ է հարկավոր սովորել և որքան լավ: Գնահատականները կվկայեն այդ մասին:

Ոչ ֆորմալ կրթության դեպքում ամեն ինչ մի փոքր այլ է: Երբ երիտասարդները գնում են իրենց մենթորի, երիտասարդական աշխատողի, քուլչի կամ

դասընթացավարի մոտ՝ հարցնելու, թե արդյոք նրանք իրենց գործը լավ են արել և բավական բան սովորել, շատ հավանական է, որ ի պատասխան նրանք լսեն հետևյալ հարցը՝ «Իսկ դուք ի՞նչ եք կարծում»:

Ոչ ֆորմալ կրթության դեպքում մենք հստակ չգիտենք, թե ինչ պետք է սովորել և երբ է դա համարվում բավարար: Ֆասիլիտատորներն աջակցում են ուսուցմանը, առաջարկում գաղափարներ, մոտիվացնում սովորողներին, երբ դա անհրաժեշտ է, բայց, ի վերջո, հենց սովորողի պարտականությունն է սովորել այն, ինչ, իր կարծիքով, իրեն հարկավոր է:

Եվ հենց երիտասարդն է որոշում, թե ինչ է սովորել: Եվ եկեք անկեղծ լինենք. ով կարող է դա անել ավելի լավ, քան սովորողը: Սա չի նշանակում, որ դա հեշտ գործ է: Ստորև դուք կգտնեք որոշ խորհուրդներ և առաջարկություններ այն մասին, թե ինչպես բացահայտել և գրանցել սովորածը: Բայց եկեք սկզբից դիտարկենք «ինչու» հարցը:

### ԻՆՉՈՒ՞ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՎ ԳՐԱՆՑԵԼ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ:

Ուսուցումը բացահայտելու և գրանցելու երկու լավ պատճառ կա՝

- Երիտասարդներն ավելի գիտակից են դառնում իրենց ուսուցման վերաբերյալ, և դա նրանց հնարավորություն է տալիս պլանավորել հետագա ուսուցումը:
- Այն օգնում է մասնակիցներին ուսուցման արդյունքները փոխանցել ուրիշներին, օրինակ՝ հասակակից-սովորողներին, գործատուներին, գործընկերներին կամ կրթական հաստատություններին:

## ԻՆՉՊԵ՛Ս ԻՄԱՆԱՄ, ՈՐ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ ԵՄ ՍՈՎՈՐԵԼ:

Սկսենք նրանից, թե ինչ է սովորելը: Մենք օգտագործում ենք «սովորել» բառը շատ առումներով. «Ես շատ բան սովորեցի իմ մասին», «Ես պետք է անգիր սովորեի բոլոր բառերը», «Ես սովորեցի հեծանիվ քշել ութ տարեկանում», «Ես սովորեցի լինել ավելի կարեկից»: Այս բոլոր արտահայտությունները ներառում են «սովորել» բառը, բայց վերաբերում են շատ տարբեր գործընթացների:

Կան դեպքեր, երբ իսկապես ավելի հեշտ է իմանալ, որ ինչ-որ բան եք սովորել: Երբ որոշ ժամանակ ուսումնասիրում եք PowerPoint ծրագիրը, հասնում եք մի կետի, որտեղ կարող եք ասել՝ «Այո, ես կարող եմ դա անել: Ես սովորել եմ, գիտեմ բոլոր գործառնությունները և գիտեմ՝ ինչպես օգտագործել դրանք»: (Չնայած, որ կարող եք գտնել բազմաթիվ մարդկանց, ովքեր գիտեն այս ամենը, բայց, այնուամենայնիվ, շատ վատ PowerPoint ներկայացումներ են ստեղծում):

Բայց ի՞նչ կարելի է ասել այնպիսի կարողության մասին, ինչպիսին է «մարդկանց խմբում արտահայտվել կարողանալը»: Ե՞րբ եք իմանում, որ սովորել եք դա: Կամ արդյոք դա ինչ-որ բան է, որի մասին երբևէ կարող եք ասել, որ «սովորել եք» և նշել որպես արված:

Այնուամենայնիվ, դուք կարող եք որոշել «խմբում արտահայտվելու» հմտության տարրերը: Եթե դուք կարող եք՝

- գտնել մեթոդներ/գործիքներ, որոնք կարող են օգնել ձեզ ավելի ապահով զգալ խմբում
- ավելի ապահով զգալ խմբում ձեր դերի հետ կապված
- ավելին իմանալ այն մասին, թե ինչպես ձևավավորել խոսքը և արտահայտել միտքը ասելիքը
- չնյարդայնանալ, եթե ինչ-որ մեկն ընդհատի ձեր խոսքը
- ավելի ապահով զգալ հարցերին պատասխանելիս
- և այլն:

Դա նշանակում է, որ դուք առաջընթաց եք զրանցել ձեր ուսուցման հարցում և կարող եք արտահայտել դա բառերով: Դուք հավանաբար կարող եք նաև որոշել հետագա քայլերն այս ոլորտում ավելի կոմպետենտ դառնալու համար:

Ինչ-որ բան սովորելը կարող է լինել հետևյալի մասին՝

- այժմ իմանալ, թե ինչպես դա անել
- հասկանալ դա (ավելի լավ)
- ավելի ապահով զգալ դա անելիս
- ինքնեղ ձեզ ավելի լավ հասկանալ այն հարցում, թե ինչու եք գործում որոշակի ձևով
- գտնել ձեզ համապատասխանող դեր
- ձեռք բերել թեմայի վերաբերյալ (տեսական) գիտելիքներ
- իմանալ, թե ինչ սովորել հաջորդիվ
- և այլն:

## «ԻՆՉՊԵՍ» ՉԱՐՑԸ

Մինչ այժմ մենք կենտրոնացել ենք ձեր սովորածի վրա: Բայց սա ուսուցման մասին իրազեկ լինելու միայն մի մասն է: Իհարկե, «ի՞նչ» հարցը կարևոր է: Բայց «ինչպե՞ս» հարցը կարող է նույնպես մեզ շատ օգնել ուսուցումը հասկանալու հարցում:

**Հետևյալ հարցերը կարող են օգնել ձեզ պարզել, թե ինչպես եք սովորում:**

- Արդյո՞ք սովորել եք հետևելով պլանին կամ կառուցվածքին: Արդյո՞ք դա օգնել է:
- Որո՞նք էին այն իրավիճակները, պահերը կամ հանգամանքները, որոնք օգնեցին ձեզ սովորել: Փորձեք դրանք մանրամասն նկարագրել. մենա՞կ էիք, թե՞ ուրիշների հետ, որտե՞ղ էիք, նստա՞ծ էիք, թե՞ ինչ-որ բան էիք անում, և այլն:
- Որո՞նք էին դժվար պահերը և ինչպե՞ս հաղթահարեցիք դրանք:
- Ո՞րն էր այլ մարդկանց դերը:
- Արդյո՞ք կա որևէ բան, որը կցանկանայիք փոխել ուսուցման նկատմամբ ձեր մոտեցումներում:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

Նախքան ուսուցումը գրանցելուն անցնելը, տեսնենք, թե որտեղ է պետք այն անել: Դա անելու համար կարող եք օգտագործել տարբեր գործիքներ: Դուք կարող եք երիտասարդներին տալ փորձված օրագիրը:



Օգտագործելով գրիչ և թուղթ: Շատ ծրագրերում մասնակիցներին բաժանվում են օրագրեր, որոնք հիմնականում ընդունվում են ուրախությամբ: Անձնական պատճառներով ուսուցումը գրանցելը կարող է հիանալի գործիք լինել նրանց համար, ովքեր սիրում են գրել և մոտիվացված են պարբերականորեն անել դա: Սա

օգնում է մարդկանց մտորել իրենց սովորածի մասին և հասկանալ այն:

→ Ավելին 9-րդ գործիքի մասին, Ուսուցման մատյան (էջ 84):

Որոշ մարդկանց դեպքում ծրագրի ղեկավարման փորձը օգնում է նրանց գրանցել իրենց ուսուցումը կառուցվածքային ձևով (ոմանք դա անվանում են ուսումնական պլան): Սկզբում դուք գրում եք ձեր ուսումնական նպատակները և պլանավորում եք թե ինչպես եք դրանց հասնելու (ու՞մ հետ, ինչպե՞ս, ե՞րբ): Դա կարող է արվել նույնիսկ Excel աղյուսակում:

Ընարավոր է նաև դարձնել այն պակաս անհատական և հրավիրել ուրիշներին միանալու ուսումնական գործընթացին: Սատախիսե միջանկի առավելություններ՝ դուք

բաց եք հետադարձ կապի համար և, միևնույն ժամանակ, ուրիշներին ներգրավելը կարող է ձեզ ավելի մոտիվացնել, քանի որ պարտավորված եք զգում գրել շարունակելը: Բլոգը լավ գործիք է դա անելու համար: Մասնակիցները կարող են դարձնել այն լիովին հրապարակային կամ սահմանափակել մի քանի մարդկանցով, ում ցանկանում են ներգրավել: Բլոգի առավելությունն այն է, որ դուք կարող եք օգտագործել այն ոչ միայն գրելու համար, այլև կարող եք վերբեռնել նկարներ, օգտագործել հղումներ կամ ձայնագրված տեսահոլովակներ:

Միգուցե երիտասարդներից ոմանք արդեն ունեն կամ կցանկանան ստեղծել հանրության համար հասանելի կայք: Դա կարող է հիանալի հարթակ լինել իրենց ուսումնական ձեռքբերումները գրանցելու համար:

### ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ:

- ① Ուսուցման գործարան (էջ 56)
- ② Youthpass օկտա-կարողություններ (էջ 58)
- ④ Շոն գառնուկը՝ Սահմաններից դուրս (էջ 64)
- ⑥ Նավապետի մատյան (էջ 72)
- ⑨ Ուսումնական օրագիր (էջ 84)
- ⑪ Իմ խորհրդանիշը, իմ ուսուցումը (էջ 90)
- ⑫ Ի՞նչ եք սովորել այսօր (էջ 92)
- ⑭ Ֆոտոնովել (էջ 96)
- ⑮ Ուսուցման «Ֆրանկենշտեյնի մեթոդ» (էջ 100)
- ⑰ Սովորողների մանդալա (էջ 106)

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ YOUTHPASS ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

Այժմ եկեք դա ցույց տանք աշխարհին

Պահը եկել է: Ծրագիրը մոտենում է ավարտին, և պետք է պատրաստվի Youthpass հավաստագիր: Youthpass հավաստագիրը բաղկացած է երեք մասից.

1). Առաջին մասը պարունակում է ընդհանուր տեղեկություններ նախագծի և մասնակցի մասին ու հաստատում մասնակցությունը:

2). Երկրորդ մասը նկարագրում է թե ինչ միջոցառում է իրականացվել:

3). Երրորդ մասը լրացնելը պարտադի չէ, սակայն այնտեղ հնարավոր է ներառել նախագծի յուրաքանչյուր գործողության վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ, և նախատեսված է հիմնականում, այն նախագծերի համար, որոնք պարունակում են մի քանի միջոցառումներ:

**Ավելի մանրամասն տեղեկություններ Youthpass հավաստագրի կառուցվածքի մասին կարելի է գտնել <https://www.youthpass.eu/en/about-youthpass/certificates-and-languages/> կայքում  
Հավաստագրերի ստեղծման վերաբերյալ քայլ առ քայլ ուղղորդման համար այցելեք <https://www.youthpass.eu/en/help/step-by-step/> կայքը**

Youthpass հավաստագրի երրորդ մասը ձեզ հնարավորություն է տալիս գրի առնելու երիտասարդների նախաձեռնության, երիտասարդական փոխանակման, ԵԿԾ ծրագրի կամ վերապատրաստման դասընթացի ուսումնական արդյունքները: Սա ճշմարտության պահն է: Մասնակիցներն առերեսվում են այն հարցին, թե իրականում ինչ են սովորել:

Youthpass հավաստագրի այս մասը գրելը կարող է բավականին դժվար լինել: Ուսուցումը տարբեր է լինում է լինում է տարբեր նախագծերում: Նմանապես, երիտասարդական աշխատողի, մենթորի, քուլչի կամ դասընթացավարի դերը նույնպես շատ տարբեր է լինում՝ կախված նախագծից: ԵԿԾ ծրագրում մենթորը կարող է օգնել կամավորներին նախապատրաստել

գնահատումը, և նրանք կարող են միասին աշխատել՝ ծրագրի վերջին շաբաթներին՝ Youthpass-ը վերջնական տեսքի բերելու համար: Նույնը վերաբերում է միջազգային երիտասարդական նախաձեռնություններին. քուլչը (առկայության դեպքում) կարող է օգնել մասնակիցներին իրենց Youthpass-ի հետ կապված: Այս անձնական աջակցությունն ավելի դժվար է հնգօրյա վերապատրաստման դասընթացի դեպքում, քանի որ դասընթացավարները հաճախ ժամանակ չեն ունենում օգնելու բոլոր մասնակիցներին: Երիտասարդական փոխանակումները քիչ թե շատ կենտրոնանում են ուսուցման նկարագրության վրա՝ կախված մասնակից/ երիտասարդական աշխատող հարաբերակցությունից և օրերի քանակից:

Ըարկ է ընդգծել հասակակիցների աջակցության կարևորությունը: Թեև ինքնագնահատումն այն է, ինչ որով ինքներդ եք անում, այնուամենայնիվ ուրիշների աջակցությունը շատ կարևոր է: Youthpass-ում ուրիշների հետ ձեր սովորածի մասին քննարկելը և այն գրի առնելը վերացնում է լարվածության մեծ մասը, որը կարող է առաջանալ, երբ պետք է գնահատեք ինքներդ ձեզ:

Այն դեպքում, երբ երիտասարդներին ինքնագնահատման վերջին փուլում օգնելու հնարավորություններ չկան կամ դրանք սահմանափակ են, անհրաժեշտ է նրանց տալ որոշ գաղափարներ և խորհուրդներ, թե ինչպես աշխատել դրա հետ: Մենք ձեզ կտանք մի քանի գաղափար այն մասին, թե ինչպես գրի առնել այն ինքնագնահատումը, որը կարողալու են ուրիշները: Բայց նույնիսկ եթե երիտասարդները ցանկանան ինքնագնահատում գրել միայն իրենց համար, հետևյալ խորհուրդները, այնուամենայնիվ, կարող են ստիպել նրանց մտորել:

- Youthpass-ի երրորդ մասը ձեզ հնարավորություն է տալիս դասակարգել լու ուսուցման արդյունքները մշտական ուսուցման ութ բանալի կարողությունների ներքո այն հավաստագրերի համար, որոնք տրվել են երտասարդների մասնակցությամբ միջոցառումների ընթացքում: Սա չի նշանակում, որ բոլոր ութ բանալի կարողությունները պետք է ձեռք բերվեն: Դժվար թե որևէ մեկը մի ծրագրի ընթացքում առաջընթաց գրանցի բոլոր ութ կարողությունների մասով (բացառությամբ ավելի երկար միջոցառումների տեսակների, օրինակ՝ երկարատև ԵԿԾ): Կարող է պատահել այնպես, որ հիմնական ուսուցման արդյունքները տեղավորվեն բանալի կարողություններից միայն երեքի ներքո: Դա բնական է, և դրանում որևէ սխալ բան չկա:

Վերջնական Youthpass-ում տեսանելի կլինեն միայն այդ երեք վերնագրերը: Մնացած հինգն ընդհանրապես չեն երևա:

- Բանալի կարողությունները նախատեսված չեն որպես նախագծում ուսուցումը գնահատելու գործիք: Բանալի կարողությունները Եվրոպական հանձնաժողովի կողմից մշակված շրջանակ են՝ նկարագրելու, թե ինչ կարողություններ պետք է ունենան եվրոպացիները՝ լիովին հաջողակ եվրոպական քաղաքացիներ լինելու համար: Ըավանաբար, չկա որևէ երիտասարդական նախագիծ, որն ընդգրկում է բոլոր կարողությունները և մասնակիցներին վերածում սուպեր եվրոպացիների: Youthpass-ի կողմից առաջարկվող բանալի կարողությունների կառուցվածքն օգտագործեք միայն ուսուցման արդյունքների հավաքման վերջում: Միայն դրանից հետո կարող եք սկսել դիտարկել, թե որ վերնագրերի ներքո դասակարգել այս տարբեր ուսուցման արդյունքները:

Ընարավոր է նաև չօգտագործել ութ բանալի կարողությունները: Փոխարենը կարող եք օգտագործել լրացուցիչ դաշտը, որը նախատեսված է «այլ հմտությունների» լրացման համար: Այս տարբերակը կարող է օգտագործվել այն արդյունքների դեպքում, որոնք չեն կարող դասակարգվել բանալի կարողություններից ոչ մեկի ներքո: Այն նաև ձեզ հնարավորություն է տալիս գրի առնելու մասնակցի ինքնագնահատումը ձեր ձևով՝ առանց բանալի կարողությունների կառուցվածքն օգտագործելու:

## ԳՐԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՉԱՄԱՐ

Youthpass-ը որպես կարողություններն ուրիշներին ցույց տալու գործիք օգտագործելիս՝ պետք է հաշվի առնել որոշ սկզբունքներ: Լավ միտք է մասնակիցներին հետևյալի մասին իրազեկելը՝

- Խուսափեք ժարգոնից. ոչ բոլորը գիտեն ԵՄ երիտասարդական ծրագիրը, դրա գործողությունները կամ օգտագործված տերմինները: Այդ իսկ պատճառով միջոցառումը հակիրճ բացատրվում է Youthpass-ի առաջին էջում:
- Փորձեք հստակ ներկայացնել, թե ինչ եք սովորել և ինչպես եք դա արել: Ձեր ուսուցումը կապակցեք կոնկրետ ապացույցների հետ:
- Խուսափեք անորոշ կամ կրկնվող նկարագրություններից:
- Ըամառոտ եղեք. երիտասարդական նախագիծը կարող է ինտենսիվ լինել, և դուք հավանաբար կարող եք շատ բան գրել ձեր փորձառությունների, սովորելու պահերի և այլնի մասին: Բայց մի գրեք վեպ: Ինչ-որ մեկը պետք է ընթերցի այդ ամենը: Փորձեք կենտրոնանալ ձեր հիմնական ուսումնական կետերի վրա և ճշգրիտ նկարագրել դրանք:

Եթե երիտասարդները ցանկանում են օգտագործել Youthpass հավաստագիրն աշխատանքային հայտարարություններին արձագանքելիս, ապա լավ գաղափար կլինի հավաքել աշխատանքի հայտարարությունները և ուսումնասիրել, թե ինչպես են կարողություններն այնտեղ ձևակերպված: Սա կարող է պատկերացումներ տալ այն մասին, թե ինչպես նկարագրել ձեր ուսուցման արդյունքներն այնպես, որ դրանք հասկանալի լինեն և ճանաչվեն գործատուների կողմից:

## ԵՐԵՔ ՃԱՆԱՊԱՐԶ

Անշուշտ, ուսուցման արդյունքները նկարագրելու երեքից ավելի եղանակներ կան, բայց ստորև ներկայացված են դրանցից երեքը:

### Նախագծի սկզբում սահմանվող ուսումնական նպատակներ

Ծրագրի սկզբում մասնակիցներին կարող են խնդրել սահմանել իրենց ուսումնական նպատակները: Ոմանց համար սա ավելի հեշտ է, քան մյուսների: Աչնուամենայնիվ, նրանց համար, ովքեր հարմարավետ են զգում դա անելիս և ի վիճակի են իրենց համար հստակ նպատակներ սահմանել, այս նպատակները կարող են լավ սկզբնակետ լինել իրենց ուսուցման վերաբերյալ մտորելու հարցում: Կարող է պատահել, որ գործընթացի ընթացքում առաջանան նոր ուսումնական նպատակներ, որոնք կարող են ավելացվել նկարագրության մեջ: Ըստկապես, ավելի երկար ծրագրերում, ինչպիսիք են ԵԿԾ կամ երիտասարդների մասնակցությամբ նախաձեռնությունները, որոնց նպատակները կարող են փոխվել և առաջանալ նորերը:

Այս վարժության գաղափարն է կապակցել ուսուցման նկարագրությունն ուսումնական նպատակների հետ և նկարագրել՝

### Իրավիճակները որպես ելակետ

Որոշ սովորողներ նախընտրում են իրենց ուսուցումը կապել որոշակի իրավիճակների հետ: Կարող են լինել իրավիճակներ, երբ «ամբողջ ուսուցումն ի մի է բերվում»: Նման իրավիճակները կարող են ներառել այն պահը, երբ երիտասարդը պետք է ներկայացնի իր երիտասարդական նախաձեռնությունը մի խումբ

- ինչու՞ են ձևակերպվել այս նպատակները,
- ինչպե՞ս են մասնակիցներն աշխատել այս նպատակների վրա,
- որքանո՞վ է հնարավոր հասնել նպատակներին,
- ինչպե՞ս են փոխվել նպատակները ծրագրի ընթացքում,
- ՚նչ նոր նպատակներ են ավելացվել գործընթացի ընթացքում:

Վերջին քայլն է նկարագրությունները դասակարգել ութ բանալի կարողությունների ներքո:

Ուսումնական նպատակների հետ աշխատելը հարմար է այն սովորողի համար, ով կարողանում և սիրում է իր ուսուցումը կազմակերպել պլանավորված ձևով: Թեև սա ուսուցման արդյունքները նկարագրելու ամենատրամաբանական ձևն է թվում, կարևոր է տեղյակ լինել, որ շատ մարդիկ (երիտասարդներ) իրենց ուսուցման մեջ չեն հետևում նման պլանավորված գործընթացի:

մարդկանց, որոշակի վարժություն վերապատրաստման դասընթացի ժամանակ, զրույց մենթորի հետ, հանդիպում հասակակիցների հետ, որտեղ նա որոշակի դեր է ստանձնել, կամ նախագծի ընթացքում թերթ կամ ֆիլմ է ստեղծել: Այս իրավիճակներից մի քանիսի նկարագրությունը կարող է լինել հիմնական ուսուցման կետերը նկարագրելու միջոց:

Կոնկրետ իրավիճակի մասին խոսելը երիտասարդներին հնարավորություն է տալիս շատ գործնական օրինակներ բերել, ինչպես նաև ապացուցել, թե ինչպես են նրանք օգտագործել նոր գաղափարները և հմտությունները: Այն թույլ է տալիս նրանց կապել ուսուցումը նոր դեր

ստանձնելու, նոր առաջադրանք կատարելու, գաղափար ձևավորելու և այլնի հետ:

Վերջում, փորձեք ուսուցման այս կոնկրետ իրավիճակները դասակարգել ուժ բանալի կարողություններից մեկի ներքո:

**Ձեր գործընթացի պատմությունը**

«Երբ լրացրեցի դասընթացի հայտը...», կամ «Երբ Տայլին ժամանեցի իմ նախագծի առաջին օրը...», կամ «Երբ նստած էինք մի քանի ընկերներով...» կարող են լինել բացման խոսքեր նրանց համար, ովքեր նախընտրում են նկարագրել իրենց սովորածն ավելի շատ որպես պատմություն, որը հետևում է գործընթացին և հասնում հիմնական ուսուցման կետերին: Այն մարդկանց համար, ովքեր սիրում են գրել, սա կարող է լավ միջոց լինել՝ բացատրելու իրենց ուսումնական ուղին:

Սակայն, Youthpass հավաստագրի դեպքում կարևոր է վեպ չգրելը: Փոխարենը, երկու էջով «ուսուցման պատմություն» գրելը հետաքրքիր և հասկանալի տարբերակ է նրանց համար, ովքեր իրենց հարմարավետ են զգում դա անելիս:

Այս դեպքում պատմությունը դժվար թե դասակարգվի ուժ բանալի կարողություններից մեկի ներքո: Ուստի, «պատմությունը» կարող է տեղադրվել «այլ» դաշտի տակ:

**Կրկին.** մոտիվացրեք երիտասարդներին աջակցել միմյանց իրենց գնահատականները գրելիս: Լավ օրինակներ ցույց տալը, կարծիք հայտնելը և գաղափարներով ու խորհուրդներով կիսվելը կարող է իսկապես օգտակար լինել: Արեք դա միասին:

**«ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԲԱՌԵՐ»**

Youthpass ուղեցույցում դուք կարող եք գտնել մի քանի «մեկնարկային բառեր» այն նախադասությունների համար, որոնք նկարագրում են ձեր ուսուցման արդյունքները.


- **Ես հիմա ավելի հարմարավետ եմ զգում...**
- **Ես իմացա...**
- **Ես սովորեցի...**
- **Ես վստահ եմ...**
- **Ես առաջընթաց եմ գրանցել...**
- **Ես կարող եմ...**
- **Ես այժմ գիտեմ, թե ինչպես...**
- **Ես զարգացրել եմ...**
- **Ես այժմ հստակ պատկերացում ունեմ...**
- **Ես ուզում եմ ավելի ուսումնասիրել...**

## YOUTHPASS-Ը ՎԵՐՋԸ ՉԷ:

Ծրագրի ավարտին տրված Youthpass-ը (ոչ ավելին, և ոչ պակաս) տվյալ ծրագրի ընթացքում տեղի ունեցած ուսուցման մասին փաստաթուղթ է: Այն նկարագրում է ուսուցման արդյունքները տվյալ ժամանակահատվածում: Շատ երիտասարդներ առաջին անգամ մուտք կգործեն

գլխան ուսուցման համար բանալի կարողությունների աշխարհ: Այնուամենայնիվ, երիտասարդական փոխանակման ընթացքում ոչ մեկ չի կարողանա նշել բանալի կարողություններից երկուսը կամ երեքը և ասել՝ «Եվ այսպես, սա արված է»: Քանի որ բանալի կարողությունները գլխան ուսուցման մասին են:

Սա ցույց է տալիս, որ Youthpass-ն իր տեղն ունի եվրոպական կրթության և զբաղվածության ավելի լայն շրջանակներում: Youthpass-ը հաճախ առաջին քայլն է, որին հաջորդելու են շատ ուրիշները:



### ԱՌՆՉԱՈՐ ԳՈՐԾԻՔՆԵՐ.

- ① Ուսուցման գործարան (էջ 56)
- ② Youthpass օկտա-կարողություններ (էջ 58)
- ④ Շոն գառնուկը՝ Սահմաններից դուրս (էջ 64)
- ⑤ Youthpass կղզիներ (էջ 66)
- ⑥ Նավապետի մատյան (էջ 72)
- ⑨ Ուսումնական օրագիր (էջ 84)
- ⑫ Ի՞նչ էք սովորել այսօր (էջ 92)
- ⑮ Ուսուցման «Ֆրանկենշտեյնի մեթոդ» (էջ 100)

## ՖԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ

### Վերադարձնել սովորելու հաճույքը

Ի՞նչ է այս ամենը նշանակում երիտասարդական աշխատողի/առաջնորդի, քուլչի, դասընթացավարի, մենթորի կամ որևէ այլ դերակատարի համար՝ որպես այս ուսումնական գործընթացում աջակցող անձի: Արդյո՞ք դա նշանակում է դերի ու մոտեցման փոփոխություն: Սա դժվար հարց է: Սա մեծապես կախված է երիտասարդների հետ աշխատանքում դերերի և մոտեցումների մասին տարբեր գաղափարներից ու հասկացություններից: Այսպիսով, ստորև ներկայացված նկարագրությունը ծանոթ է որոշ մարդկանց, իսկ ոմանց համար այն նոր հեռանկարներ կբացի:

Մենք կօգտագործենք «ֆասիլիտատոր» բառը՝ ընդգրկելու այն տարբեր գործառույթները, որոնք առկա են եվրոպական երիտասարդական աշխատանքում:

Պարզ ասած, ֆասիլիտատորի դերն է աջակցել երիտասարդ սովորողին հասնելու իր ուսումնական նպատակներին: Ամենակարևոր և դժվար մասը նախադասության վերջին մասն է՝ «հասնելու իր ուսումնական նպատակներին»: Youthpass գործընթացում երիտասարդներին առաջարկվում է պատասխանատվություն ստանձնել իրենց ուսուցման համար: Սա նշանակում է, որ նրանք են որոշում, թե ինչ են ցանկանում սովորել, ինչպես են ցանկանում դա անել և երբ: Այս սկզբունքը գտնվում է ոչ ֆորմալ կրթության, ցկյանս ուսուցման և «սովորել՝ ինչպես սովորելու» հիմքում: Youthpass-ը միավորում է այս բոլոր տարրերն ու համախմբում դրանք ճանաչման գործիքի և ուսումնական գործընթացի մեջ:

## ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Արդյո՞ք երիտասարդները ցանկանում են պատասխանատվություն ստանձնել իրենց ուսուցման նկատմամբ:

Նախքան ֆասիլիտատորի տարբեր դերերին անցնելը, զուցե լավ գաղափար կլինի տալ այն հարցը, որը ծագում է շատ մարդկանց մտքում. արդյո՞ք (բոլոր) երիտասարդները կարող են և ցանկանում են ստանձնել պատասխանատվություն ուսուցման նկատմամբ:

Բոլոր մարդիկ ունակ են սովորել և անել դա ինքնուրույն: Փոքր երեխաներն ահեղի շատ բան են սովորում իրենց կյանքի առաջին տարիներին: Եվ ոչ թե այն պատճառով, որ ինչ-որ մեկը դա կարգադրում է, այլ այն պատճառով, որ ցանկանում են: Մարդը սովորելու, զարգանալու, անելու բնական կարիք ու մոտիվացիա ունի:

**Վերոնջյալ հարցին ավելի մանրամասն պատասխան կտրվի «Այո, բայց...» բաժնում:**

**Մենք միտված ենք ասելու՝ «Այո»:**


Մեզանից շատերը եղել են այնպիսի կրթական համակարգերում, որտեղ սովորելու մեր բնական կարիքը չի ճանաչվել: Ենթադրվում էր, որ մենք պետք է սովորենք այն, ինչ ուրիշների կարծիքով կարևոր է մեզ համար: Նրանք որոշում էին, թե որն է սովորելու լավագույն միջոցը և արդյոք մենք հաջողություններ ենք գրանցել մեր ուսուցման հարցում: Այս պարագայում մենք չէինք պատասխանատու մեր ուսուցման համար:

Սա է պատճառներից մեկը, որ շատ երիտասարդներ կորցնում են դպրոցում սովորելու իրենց մոտիվացիան: Նրանց սովորելու ձևը, կարիքները և հետաքրքրությունները չեն ճանաչվում կամ լուրջ չեն ընդունվում: Նրանք ստիպված են հետևել այլ անձանց գործելաոճին: Եվ արդյունքում շատ մարդիկ հեռանում են դպրոցից՝ «սովորել» բառի բացասական ընկալմամբ: Ոմանք նույնիսկ իրենք իրենց մասին «վատ սովորողների» կարծիք են կազմում: Սա տխուր եզրակացություն է, քանի որ «վատ սովորողի» գոյություն չունեն: Մարդիկ պարզապես սովորելու շատ տարբեր ձևեր ունեն, և կրթական համակարգի համար դժվար է դա ճանաչել և հաշվի առնել:

Սակայն, ֆասիլիտատորի համար շատ կարևոր է տեղյակ լինել «սովորելու» գաղափարի բացասական ընկալման և շատ երիտասարդների մոտ այս հարցում ցածր ինքնագնահատականի մասին: Այս հանգամանքները հսկայական ազդեցություն ունեն սեփական ուսուցման նկատմամբ պատասխանատվություն ստանձնելու պատրաստակամության վրա: Սեփական կարիքներն ու հետաքրքրությունները վերագտնելու համար ժամանակ և մտորում է պահանջվում: Ֆասիլիտատորը կարող է կարևոր աջակցող և խթանող դեր ունենալ այս գործընթացում:

## ՖԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԵՐԸ

Ֆասիլիտատորը նման է սարդի, ով ունի տարբեր ոտքեր, որոնցից յուրաքանչյուրն աջակցում է ուսուցմանը:



### Ստեղծեք լավ ուսումնական միջավայր

Շատ կարևոր է լավ միջավայր ստեղծել մտորման և սովորելու համար: Այն խումբը, որտեղ սիսայներ թույլ տալը, կասկածներ ունենալը, խոցելի զգալը կամ բաց լինելը չի գնահատվում, չի կարող լինել այնպիսի վայր, որտեղ մտորումն ու սովորելը դյուրին են: Բաց մտորման համար ձեզ հարկավոր են շրջապատող այնպիսի մարդիկ, ովքեր լսում են, հարգում և չեն դատում:

Լավ ուսուցման և մտորման միջավայրի սկզբունքները կարող են լինել հետևյալը՝

- մարդկանց միջև եղած տարբերությունների գնահատում
- ուրիշներին աջակցելու և մոտիվացնելու պատրաստակամություն

- հարգանք տարբեր արտահայտման ձևերի նկատմամբ
- ուսուցման տարբեր եղանակների արժևորում
- Երիտասարդների ուժեղ կողմերի և ներուժի վրա կենտրոնացում

Այս սկզբունքները հիմնականում վերաբերում են այն մոտեցումներին, որոնք օգնում են երիտասարդներին միասին մտորել և աջակցել միմյանց ուսուցմանը: Այս մոտեցումները գործնականում կիրառելու համար կարելի է սովորեցնել որոշակի հմտություններ: Դրան կարող են նպաստել «հարցեր տալով», «ակտիվ լսելով» և «կարծիք հայտնելու և լսելով» վարժությունները:

**Տրամադրել ռեսուրսներ**

Ֆասիլիտատորը կարող է աջակցել երիտասարդներին իրենց ուսուցման հարցում՝ առաջարկելով փաստաթղթեր, մարդկանց, կայքեր, վայրեր, որոնք կարող են օգնել երիտասարդներին հետագա քայլեր ձեռնարկել:

**Աջակցող հարցեր**

Ֆասիլիտատորի դերը չի կայանում երիտասարդ սովորողներին պատասխաններ տալը: Ընդհակառակը, ավելի կարևոր է տալ հարցեր, որոնք օգնում են երիտասարդին ավելի հստակ պատկերացնել իր կարիքները, հետաքրքրությունները, նպատակները և ուսուցման ուղու վրա ձեռնարկվելիք հետագա քայլերը:

**Համախմբել մարդկանց**

Սովորելը միայնակ իրականացվող գործ չէ: Պետք է հնարավորինս խրախուսել երիտասարդների միջև համագործակցությունն իրենց ուսուցման ուղու վրա: Ֆասիլիտատորը կարող է կարևոր դեր ունենալ նույն նպատակներով, թեմաներով կամ ուսուցման ռճով սովորողներին համախմբելու գործում:

**Ներառել ուսուցումն օրակարգում**

Սեփական ուսուցման համար պատասխանատվություն ստանձնելը նշանակում է, որ դուք պետք է մտածեք, թե ինչպես եք սովորել մինչ այժմ: Որո՞նք են սովորելու այլ հնարավոր ուղիները և ինչպե՞ս եք ցանկանում սովորել ապագայում: Ֆասիլիտատորն օրակարգում ներառում է ուսուցման թեման և պետք է ժամանակ և տարածք ստեղծի, որպեսզի երիտասարդները կարողանան մտածել և քննարկել իրենց ուսուցման ձևի մասին:

**Լսել**

Այս մեկը դյուրին է թվում, բայց այն կարող է լինել ամենադժվարը: Շատ սովորողներ, հատկապես գործընթացի սկզբում, սովոր են լսել և ակնկալում են, որ դուք եք խոսելու: Այնուամենայնիվ, ֆասիլիտատորի համար կարևոր գործառույթ է սովորողի ասածն ուշադիր և կենտրոնացված լսելը: Սա հիմնականում համընկնում է վերը նկարագրված «աջակցող հարցերի» հետ: Լսելը կենսական նշանակություն ունի սովորողի հատուկ կարիքները, բլոկներն ու հետաքրքրությունները բացահայտելու և ճանաչելու համար: Մենք հակված ենք անմիջապես պատասխաններ ու լուծումներ գտնել: Փոխարենը, մենք պետք է լսենք և տանք այն հարցերը, որոնք ստիպում են սովորողներին իրենց սեփական լուծումները գտնել: Փորձեք չափել ձեր խոսելու ժամանակը և այն ժամանակը, որն անհրաժեշտ է երիտասարդին խոսելու համար:

**Մոտիվացնել սովորողներին**

Այս դերը դժվար է նկարագրել կոնկրետ տերմիններով: Մոտիվացիոն խնդիրները կարող են ունենալ շատ տարբեր ծագումներ և պատճառներ: Ինչպես վերը նկարագրվեց, շատ երիտասարդներ բացասական ինքնաընկալում ունեն, երբ խոսքը վերաբերում է սովորելուն: Դժվար է վերադարձնել «զվարճանքը» ուսուցման մեջ և ստիպել երիտասարդներին ուսուցումը համարել մի բան, որն «իրենցն» է:

**Կարծիք**

Որպես ուսուցման գործընթացի դիտորդ՝ ֆասիլիտատորը հաճախ լավ հնարավորություն է ունենում հայտնելու երիտասարդներին իր կարծիքը և օգնելու իրենց ինքնաընկալումն ընդլայնելու հարցում: Մարդիկ հաճախ կարծում են, որ ճանաչում են իրենք իրենց, բայց այդ ընկալումը երբեմն սահմանափակ է: Այլ մարդկանց կարծիքը կարող է օգնել նրանց տեսնել ավելի շատ տարբերակներ և հնարավորություններ: Բացի դրանից, պարզ գովաբանությունը կարող է շատ մոտիվացնող լինել:

**Տեսնել սովորողների ներուժը**

Շատ երիտասարդներ հիանալի նկարագրում են այն, ինչում լավ չեն: Ինչ վերաբերում է հետադարձ կապ (feedback) տալուն, ապա շատ կարևոր է, որ ֆասիլիտատորը կարողանա տեսնել այն ամբողջ ներուժը, որն անկասկած ունեն բոլոր երիտասարդները: Վարողը կարող է երիտասարդներին տալ նոր առաջադրանքներ կամ դերեր, կամ խրախուսել նրանց փորձել որևէ նոր բան: Սա կարող է բացահայտել կարողություններ, որոնց մասին երիտասարդները տեղյակ չէին:

**Գաղափարներ և խորհուրդներ**

Ֆասիլիտատորը կարող է երիտասարդներին տալ խորհուրդներ, գաղափարներ և առաջարկություններ՝ աջակցելու նրանց ուսուցմանը: Այնուամենայնիվ, դուք պետք է տեղյակ լինեք ուսումնական գործընթացի ղեկը ստանձնելու ռիսկերի մասին: Կարևոր է պահպանել հավասարակշռություն խորհուրդներ տալու և սովորողի կողմից սեփական ուսուցման համար պատասխանատվություն ստանձնելու միջև: Բայց, այնուամենայնիվ, երիտասարդների հետ փորձի փոխանակումը կարող է շատ արժեքավոր լինել:

**Կարիքներ և հետաքրքրություններ**

Յուրաքանչյուր ոք ունի կարիքներ և հետաքրքրություններ: Այս կարիքներից ու հետաքրքրություններից շատերը թաքնված են և չասված: Կրթական համակարգում հաճախ հետաքրքրությունները չեն ճանաչվում կամ լուրջ չեն ընդունվում: Հետաքրքրությունները բնութագրվում են որպես տարօրինակ, հիմար կամ դասվում երազանքների շարքին: Այնուամենայնիվ, հետաքրքրությունները, հավանաբար, ամենակարևոր շարժիչ ուժն են սովորելու համար: Ֆասիլիտատորը պետք է ճանաչի այս հետաքրքրությունները և օգնի սովորողին վերագտնել դրանք:

**ԱՌՆՉՎՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ.**  
⑦ **Ուսուցման վերաբերյալ հարցազրույց (էջ 76)**



## YOUTHPASS ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԴԵՊԻ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Լավ հարցերին հնարավոր չէ տալ հեշտ պատասխաններ (Փոլ Սամուելսոն)

«Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը գրելիս կային մի քանի հարցեր, որոնք անընդհատ ծագում էին: Այս հարցերը ցույց են տալիս այն դժվարությունները, որոնց հետ բախվում է երիտասարդական աշխատողը/վարողը, երբ աշխատում է հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների հետ: Մենք խրախուսում ենք ձեզ հիշել հետևյալ հարցերը և մտորել դրանց շուրջ այս ձեռնարկի յուրացման ընթացքում:

- 1). Արդյո՞ք կան ուսումնական տարբերություններ հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների համար:
- 2). Ինչպե՞ս են կյանքում հանդիպող որոշակի խոչընդոտներ (օրինակ՝ հաշմանդամություն, անկայուն սոցիալական վիճակ, մոտիվացիոն խնդիրներ և այլն) ազդում ուսուցման վրա:

Կարելի է ասել, որ կան այնքան սովորելու ձևեր, որքան սովորողներ: Յուրաքանչյուր սովորող ունի հատուկ պայմաններ. այնպիսի գործոններ, ինչպիսիք են կարողությունները, կարիքները և սոցիալական ծագումը, որոշում են մեր սովորելու ձևը: Բայց, ի վերջո, մարդիկ ուսուցման գործընթացում անցնում են նույնանման փուլերով՝ անկախ այն բանից, որ յուրաքանչյուրն ուսուցմանը կարող է տարբեր կերպ մոտենալ:

Վերոնշյալսանումը կարևոր է երիտասարդական ծրագրերի համար, քանի որ դրանց առաջնահերթություններից է ուսուցման հնարավորությունների ապահովումն ավելի քիչ հնարավորություններով երիտասարդների համար: Այս առումով Youthpass գործընթացն առանձնանում է որպես

ուսուցմանն աջակցելու և այն հավաստագրելու հիանալի հնարավորություն ինչպես հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների, այնպես էլ նրանց հետ աշխատող երիտասարդական աշխատողների համար:

«Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը նպատակ ունի նաև մտորելու ներառման վերաբերյալ, մեկնաբանելու այն և լրացուցիչ ուշադրություն դարձնելու Youthpass գործընթացում ներառական թիրախային խմբերին: Ձեռնարկի այս գլխում ընդգրկված այն ասպեկտների մեծ մասը, որոնք ուղղված են ներառական խմբերի հետ աշխատանքի առանձնահատկություններին, ներկայացված են նաև այլ տարբեր գլուխներում:

## ԵՐԲ ԿԱ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ԿԱ ՄԻՋՈՑ

Ըստ ԿԵԿ-ի համարվում է, որ Youthpass գործընթացը պետք է հնարավորինս ներառական լինի: Այնուամենայնիվ, միշտ չէ, որ հեշտ է գտնել համապատասխան գործիքներ և մեթոդներ կյանքում խոչընդոտների հանդիպող երիտասարդների կարիքները բավարարելու համար: Ըստ Լեոնարդոյի, այս ձեռնարկը՝ հատուկ ուշադրություն է դարձնում ոչ միայն բուն գործընթացին, այլև ներառական թիրախային խմբերին: Այս հրատարակման մի քանի կետերում մենք անդրադառնում ենք հավասար մասնակցության պայմաններին և առաջարկում գործիքներ ու խորհուրդներ՝ դյուրացնելու ուսուցման արդյունքները գրանցելու գործընթացը: Ներառական խմբերի դեպքում Youthpass գործընթացից բխող մարտահրավերներն ու օգուտները նույն մետաղադրամի երկու կողմերն են:



## ՆԵՐԱՌՄԱՆ ՇԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

**Արդյո՞ք Youthpass-ը լրացուցիչ դժվարություն է:** Youthpass-ը պետք է ուղեկցի և աջակցի ուսումնական գործընթացին ու չդառնա ցուցակին ավելացվող ևս մեկ խոչընդոտ: Youthpass գործընթացը մտադիր է առաջարկել ուսուցման նոր ռազմավարություններ ստեղծելու և մշակելու միջոց: Կրթությունը պետք է լինի ուսանողակենտրոն, և Youthpass-ն այս փորձին ավելացված արժեքավոր գործիք է: Youthpass-ն օգտակար է, քանի որ այն բարձրացնում է ուսուցման մասին իրազեկվածությունը և ընդունում, որ կան օգտակար արդյունքներ ուսուցման գործընթացից: Youthpass-ն ուսումնական պրոդուկտ է, որը երիտասարդները կարող են օգտագործել «իրական կյանքի» համատեքստերում (օրինակ՝ աշխատանք փնտրել, կարիերա կառուցել, օտար լեզու սովորել, կամավորություն անել և այլն):

**Ուսուցման արդյունքների բացահայտումը և արդյունքների գրանցումը** կարող է բարդ խնդիր լինել, եթե մենք չունենք համապատասխան գործիքներ: Youthpass-ն ինքնին գործիք է, և այս ձեռնարկի հիմնական գաղափարն է տրամադրել լրացուցիչ աջակցման գործիքներ և մեթոդներ այս գործընթացում սովորողներին և ուսուցանողներին ուղեկցելու համար: Ուսուցման գործընթացի բացահայտումը և արդյունքների գրանցումը նույնը չէ խոսքի

սահմանափակ հմտություններ ունեցող երիտասարդի կամ այնպիսի մեկի համար, ով դժվարանում է իր գաղափարները գրավոր ներկայացնել: Այստեղ և՛ սովորողի, և՛ ուսուցանողի փորձն ու մոտիվացիան մեծ դեր են խաղում այդ խոչընդոտները վերացնելու կամ այլընտրանքային ուղիներ գտնելու միջոցով դրանք հաղթահարելու համար:

**Ուսուցման անհատական ճանաչում:** Ինչպե՞ս կարող ենք ճանաչել և գնահատել այն, ինչ սովորել ենք: Այս մարտահրավերը չի սահմանափակվում հատուկ կարիքներ ունեցող երիտասարդներով: Անուամենայնիվ, անբարենպաստ վիճակում գտնվող երիտասարդների համար ավելի դժվար է իրենց սովորածի մասին իրազեկ լինելն ու դրա մեջ օգտակար և արդյունավետ մի բան գտնելը: Մոտիվացիան, ուսանողակենտրոն նախաձեռնությունները և աջակցության միջոցները հատկապես կարևոր գործոններ են այն թիրախային խմբերի համար, որոնք չեն կարող հեշտությամբ տեսնել ուսուցման իրական արժեքն ու նպատակը:

## ՆԵՐԱՌՄԱՆ ՇԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Ուսուցման նպատակների սահմանումը՝** ուժեղ կողմերի և դրական կետերի վրա կենտրոնանալու միջոցով, մարդու մոտ ուսուցման մոտիվացիան և խանդավառությունը խթանելու եղանակ է, հատկապես այն երիտասարդների դեպքում, ովքեր կարող են ուսուցումն ասոցացնել նախորդ բացասական կրթական փորձի հետ:

**Ոչ ֆորմալ ուսուցման ճանաչում:** Արտաքին ճանաչումը հնարավորություն է տալիս հատուկ կարիքներ ունեցող երիտասարդներին հավաստագրման միջոցով «ցույց տալ» իրենց ձեռք բերած կարողությունները կազմակերպություններին, պոտենցիալ գործատուներին և զբաղվածության հարցերով խորհրդատուներին: Youthpass հավաստագիրը կարող է լինել նրանց

ունեցած առաջին և միակ հավաստագիրը: Մինչդեռ, անհատական ճանաչումը բացառիկ հնարավորություն է հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների ինքնահզորացման համար: Դա նրանց իրազեկում է այն մասին, թե ինչ և ինչպես են սովորել: Youthpass-ը խթանում է անձնական և մասնագիտական զարգացումը՝ որպես ուսուցման փորձի վերջնական նպատակ:

**Youthpass-ը՝ որպես ինքնազորացման գործիք:**  
Youthpass-ը հիանալի գործիք է երիտասարդական աշխատողների համար՝ անկախ ծագումից ցանկացած անհատի մոտիվացնելու և հզորացնելու համար: Այն վայրերում, որտեղ ֆորմալ կրթությունն անարդյունավետ է դարձել, ոչ ֆորմալ ուսուցումը կարող է նոր հնարավորություններ ստեղծել այն երիտասարդների համար, որոնց սխալմամբ պիտակավորել են որպես «վատ սովորողներ»: Ոչ ֆորմալ կրթությունը կարող է օգնել

նրանց իրագործել իրենց իրական ներուժը՝ որպես ակտիվ քաղաքացիներ և մարդիկ:

**Երիտասարդական աշխատողների ստեղծարարությունը**  
կարող է նաև բացել ուսուցմանը նորապես մոտենալու մի շարք հնարավորություններ: Երիտասարդական աշխատողները կարող են ստեղծել, մշակել և հարմարեցնել ուսումնական գործիքներն ու մեթոդները տարբեր թիրախային խմբերի համար: «Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը ձեզ տալիս է կոնկրետ գործիքներ, սակայն երիտասարդական աշխատողները պետք է հարմարեցնեն դրանք այն երիտասարդների կարիքներին, որոնց հետ աշխատում են: Youthpass գործընթացն առաջացնում է հարցեր և խնդիրներ, որոնք կարելի է դիտարկել տարբեր ձևերով:

Այսպիսով, ինչու՞ հետ չնայել երկու սկզբնական հարցերին և չփորձել գտնել պատասխաններ երիտասարդական աշխատողի՝ որպես ուսուցման ֆասիլիտատորի, տեսանկյունից:

## ՆԵՐԱՌՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Youthpass գործընթացի համատեքստում երիտասարդական աշխատողի դերն է օգնել երիտասարդներին պարզել իրենց ուսումնական կարիքները և հասնել իրենց նպատակներին: Մոտեցումը մնում է նույնը՝ անկախ թիրախային խմբից: Սա կարող է բավականին ակնհայտ թվալ, բայց եթե դիտարկենք մեկնարկային հարցերը, ապա կարող ենք մտածել, որ հատուկ կարիքներ ունեցող երիտասարդների հետ աշխատելիս առաջանում են այլ խնդիրներ: Արդյո՞ք կա ավելի ընդարձակ մոտեցում: Արդյո՞ք կա այլ ուղի: Արդյո՞ք հարցերը նույնն են:

Ընարավոր է, որ «Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը առաջարկի մեթոդաբանական մարտահրավերներ, որոնք երիտասարդական աշխատողները ստիպված լինեն հաղթահարել: Ընդհանուր առմամբ, ուսուցանողի առաջնային դերն է օգնել հատուկ կարիքներ ունեցող մարդկանց՝ հարթեցնելով նրանց ուսումնական ուղին, առաջնորդելով, աջակցելով և մոտիվացնելով նրանց: Սա կարող է թվալ պարզապես որակավորման հարց, բայց վարողը պետք է գործ ունենա տարբեր հանգամանքների հետ և հետևի այլընտրանքային ռազմավարություններին, երբ թիրախավորում է ներառական խմբերը:

## ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

Ուղղորդումը, օգնությունը, քույրիձգը և մենթորությունը մի քանի եղանակներ են, որոնց միջոցով ֆասիլիտատորը կարող է օգնել հատուկ կարիքներ ունեցող երիտասարդներին հասնելու իրենց ուսումնական նպատակներին և ներուժին: Բացի ֆասիլիտատորի աջակցությունից և սովորելու ցանկություն ունեցող երիտասարդներից (քանի որ նրանք զգում են, որ կարող են օգուտ քաղել իրենց ուսուցումից), մենք պետք է գործ ունենանք հատուկ կարիքների հետ՝ ամբողջ գործընթացն իրականացնելու համար:

Այս լրացուցիչ միջոցառումները կարող են ներառել՝ ԵԿԾ ծրագրի ընթացքում ուժեղացված մենթորություն, հատուկ հարմարեցված գործունեություններ՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնակցությամբ երիտասարդական փոխանակման շրջանակում, ինչպես նաև լրացուցիչ ժամանակի հատկացում՝ սովորողներին

օգնելու համար իրենց ուսումնառության պլաններն ու ձեռք բերած արդյունքները վերլուծել և գրավոր ձևակերպել: «Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը թվարկում է մի շարք օժանդակ գործիքներ և մեթոդներ, որոնք կարող են օգտակար լինել: Այնուամենայնիվ, միանշանակ լրացուցիչ ջանքեր են պահանջվում ներառական խմբերի հետ աշխատելիս այս մեթոդները հարմարեցնելու համար:

Youthpass գործընթացը պահանջում է երկարաժամկետ ռազմավարություններ և խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարում ուսուցման բոլոր փուլերում՝ երիտասարդների ինքնուրույնության, ինքնազարգացման և անձնական զարգացման համար:

## «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՓԱՅՏԱՄԱԾԵՐԻ» ՈւՂՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպե՞ս կարող է երիտասարդական աշխատողը նպաստել երիտասարդների ուսուցման զարգացմանը, երբ նրանք բախվում են կյանքում որոշակի խոչընդոտների, որոնք ազդում են այդ ուսուցման վրա: Այն կարելի է բացատրել համեմատելով շինարարության հետ՝ փայտամածներն օգտագործվում են որպես ժամանակավոր կառույց՝ օգնելու աշխատողներին ավարտին հասցնել իրենց աշխատանքը շինհրապարակում: Այս փայտամածը և՛ աշխատելու տեղ է, և՛ դժվար տարածքներ հասնելու միջոց: Երիտասարդական աշխատողը կարծես այսդպիսի ուսումնական փայտամած է տեղադրում երիտասարդների ուսուցման շինհրապարակում, որպեսզի նրանք կարողանան զարգանալ:

Youthpass գործընթացը նախագծելիս անհրաժեշտ է ստեղծել աջակցող կառույցներ այն երիտասարդների համար, ովքեր բախվում են կոնկրետ խոչընդոտների: Երիտասարդական աշխատողը լայնածավալ աջակցություն է ցուցաբերում գործընթացի սկզբում, որպեսզի օգնի սովորողներին ձևավորել այն կարողությունների սեփական ընկալումը, որոնք նրանք ցանկանում են ձեռք բերել: Ինչպես և շինհրապարակում, փայտամածների կառույցները պետք է աստիճանաբար հեռացվեն: Դրանք ժամանակավոր են և ինքնանպատակ չեն: Դրանք ավելի շուտ մշտական ուսումնական կառույց ստեղծելու միջոց են, որի նկատմամբ սովորողը կարող է աստիճանաբար ստանձնել ամբողջ պատասխանատվությունը:

Youthpass գործընթացն առաջարկում է ուսուցումը կառուցելու: Ծրագիր, բայց դուք չպետք է մոռանաք փայտամածների մասին, որոնք հարմարեցվում են այն երիտասարդների համար, ում հետ աշխատում եք, եթե պլանավորում եք, որ ուսուցումը պետք է լինի առանց խոչընդոտների և ներառական: Նպատակն այն է, որ, ի վերջո, սովորողները պատասխանատվություն

ստանան են իրենց ուսուցման արդյունքների նկատմամբ և զարգացնեն անկախ ուսումնական ռազմավարություններ՝ երիտասարդական աշխատողի կողմից ավելի քիչ աջակցությամբ կամ առանց դրա:

Այս դեպքում փայտամածները ներկայացնում են տարբեր օժանդակ ռազմավարություններ՝ տարբեր գործիքներից և մեթոդներից բաղկացած:

### ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԻՔՆԵՐ



Մեզ պետք են հատուկ գործիքներ հատուկ կարիքների համար, կամ մենք կարող ենք հարմարեցնել մեր ունեցած գործիքները հատուկ կարիքներին: Դժվար է ինչ-որ բան կառուցել առանց գործիքների: Դա վերաբերում է նաև ուսումնական գործընթացներին: Այս Ձեռնարկի գործիքակազմը ձեզ տալիս է այնպիսի գործիքների լայն ընտրանի, որոնք կարող են օգտագործվել, հարմարեցվել տարբեր համատեքստերում: Ձեր խնդիրն է հաշվի առնել հատուկ կարքներ ունեցող երիտասարդների խոչընդոտներն ու կարիքները, որոնց հետ աշխատում եք:

Ի վերջո, հենց ձեզնից, ձեր ստեղծարարությունից և մասնագիտական փորձից է կախված, թե ինչպես կօգտագործեք այս գործիքները՝ երիտասարդների և ձեր համար հաճելի, ներառական և խոչընդոտներին դիմակայող ուսումնառության փորձառություն ձևավորելու համար:

Այս հրատարակման մեջ մենք փորձում ենք հնարավորինս ներառական լինել և ձեզ տրամադրել խորհուրդներ ու պոտենցիալ հարմարեցումներ Youthpass գործընթացի բոլոր փուլերի համար: Այդուհանդերձ, այս գործիքակազմը չի հավակնում լինել ամբողջական՝ հնարավոր հարմարեցումների կամ այլ համատեքստերի և թիրախային խմբերի նկատմամբ կիրառելիության տեսանկյունից: :





ՄԱՍ Ո՛Ւ  
YOUTHPASS  
ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ

## ՈԳԵՇՆՉՎԵ՛Ք

«Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ի երկրորդ մասը ձեզ տրամադրում է գործնական վարժություններ և մեթոդներ, որոնք կարող եք օգտագործել այն երիտասարդների հետ, ովքեր անցնում են ուսումնական գործընթացի միջով: Դուք կարող եք ոգեշնչվել այս գործիքներից՝ գրավիչ ու ստեղծագործ կերպով վերլուծելու և գրառելու երիտասարդների հետ ուսուցումը:

## ՀԱՐՄԱՐԵՑՐԵՔ ԴՐԱՆՔ ԶԵՐ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

Յուրաքանչյուր խումբ և իրավիճակ տարբեր են: Դուք պետք է հարմարեցնեք այս գործիքներն ու մեթոդները երիտասարդներին և իրականացվող կրթական միջոցառման տեսակին: Վարժություններից յուրաքանչյուրում մենք արդեն տալիս ենք հարմարեցնելու որոշ հուշումներ, հատկապես, եթե դուք աշխատում եք հասուկ կարգիներ ունեցող երիտասարդների հետ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Youthpass գործիքակազմը ձեզ տրամադրում է տեղեկատվություն այն մասին, թե յուրաքանչյուր գործիքը ինչի է նպատակաուղղված (նպատակներ) և Youthpass գործընթացի որ փուլում է այն հատկապես կիրառելի (տես ընդհանուր պատկերացումն՝ հաջորդ էջում):

Յուրաքանչյուր մեթոդի համար դուք կգտնեք մանրամասն նկարագրություն՝ այն կիրառելու քայլերի վերաբերյալ: Սակայն ինքնին հասկանալի է, որ անհրաժեշտության դեպքում պետք է կիրառեք ձեր երիտասարդական աշխատողի ինտուիցիան կամ դասընթացավարի հմտությունները՝ վարժությունները հարմարեցնելու և զարգացնելու համար:



## ՄԵԿՆԱՐԿԻՐ

Ժամանակն է փորձել տարբեր մեթոդներ: Հաջողություն ենք մաղթում այդ գործում:

## YOUTHPASS ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ

|                                       | ՀԵՏ ԱՎԵՐԱԾՅՈՒ<br>ՆԱԽՆՈՒՄՆԵՐԱՏՈՒԹՅՈՒՆ | ՀԵՏ ԱՔԵՐԳՈՒԹՅԱՆ<br>ԱՌՈՋՁԵՊՈՒՄ | ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԵՐԱԾՅԱԼ<br>ԻՐԱԶԵՎՆԱԾՈՒԹՅՈՒՆ | ՈՒՐԳՈՐԴՈՒՄ ԵՎ<br>ՊՆԱՆԱԿՈՐԴՈՒՄ | ԱՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ<br>ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | ԲԱՏԱՆԱՅՏՈՒՄ ԵՎ<br>ՓՈՒՏԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԿԱՆՈՒՄ | ԱՐՁԵՈՒՆՁՆԵՐԻ<br>ՆԱԽՈՋՁԵՊՈՒՄ | YOUTHPASS-ի<br>ՆԵՐԱՋԱՆՏՈՒՄ | ՏԱՄԱՆԻՏԱՏՈՒԹՅՈՒՆ |
|---------------------------------------|--------------------------------------|-------------------------------|---|-------------------------------|---------------------------------|---|-----------------------------|----------------------------|------------------|
| ① ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ                  |                                      | x                             |   | x                             | x                               |   | x                           |                            |                  |
| ② ՕԿՏԱՎԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ                 |                                      |                               |   |                               |                                 | x                                       | x                           |                            |                  |
| ③ ԻՆՉ Է YOUTHPASS-Ը                   |                                      |                               | x                                       |                               |                                 |   |                             | x                          |                  |
| ④ ՇՈՆ ԳԱՌՆՈՒԿԸ                        |                                      | x                             |   |                               |                                 | x                                       | x                           |                            |                  |
| ⑤ YOUTHPASS ԿՂԶԻՆԵՐ                   |                                      |                               |   |                               |                                 |   | x                           | x                          |                  |
| ⑥ ՆԱՎԱԳԵՏԻ ՄԱՏՅԱՆ                     |                                      | x                             |   |                               | x                               | x                                       | x                           |                            |                  |
| ⑦ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<br>ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ | x                                    | x                             |   | x                             |                                 |   |                             |                            | x                |
| ⑧ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՈՎ                       |                                      | x                             |   | x                             |                                 |   |                             |                            |                  |
| ⑨ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ                  |                                      |                               | x                                       | x                             | x                               | x                                       | x                           |                            |                  |
| ⑩ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ<br>ՁԵՆՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼ  |                                      | x                             | x                                       |                               |                                 |   |                             |                            |                  |

|  | ՀԵՆՍՈՒՑՆԵՆ<br>ՆԱԽԱՍՏՈՒՄՆԻԹՅՈՒՆ | ՀԵՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ<br>ԱՄԱՁԱՏՈՒՄ | ՈՒՍՈՒՑՆԵՐԻ<br>ԻՐԱԶԿԱՄՈՒԹՅՈՒՆ | ՈՐՈՐՈՐԿՄԱՆ<br>ՊԼԱՆԱՆՈՒՄ | ԱՏՈՒՆՈՒՍՈՒՑՆԵՐ<br>ՎԵՐՎԵՐՅԱԼ | ԲԱՆԱՍՏՈՒՄԵՆ<br>ՓԱՏՈՒՄՆԵՐԻ<br>ՓԱՏՈՒՄՆԵՐԻ | ԱՐԶՈՒՅԵԼՅԵՐ<br>ՆԱԽԱՍՏՈՒՄ | ՅՈՒՄՊԱՏՏ-Ի<br>ՆԵՐԱՅԵՆՈՒՄ | ՑԱՊԱԿՑԱՏՈՒՄ<br>ԲԵՂԵ |
|--|--------------------------------|----------------------------|------------------------------|-------------------------|-----------------------------|---|--------------------------|--------------------------|---------------------|
| 11 ԻՄ ԽՈՐՀՐԳԱՆԻՇԸ  |                                |                            |                              |                         | x                           | x                                       |                          |                          |                     |
| 12 ԻՆՇԵՔՍՈՎՈՐԵԼ ԱՅՍՈՐ  |                                |                            |                              |                         | x                           | x                                       | x                        |                          |                     |
| 13 ԿՈՒԱԺԱՎՈՐԵՔ ԶԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ  | x                              | x                          |                              |                         |                             |   |                          |                          |                     |
| 14 ՖՈՏՈՆՈՎԵԼ   |                                | x                          | x                            |                         | x                           | x                                       |                          |                          |                     |
| 15 ՈՒՍՈՒՑՄԱՆ<br>«ՖՐԱՆԿԵՆՇԵՅՆԻ ՄԵԹՈՂ»                                   |                                |                            |                              |                         | x                           | x                                       | x                        |                          |                     |
| 16 ԲԱՐԴՄԱՐՏԱՆՉՐԱՎԵՐՆԵՐԻ<br>ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ                      |                                | x                          | x                            | x                       |                             |   |                          |                          |                     |
| 17 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՆԴԱԼԱ   |                                |                            |                              | x                       | x                           | x                                       |                          |                          |                     |
| 18 ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ՝<br>ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՐԲ<br>ՀԵՏԵՐԲՐՈՒԹՅՈՒՆ |                                | x                          |                              |                         |                             |   |                          |                          |                     |
| 19 ՈՐՏԵՂ ԵՔ ԳՏԱՎՈՒՄ  |                                |                            |                              |                         | x                           |   |                          |                          |                     |
| 20 ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ<br>ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ                             | x                              | x                          |                              |                         | x                           |   |                          |                          |                     |

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐՎԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏՆԱԲՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ՄԵՏԱՖՈՐԻԿ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ՝ ԱՄԵՆՕՐՅԱ ՄՏՈՐՈՒՄԸ ԽԹԱՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ԱՎԵԼԻ ՏԵՄԱՆԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Աջակցել ամենօրյա և շարունակական մտորմանը նախաձեռնության ընթացքում
- Բարձրացնել իրազեկվածությունն անհատական և խմբակային ուսուցման գործընթացների վերաբերյալ
- Բացահայտել և գրի առնել ուսուցման արդյունքները՝ դրանց առաջացմանը զուգընթաց



ԽՈՒՄԲ

- Ցանկացած



ԻՆՉԷ  
ԱՆՉՐԱԺԵՇՏ

- Դատարկ պատ
- Մարկերներ
- Կաշուն թերթիկներ, կաշուն ժապավեն
- Պաստառներ
- Ընտրովի՝ ստեղծագործական նյութեր և տեսախցիկ



ԺԱՄԱՆԱԿ

- 30-45 րոպե/օրական
- 2 ժամ՝ եզրակացությանը



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՆԱՆՎՆԵՐ

Մասնակիցներին ներկայացրեք «գործարան» բարոյի փոխաբերական իմաստը: Գործարանի հիմնական արտադրանքը միջոցառման շրջանակներում ուսուցումն է (երիտասարդական փոխանակում, վերապատրաստման դասընթաց կամ ԵԿԾ):

Պատին փակցրեք պաստառներ հետևյալ վերնագրերով և հարցերով.

- |                       |   |   |
|-----------------------|---|---|
| 1) Բաղադրիչներ        | - | ի՞նչ եք անձամբ ներդրել ուսումնական գործընթացում:                              |
| 2) Մեքենաներ          | - | ինչպիսի՞ միջավայրերում է տեղի ունեցել ձեր ուսուցումը:                         |
| 3) Անձնակազմ          | - | արդյո՞ք ներգրավվել եմ այլ անձինք:   |
| 4) Արտադրանք          | - | ի՞նչ սովորեցիք և ի՞նչ գիտեք, որ սովորել եք դա:                                |
| 5) Օպերատոր           | - | ինչպե՞ս էիք զգում միջոցառման ընթացքում (հույզեր):                             |
| 6) Մարքեթինգ և վաճառք | - | ո՞րն է ձեր ուսուցման արժեքը: Որտե՞ղ կարող եք օգտագործել ձեր փորձը հետագայում: |

Ձեր միջոցառման առաջին օրվա վերջում մասնակիցներին ցույց տվեք պաստառի պատը և բացատրեք, որ դա ուսման վերաբերյալ նրանց ամենօրյա վերլուծությունների տեղն է: Երիտասարդական փոխանակման կամ վերապատրաստման դասընթացի ժամանակ մասնակիցներին յուրաքանչյուր օրվա վերջում տրամադրեք 30-45 րոպե՝ պատի վրա փակցրած հարցերի շուրջ մտորելու համար: Միևնույն ժամանակ, խրախուսեք նրանց օգտագործել «գործարանը» որպես շարունակական մտորման գործիք և խնդրեք նրանց գրել կամ նկարներով ներկայացնել իրենց ուսուցումը, երբ ունենան դրա ցանկությունը:

Միջոցառման վերջին օրը մասնակիցներին տրամադրեք երկու ժամ աշխատելու Youthpass հավաստագրի ինքնազնադատման վրա (հավաստագրի երկրորդ մաս): Խնդրեք մասնակիցներին աշխատել ավելի փոքր խմբերով և որոշել իրենց ուսուցման արդյունքները՝ նայելով պատին: Նրանք կարող են վերցնել տարբեր տարբեր յուրաքանչյուր պաստառից՝ գրացնելու իրենց ուսուցման արդյունքները Youthpass-ի ինքնազնադատման մասում:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՆԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ

Այս երկու ժամյա դասընթացի ընթացքում ֆասիլիտատորը կարող է նաև ներկայացնել Youthpass-ի նախապատմությունը, պատմությունը և հայեցակարգը, ներառյալ որոշ ուղղորդող հարցեր «բանալի կարողությունների» վերաբերյալ:

Դրանից հետո մասնակիցները պետք է անհատական ժամանակ ունենան գրի առնելու իրենց ուսուցման արդյունքները (Youthpass հավաստագրերը պատրաստելու համար): Մասնակիցներին խնդրում են անել դա այլ մասնակիցների հետ երկխոսության միջոցով:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ինչպե՞ս էր այս «գործարանային» գործընթացը ձեզ համար:
- Ինչպե՞ս էր ձեր սովորածը բառերով արտահայտելը: Ի՞նչն էր հեշտ կամ դժվար:
- Ինչպե՞ս կվաճառեիք ձեր «արտադրանքը»:
- Ինչպե՞ս կարող եք հետագայում գործնականում կիրառել ձեր ձեռք բերած փորձը և ուսուցումը:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Դուք կարող եք հարմարեցնել այս մեթոդը տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար՝ օգտագործելով համակարգիչներ կամ ձայնագրություններ:
- Դուք կարող եք օգտագործել տարբեր փոխաբերություններ՝ ըստ ձեր միջոցառման թեմայի կամ թիրախային խմբի (օրինակ՝ խոհարարություն, ծովագնացություն, սպորտ, ստեղծագործական պատմություններ և այլն):
- Հետևեք խմբի ուսումնական կարիքներին և գործընթացներին: Դասընթացավարը կարող է օգտագործել գործարանից ստացված տեղեկությունները մասնակիցներին իրենց ուսուցման ընթացքում ուղղորդելու համար:
- Միջանկյալ գնահատման ընթացքում օգտակար կարող է լինել անդադադառնալ մինչ այս տեղի ունեցած ուսուցման գործընթացին և համապատասխանաբար հարմարեցնել առաջիկա գործողությունները:

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱՉԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐՈՂՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2

**YOUTHPASS ՕԿՏԱ-ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՑԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՈՒԹՈՏՆՈՒԿԻ 3D ՄՈՂԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՏՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Տալ հիմնական տեղեկություններ ուսուցման կարողությունների և Youthpass-ի մասին
- Տրամադրել տարածք՝ երիտասարդական ծրագրի շրջանակում իրենց ուսուցմանը անդրադառնալու և վերլուծելու համար:



ԽՈՒՄԲ

- Ցանկացած



ԻՆՉԷ  
ԱՆՉՐԱԺԵՇՏ

**Տարածք**

- Մեծ սենյակ օկտա-կարողությունների 3D մոդելը (ուֆոտնոկը) տեղադրելու համար:
- Հանդիպումների տարածք, որպեսզի յուրաքանչյուր զույգ աշխատի ուսուցման արդյունքների վրա



ԺԱՄԱՆԱԿ

- 90 րոպե

**Նյութեր՝**

- Ֆլիպչարթ (ուֆոտնոկ կառուցելու համար)
- Կաշուն ժապավեն
- Երեք կարմիր թղթե նշաններ՝ գիտելիքներ, հմտություններ, մոտեցումներ
- Ութ կանաչ նշաններ՝ ութ բանալի կարողություններով
- Մարքերներ
- Կաշուն թերթիկներ
- Համակարգչային սարքավորումներ (համակարգիչ, պրոյեկտոր և ինտերնետի հասանելիություն) Youthpass կայքը և ռեսուրսները ցուցադրելու համար:
- Youthpass հավաստագրերի օրինակների տպագիր տարբերակներ

**Նախապատրաստում՝**

- Աթոռը գլխիվկայր դրեք մեկ այլ աթոռի վրա:
- Վերևից աթոռը փաթաթեք ֆլիպչարթի թղթով՝ ուֆոտնոկի գլուխը սարքելու համար:
- Կտրեք նույն երկարությամբ ութ թղթե շերտ՝ ուֆոտնոկի ութ թևերը սարքելու համար:
- Ութ թղթե շերտերը փակցրեք գլխի ստորին հատվածին:
- Նկարեք ուֆոտնոկի դեմքը և այլ հատկանիշներ (սիրտ, գույներ և այլն):



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՆԱԳՆԵՐ

- Տեղադրեք 3D ուֆոտնոկը սեմինարի սենյակում:
- Մասնակիցներին ներկայացնեք կարողությունների հասկացությունը՝ բացատրելով կարողության երեք տարրերը՝ գիտելիքներ, հմտություններ և մոտեցումներ:
- Տեղադրեք կարմիր թղթի կտորները «գիտելիքներ, հմտություններ և մոտեցումներ» վերնագրերով համապատասխանաբար գլխին, ձեռքերին և սրտին ու բացատրեք, թե ինչու գիտելիքները կապված են գլխի/ուղեղի հետ, հմտությունները կապված են գործողությունների հետ և հետևաբար, պատկանում են ձեռքերին, իսկ մոտեցումները կարելի է գտնել սրտում՝ արժեքների և հույզերի հետ միասին:


ԲԱՅԱՆԱՅՏՈՒՄ և ՓԱՏՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՎԱՐՈՂԻ ԴԵՐԸ

- Տեղադրեք բանալի կարողությունները ներկայացնող ութ կանաչ նշանները յուրաքանչյուր թևի վրա:
- Խնդրեք մասնակիցներին զույգերով կամ փոքր խմբերով քննարկել, թե ինչ ուսուցման արդյունքների կարելի է հասնել ութ առանցքային կարողությունների մասով:
- Խնդրեք նրանց գրել ուսուցման արդյունքները կաշուն թերթիկների վրա և փակցրեք դրանք ութստունովի այն թևին/կարողությանը, որին այն կարող է պատկանել: Ժամանակ տրամադրեք բացատրությունների և կաշուն թերթիկները կարդալու համար:
- Կարդալուց հետո ամփոփեք թևերի վրա փակցված կաշուն թերթիկները և, անհրաժեշտության դեպքում, տվեք հարցեր ու պարզաբանումներ:
- Խրախուսեք մասնակիցներին ծանոթանալ այլ մասնակիցների նախագծերին կամ փորձին, անել առաջարկություններ և տալ հարցեր:
- Վերջապես, ներկայացրեք Youthpass -ի տեխնիկական ասպեկտները՝ «որտե՞ղ, ի՞նչ, ինչպե՞ս և ինչու՞» առանձնահատկությունները տարբեր գործողությունների համար: Առկայության դեպքում, օգտագործեք համակարգիչներ [Youthpass.eu](http://Youthpass.eu) վեբ էջը ցուցադրելու համար կամ բաժանեք Youthpass հավաստագրի նմուշներ:
- Ժամանակ տրամադրեք հարցերի և պատասխանների համար:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Արդյո՞ք օգտակար էր հասկանալը, թե ինչ են կարողությունները:
- Բացատրեք, թե ինչու որոշեցիք ձեր կաշուն թերթիկը փակցնել տվյալ «թևի» վրա (նշեք կարողության անվանումը):
- Արդյո՞ք հեշտ էր որոշել թե ո՞ր կունկրես թևին փակցնել:
- Արդյո՞ք կար մեկից ավելի տարբերակ ձեր կաշուն թերթիկներից որևէ մեկի համար:
- Արդյո՞ք դա կարող է կապված լինել այլ կարողությունների հետ: Բացատրեք:



ԿԱՐՏԱՐԵՑՈՒՄ

Կարողությունները բացատրելու համար օգտագործվող 3D մոդելը հարմար է զգայական խոչընդոտներ կամ տեսողության խանգարումներ ունեցող մարդկանց համար: Այն օգտակար է ութ կարողությունների հայեցակարգը նույն լեզվին չտիրապետող կամ բավական լավ չտիրապետող երիտասարդներին տեսողական և մատչելի կերպով ներկայացնելու համար:



ԽՈՐՀՈՒԴՆԵՐ

Քանի որ բոլոր թևերը նույն տեսքն ունեն, կարող է օգտակար լինել դրանք տարբերել՝ օգտագործելով ութ տարբեր գույներ, նախշեր, նկարներ, պատկերակներ և այլն:

Ստեղծվել է Santa Grinberga և Ieva Grundsteine կողմից՝ Լատվիայի ԱԳ երիտասարդական փոխանակման համակարգողների վերապատրաստման դասընթացի համար:

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐՈՂՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3

ԻՆՉ Ե YOUTHPASS-Ը

YOUTHPASS-Ը՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԸ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ներկայացնել Youthpass-ը
- Աջակցել խմբին ոչ ֆորմալ ուսուցման վերաբերյալ պատկերացում կազմելու հարցում
- Տրամադրել օգտակար աղյուսակ, որը նրանք կարող են օգտագործել ամենօրյա գործունեության մեջ



ԽՈՒՄԲ

- Առավելագույնը 25 մարդ



ԻՆՉ Ե  
ԱՆՉՐԱԺԵՇՏ

- Գնահատման աղյուսակ (տպագիր)
- Գրիչներ
- Համակարգիչ, պրոյեկտոր և ինտերնետի հասանելիություն՝ Youthpass-ի կայքը և առցանց ռեսուրսները ցուցադրելու համար:



ԺԱՄԱՆԱԿ

- 60-90 րոպե.



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՆԱԳՆԵՐ

Մեթոդը նկարագրված է ԵԿԾ ժամանումից հետո անցկացվող ուսուցման համատեքստում:

Youthpass-ի ներկայացում խմբին.

« Սա գործիք է ճանաչելու այն ուսուցումը, որը ձեռք է բերվել մասնակցելով Եվրոպական համերաշխության կորպուսի կամավորական ծրագրին: Այն բացահայտում է ոչ ֆորմալ ուսուցումը: Youthpass-ն օգնում է ձեզ հետևել և նկարագրել, թե ինչ եք արել ձեր կամավորական ծրագրում: Այն օգնում է ձեզ կապակցել սովյալ ուսուցումը մի շարք կարողությունների հետ: Մենթորները հետևում և օգնում են դյուրացնել կամավորի ուսումնական գործընթացը: Այն օգնում է սահմանել հստակ և հասանելի ուսումնական նպատակներ: Youthpass-ի միջոցով դուք կարող եք գրանցել ուսուցումը ձեր համար նախընտրելի ձևով: Դա կարող է լինել նաև միջոց՝ միջոցառման ընթացքում կանոնավոր ընդմիջումներով ձեր ուսուցման մասին մտորելու համար»:

Խմբին խնդրեք մտազրոհ (բրեյնսթորմինգ) անել՝ ուսուցումը գրանցելու ուղիներ գտնելու համար: Այնուհետև ցույց սովեք նրանց, թե ինչպես են նախորդ կամավորները գրանցել իրենց ուսուցումը, օրինակ՝ բլոգ, մատյան, լուսանկարների ալբոմ և այլն:

Ներկայացրե՛ք և բացատրե՛ք «ոչ ֆորմալ ուսուցում» (ՈՖՈՒ) եզրույթը:

«Ի՞նչ է ոչ ֆորմալ ուսուցումը: Ոչ ֆորմալ ուսուցումը կամավոր է, աջակցվում է ուրիշների կողմից և պլանավորվում է»:

Խումբը բաժանեք ավելի փոքր խմբերի և խնդրեք նրանց մտազրոհ անել՝ գտնելու իրենց կյանքում ոչ ֆորմալ ուսուցման օրինակներ: Այնուհետև զեկուցեք այդ մասին ամբողջ խմբին:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՍԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏՍԱՏՈՐԻ ԴԵՐԸ

Սկսե՛ք խմբային քննարկում ՈՖՈՒ բաղադրիչների մասին, մասնավորապես՝ ուսուցման գրանցման և գնահատման համար ժամանակ գտնելու կարևորության: Խնդրեք խմբին մտածել թե ինչ են ցանկանում սովորել իրենց փորձից: Ընդհանուր թեմաներից տարեք կոնկրետ թեմաների: Մասնակիցներին որոշ ժամանակ տրամադրեք սկզբում ինքնուրույն մտածելու համար, այնուհետև խնդրեք նրանց զուգ կազմել մեկ այլ մասնակցի հետ՝ կիսվելու իրենց մտքերով: Վերջին փուլում կրկին համախմբեք բոլորին մեծ խմբում և ընդհանուր քննարկման ընթացքում ներկայացրեք և ամփոփեք եզրակացությունները:

Ներկայացրե՛ք «ուսուցման գնահատում» թերթիկը (տե՛ս ստորև բերված առձեռն նյութը): Խնդրեք մասնակիցներին լրացնել այս թերթիկը (ինքնուրույն): Եթե նրանք ԵԿԾ-ում են արդեն մի քանի շաբաթ, ապա նրանք կարող են օրինակներ բերել այդ փորձից: Եթե նրանք նոր են ժամանել, ապա կարող են օրինակներ բերել իրենց կյանքի փորձից:

Հարցրե՛ք խմբին՝ արդյոք աղյուսակն օգտակար էր նրանց համար, ինչու?: Հարցրե՛ք արդյոք որևէ կամավոր կցանկանար իր գրածով կիսվել ավելի մեծ խմբի հետ:

Բացատրե՛ք Youthpass-ի գործընթացը պարզ և հակիրճ կերպով: Միջանկյալ գնահատման ընթացքում ավելի շատ ժամանակ կլինի Youthpass-ն ավելի մանրամասն ներկայացնելու համար: Նշե՛ք, որ նրանց մենթորը կլինի նրանց ուցեկցողը և ցույց տվեք, որ նրանք կարող են ներբեռնել լրացուցիչ նյութեր Youthpass-ի վերաբերյալ [Youthpass.eu](http://Youthpass.eu)-ից:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Դուք կարող եք հարմարեցնել աղյուսակը տարբեր համատեքստերին՝ այն թարգմանելով տեսողական լեզվով կամ համատեղելով այն «Ուսուցման գործարան» վարժության հետ:
- Թեև այս վարժությունն ի սկզբանե նախատեսված է եղել ԵԿԾ ծրագրերի համար, աղյուսակը կարող է օգտագործվել ցանկացած ինքնագնահատվող ուսուցման համար (առանց մենթորի, քույրի կամ երիտասարական առաջնորդի): Այն կարող է նաև հեշտությամբ հարմարեցվել այլ միջոցառումների, ինչպիսիք են վերապատրաստման դասընթացները կամ երիտասարդական փոխանակումները:



ՄՈՁԵՐՆ  
ՆՅՈՒԹԵՐ

ՈՒՍՈՒՅՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄՏՈՐՈՒՄ

|  |  |
|--|--|
| → <b>Ի՞նչ սովորեցի</b>   |  |
| → <b>Ինչպե՞ս սովորեցի դա</b>   |  |
| → <b>Ո՞ւմ հետ սովորեցի</b>   |  |
| → <b>Ե՞րբ դա սովորեցի</b><br>(Բացահայտումների պահեր)                                     |  |
| → <b>Բանալի կարողություն</b><br>(օգտագործել միայն վերջին փուլում,<br>սկզբում չցուցադրել) |  |

**ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

|   |  |
|---|--|
| <p>→ <b>Ի՞նչ եմ ուզում սովորել</b></p>  |  |
| <p>→ <b>Ինչպե՞ս եմ սովորելու դա</b></p>   |  |
| <p>→ <b>Ո՞ւմ հետ եմ սովորելու դա</b></p>  |  |
| <p>→ <b>Ե՞րբ եմ սովորելու դա</b><br/>(Սահմաններ ժամանակացույց<br/>ուսուցման համար)</p>            |  |
| <p>→ <b>Բանալի կարողություն</b><br/>(օգտագործել միայն վերջին փուլում,<br/>սկզբում չցուցադրել)</p> |  |

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱՉԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐՈՂՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4

## ՇՈՆ ԳԱՌՆՈՒԿԸ՝ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐ

ՀԱՅՏՆԻ ՄՈՒԼՏՇԵՐՈՆՆԵՐԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ՝ ԲԱՆԱԼԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ԵՎ YOUTHPASS ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ:



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Տրամադրել ինչ-որ բան, որը կօգնի բացահայտել հմտությունները
- Օգնել մասնակիցներին կապել կարողություններն ուսուցման արդյունքների հետ
- Աջակցել մասնակիցներին իրենց կյանքի փորձն՝ որպես ուսուցման արդյունքներ վերծանելու հարցում



ԽՈՒՄ

- Նվազագույնը 12 մարդ



ԻՆՉԷ  
ԱՆՏՐԱԺԵՇՏ

- Շոն գառնուկը՝ Սահմաններից դուրս (Shaun the Sheep: Off the Baa!) (2010թ.): Կարելի է գտնել YouTube-ում կամ Amazon-ում
- Ուսուցման հարցաթերթիկների գնահատում
- Համակարգիչ, պրոյեկտոր և ինտերնետի հասանելիություն (կամ DVD նվազարկիչ՝ տեսանյութը ցուցադրելու համար



ԺԱՄԱՆԱԿ

- 90 րոպե



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

### Առաջին մաս (8 րոպե)

Ցուցադրե՛ք Շոն գառնուկի մասին մուլտֆիլմը:

### Երկրորդ մաս (30 րոպե)

Աշխատանքային խմբեր. յուրաքանչյուր խումբ աշխատում է ֆիլմից կոնկրետ կերպարի կարողությունների վրա: Մասնակիցներին խնդրում են նկարել, գրել կամ այլ կերպ գրանցել թե ի՞նչ է կարողությունը (15 րոպե):

- |           |   |                                     |
|-----------|---|-------------------------------------|
| • Խումբ 1 | - | աշխատում է Շոն գառնուկի կերպարի վրա |
| • Խումբ 2 | - | մյուս գառնուկներ                    |
| • Խումբ 3 | - | շուն                                |
| • Խումբ 4 | - | խոզեր                               |

Աշխատանքային խմբերի ներկայացում ընդհանուր քննարկման ժամանակ (15 րոպե):

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԽԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ

**Երրորդ մաս (20 թույլե)**

Ֆասիլիտատորը ներկայացնում է Youthpass-ը և ցկյանս ուսուցման ութ բանալի կարողությունները: Նա մեկ առ մեկ թվարկում է կարողությունները և յուրաքանչյուրից հետո մասնակիցներին հարցնում, թե, նրանց կարծիքով, տվյալ կարողությունն ինչպես է՝

- կապված ֆիլմի հերոսի հետ,
- կապված այն ծրագրի/միջոցառման հետ, որում ներգրավված են մասնակիցները,
- ձեռք բերվել նրանց կողմից:

**Չորրորդ մաս (30 թույլե)**

Մասնակիցներին առաջարկվում է մտորել անհատականորեն կամ զույգերով և գրի առնել, թե ինչի են հասել ծրագրի/միջոցառման ընթացքում՝ օգտագործելով մշտական ուսուցման բանալի կարողությունները:



- Մուլտֆիլմերի օգտագործումը հարմար է կրգնիտիվ/ուսուցման դժվարություններ ունեցող տարբեր ներառական խմբերի համար: Այն օգնում է նրանց բացահայտել կարողությունները «զվարճալի» միջավայրում և կապել դրանք իրենց ուսուցման փորձի հետ:
- Եթե մուլտիմեդիա սարքավորումները հասանելի չեն, կարող եք օգտագործել այլ միջոցներ, ինչպիսիք են մանկական գրքերը (ավելի տեսողական), մանկական պատկերներով քարտերը կամ պատմվածքները:



Ուսումնասիրեք տարբեր ռեսուրսներ Youthpass.eu-ում՝ նախապատրաստվելու համար: Վարժության վերջին քայլը կարող է լինել հասակակիցների հարցազրույցը՝ խրախուսելու հաղորդակցությունը, հարցեր տալը և թեմայի շուրջ մտածելը:

ՇԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՇԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

5

**YOUTHPASS ԿՂԶԻՆԵՐ**

ԹԻՄԱՅԻՆ ԽԱՂ «ԱՆԵԼՈՎ՝ ՍՈՎՈՐԵԼ»՝ YOUTHPASS-Ը ԵՎ ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒԹ ԲԱՆԱԼԻ ԿԱՐՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՇԱՄԱՐ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ներկայացնել ութ բանալի կարողությունները «անելով՝ սովորել» վարժության միջոցով
- Ներկայացնել Youthpass-ը և բարձրացնել դրա մասին իրազեկվածությունը՝ որպես ինքնագնահատման և ոչ ֆորմալ կրթության ճանաչման գործիք



ԽՈՒՄԲ

- Առավելագույնը 24 մարդ



ԻՆՉԷ  
ԱՆՆՐԱԺԵՇՏ

**Տարածք**

- Մեծ սենյակ ութ սեղաններով/տարածություններով, որոնք նման են կղզիների



ԺՄԱՆԱԿ

- 90 րոպե

**Նյութեր՝**

- Youthpass-նավահանգիստների տպագիր պատճեններ (մեկական յուրաքանչյուր խմբի համար)
- Առաջադրանքներով քարտեր (կարողություններ)
- Մեկ ութակողմ զառ
- Գունավոր մարկերներ
- Կաշուն ժապավեն
- Սովարաթուղթ
- Երկու քարտերի կապով
- Քարտերով խաղի հրահանգներով առձեռն նյութ
- Մաթեմատիկական խնդրով առձեռն նյութեր
- Թանգրամ խաղ
- Պլաստիլին
- Թուղթ
- Գունավոր թուղթ
- Սոսինձ
- Կնիք և թանաք (անձնագիրը վավերացնելու համար)
- Մկրատ
- Համակարգիչ
- Համակարգիչ, պրոյեկտոր և ինտերնետի հասանելիություն՝ Youthpass-ի կայքը և առցանց ռեսուրսները ցուցադրելու համար

**Նախապատրաստում**

- Կառուցել յոթ աշխատակայան: Օգտագործեք աղյուսակներ կամ նշագծեք (կաշուն ժապավենի միջոցով) ութ կղզի հատակին, որոնք համապատասխանում են ութ բանալի կարողություններին:
- Տեղադրեք մեկ առաջադրանքի քարտը և անհրաժեշտ նյութերն ու սարքավորումները յուրաքանչյուր կղզում, ինչպես նկարագրված է յուրաքանչյուր առաջադրանքի քարտի վրա:
- Ստեղծեք «անձնագրային հսկողության կետ» (սեղան և աթոռ) վարողի համար, ով կնքելու է Youthpass-նավահանգիստները և օգտագործելու ութակողմանի զառը:

**Մարդիկ**

Երկու ֆասիլիտատորներից մեկը մնում է «անձնագրային հսկողության կետում», իսկ մյուսը ստուգում է տարբեր խմբերը՝ նրանց օգնելու համար: Վերջինս պետք է կարողանա պատասխանել խաղի վերաբերյալ ընթացակարգային հարցերին:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



ՔԱՅԼ ԱՌ-ՔԱՅԼ ՇՐՋԱՆԳՆԵՐ

Խաղի նպատակն է, որ յուրաքանչյուր թիմ ստանա իր «Youthpass-նավահանգիստների» կնիքները՝ հնարավորինս շատ կղզիներ այցելելուց և ութ բանալի կարողություններից յուրաքանչյուրի հետ կապված որոշակի առաջադրանքներ կատարելուց հետո:

- Բաժանե՛ք մասնակիցներին 3-5 հոգանոց խմբերի:
- Խնդրե՛ք յուրաքանչյուր խմբի ընտրել թիմի անուն:
- Տվե՛ք յուրաքանչյուր խմբին մեկական Youthpass-նավահանգիստ:
- Բացատրե՛ք ծաղի նպատակը: Խաղի նպատակն է 45 րոպեի ընթացքում անձնագրում ութ տարբեր կղզու պատկերակներով կնիք ստանալ: Յուրաքանչյուր պատկերակ ներկայացնում է մեկ բանալի կարողություն: Նրանց դեռևս մի ասե՛ք, որ նրանք կարիք չունեն ստանալ բոլոր կնիքները (պահե՛ք սա քննարկման համար):
- Բացատրե՛ք, որ կա անձնագրային հսկողության կետ, որտեղ նրանք կստանան իրենց Youthpass-նավահանգիստների կնիքները, երբ այցելեն կղզի և կատարեն առաջադրանքներից առնվազն մեկը որպես թիմ (յուրաքանչյուր կղզու քարտի վրա կա երեք առաջադրանք): Կնիքը ստանալուց հետո նրանք գլորում են զառը՝ իրենց ճանապարհը շարունակելու համար:
- Մնացե՛ք «անձնագրային հսկողության կետում»՝ կնիքով և զառով:
- Ջառը գլորելուց հետո, նրանք գնում են կղզի այն առաջադրանքի քարտով, որը համընկնում է զառի պատկերակի հետ: Եթե կղզում այլ թիմ կա, նրանք պետք է կրկին գլորեն զառը, մինչև գտնեն դատարկ կղզի, որը նախկինում չեն այցելել:
- Խաղն ավարտվում է, երբ ժամանակը սպառվում է կամ թիմերից մեկը ստանում է ութ կնիք:
- Ընդհանուր քննարկում անցկացրե՛ք մասնակիցների հետ՝ արդյունքների քննարկման համար:
- Արդյունքների քննարկման ընթացքում կենտրոնացե՛ք խաղի վրա և որքանո՞վ է այն համապատասխան մասնակիցների կարողություններին կամ ծրագրին:
- Քննարակե՛ք մասնակիցների հետ, թե ինչպես են ութ կարողությունները կապված Youthpass-ի հետ և ցույց տվե՛ք Youthpass հավաստագրերի նմուշներ՝ կենտրոնանալով կարողությունների մասի վրա (առկայության դեպքում, օգտագործե՛ք համակարգչային սարքավորումներ):



ՔՆՆԱՐԿՈՒՄ

**Բանալի կարողություններ**

- Քանի՞ կնիք եք ստացել:
- Արդյո՞ք կա հաղթող կամ պարտվող:
- Ո՞րն էր այս վարժության նպատակը:
- Արդյո՞ք կարող եք ստանալ բոլոր կնիքները:
- Արդյո՞ք պետք է ստանաք բոլոր կնիքները:
- Արդյո՞ք կնախնտրեիք ավելի երկար մնալ որևէ կղզում:

**Ճանաչում**

- Ինչո՞ւ էր կարևոր «լիազոր մարմիններից» կնիք ստանալը:
- Արդյո՞ք նրանք ստուգել են ձեր առաջադրանքի կատարված կամ չկատարված լինելը:
- Ուշադրություն դարձրե՛ք ինքնագնահատմանը/ուղղորդմանը և ուսուցման գործընթացին:



ՋԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Այս վարժությունը հատկապես հարմար է այն երիտասարդների համար, ովքեր հաճույք են ստանում խաղերի միջոցով սովորելուց և կարող են դժվարություններ ունենալ ավանդական ուսումնական միջավայրում տեսական հասկացությունների ընկալման հարցում:
- Քանի որ առաջին մասն «անելով՝ սովորել» վարժությունն է, այն կարող է հարմարեցվել գրեթե ցանկացած համատեքստի՝ հարմարեցնելով առաջադրանքները՝ ըստ մասնակիցների կարիքների (գրելու կամ խոսելու փոխարեն նկարել, առաջադրանքներով քարտերը թարգմանել և այլն):



- Քննարկման ընթացքում շատ կարևոր է կենտրոնանալ ուղղորդող հարցերի վրա՝ հստակեցնելու համար, որ իրական խնդիրը մեզ հետաքրքրող կարողությունները ձեռք բերելն է: Անհրաժեշտ չէ ստանալ բոլոր կնիքները, եթե դա չէ մեր նպատակը: Վարժությունը նախատեսված է նաև որպես խումբ կառուցելու վարժություն, և մասնակիցներին պետք է խրախուսել կատարել առաջադրանքները խմբով:
- Այս վարժությունը կապված է «նավապետի մատյան» վարժության հետ, և դրանք կարող են իրականացվել միասին կամ առանձին:
- Youthpass կղզիների վարժությունը կարող է իրականացվել կա՛մ վերապատրաստման դասընթացի սկզբում՝ ներկայացնելու ու՞ր բանալի կարողությունները, կա՛մ վերջում՝ կապելու ուսուցման արդյունքներն բանալի կարողությունների հետ:



ՄԱՆՏ Գործիքակազմից (SALTO Tool Box) ներբեռնման համար հասանելի նյութեր՝

- Youthpass-նավահանգիստների տպագիր պատճեններ
- Առաջադրանքների քարտեր (կարողություններ)
- Ութակողմ զան

<http://www.salto-youth.net/find-a-tool/1223.html>




Competence in mother tongue

1. Say a riddle in your own language and explain it to the others.
2. Find out as a team 3 words that sound similarly and have a similar or different meaning in your own languages.
3. Teach each other the daily greetings in your own language.



Communication in foreign languages

1. Sing a short song or say a poem in language different from yours.
2. Tell the others 5 foreign words you have learned in your hosting country and compare.
3. Get 3 people to say "My name is ..... and I come from....." in a language different from your own and try to pronounce it.



Mathematical competence and basic competence in science and technology:

1. Solve a mathematical problem (handout).
2. Do a Tangram puzzle.
3. Calculate your total free time per week in minutes.



Digital competence:

1. Draw your favourite animal with any available software.
2. Open a new text document and create a table with a list of software that your group members know how to use.
3. Create a formula on a spreadsheet to calculate 70% of the total.



Learning to learn

1. Learn to play a card game together. (deck of cards and handouts with rules)
2. Write a list with 5 things you have learned today and explain how.
3. Tell the people in your group how and where you prefer to learn (learning styles).



Social and civic competence

1. Inquiry about gender issues in other countries and how people deal with them.
2. Agree on a common definition of people with fewer opportunities as a social phenomenon and write it down
3. Learn cultural differences about greeting people (kissing, shaking hands, etc.)




Sense of initiative and entrepreneurship

1. Tell your team about new ideas you implemented during last year and their outcomes.
2. As a team, make a decision about today's free time.
3. Explain what you would like to learn during this project and your contribution.



Cultural awareness and expression

1. Make a figure with cardboard/plasticine about your project.
2. Write a short poem about your project.
3. Make a collage showing your feelings about the project.



ՇԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՇԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 6 ՆԱՎԱԿԵՏԻ ՄԱՏՅԱԼ

ԱՌՁԵՆՆ ԳՈՐԾԻՔ, ՈՐԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԳՐԱՎԻՉ ԵՎ ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑ ՇԵՏԱԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ՝ ԸՍՏ ՈՒԹ ԲԱՆԱԼԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Տրամադրել գործիք՝ ընթացիկ ուսուցման գործընթացի մասին մտորելու և դրան հետևելու համար
- Ներկայացնել Youthpass-ը և բարձրացնել դրա մասին իրազեկվածությունը՝ որպես ՈՖՈՒ ինքնագնահատման և ճանաչման գործիք



ԽՈՒՄԲ

- Անհատական



ԻՆՉԷ  
ԱՆՏՐԱԺԵՇՏ

- Նավապետի մատյանի գրքույկի տպագիր տարբերակներ (մեկական յուրաքանչյուր մասնակցի համար)
- Գրիչներ



ԺԱՄԱՆԱԿ

- Մեկնման օր՝ 45ր
- Նավահանգիստներ՝ 20 րոպե/աշխատաշրջան
- Ժամանման օր՝ 45ր



ՔԱՅԼԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՆԱԳՆԵՐ

Նավապետի մատյանի ամսաթվերի տողը բաժանված է «նավահանգիստների», որոնք համապատասխանում են միջոցառման յուրաքանչյուր օրվան կամ փուլին՝ այս հատուկ ճամփորդության ուսուցման արդյունքներին հետևելու համար:

### Մեկնման օր (45 րոպե)

- Ներկայացնել միջոցառումը մասնակիցներին (25 րոպե).  
«Դուք ձեր սեփական նավի նավապետն եք այս ուսումնական ճամփորդության ընթացքում, և այս մատյանը նախատեսված է ձեզ համար, որպեսզի գրի առնեք այն, ինչ սովորում եք ամեն օր: Youthpass-ի ձեր կողմնացույցը կօգնի ձեզ նավարկել ճամփորդության ընթացքում և որոշել ձեր վերջնական նպատակակետը: Ձեր նախագիծը հիմնված է ոչ ֆորմալ ուսուցման վրա, և որպեսզի այն գնահատվի ձեր Youthpass-ում, դուք պետք է գնահատեք ձեր կարողությունները ձեր ճամփորդության առաջ, դրա ընթացքում և դրանից հետո:  
Դուք կայցելեք տարբեր նավահանգիստներ ձեր ուսումնական երթուղու վրա և շատ կարևոր է, որ դուք, որպես նավապետ, նշումներ անեք և օգտագործեք ցուցիչներ: Ծանալարհորդության ավարտին, կարող եք նայել ձեր կողմնացույցին և մատյանին՝ տեսնելու, թե որտեղ և ինչպես է հասել ձեր ուսումնական բեռը»:
- Յուրաքանչյուր մասնակցի բաժանեք նավապետի մատյանի մեկական օրինակ:
- Բացատրե՛ք, թե ինչպես օգտագործել նավապետի մատյանը և ժամանակ տրամադրեք հարցերի և մեկնաբանությունների համար:
- Խմբին զգուշացրե՛ք, որ յուրաքանչյուր «մուտքի նավահանգիստում» նրանք ժամանակ կունենան աշխատելու իրենց ուսուցման արդյունքների վրա՝ օգտագործելով նավապետի մատյանը: Նրանք կարող են գրի առնել նախադասություններ, բառեր, նկարել, կտրել և սոսնձել պատկերներ և այլն: Նշե՛ք, որ մատյանն անձնական է և նախատեսված չէ որպես մի բան, որին կարող է հասանելիություն ունենալ դասընթացավարը:
- Հստակեցրե՛ք, որ գնահատման ընթացքում մասնակիցները հավաքելու և ամփոփելու են իրենց մատյանների ամենակարևոր մասերը, ու դրանք իրենց անձնական տվյալների հետ միասին ուղարկելու համակարգողին՝ իրենց Youthpass հավաստագրեր տրամադրելու համար:

ԲԱՅԱՆԱՅՑՈՒՄ ԵՎ ՓԱՏՆԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԽԼԻՏԱՑՈՐԻ ԴԵՐԸ

- Այնուհետև տվեք նրանց ժամանակ (20 րոպե) իրենց ուսուցման արդյունքների վերաբերյալ անհատականորեն մտորելու համար: Դասընթացավարը կամ մենթորը պետք է հասանելի լինեն՝ պարզաբանումներ և աջակցություն տրամադրելու համար:

**Նավահանգիստ Մեկ և Նավահանգիստ Երկու (անհրաժեշտության դեպքում ավելացրեք ավելի շատ «նավահանգստի» էջեր)**

- Ինչպես և մեկնման օրվա վարժությունների դեպքում, նրանց տվեք ժամանակ (20 րոպե) յուրաքանչյուր օրվա կամ միջոցառման փուլի ավարտին իրենց ուսուցման արդյունքների վերաբերյալ անհատականորեն մտորելու համար: Դասընթացավարը կամ մենթորը պետք է հասանելի լինեն՝ պարզաբանումներ և աջակցություն տրամադրելու համար:
- Ստուգեք մասնակիցների ուսումնական ձեռքբերումները՝ անհատապես կամ խմբով:

**Ժամանման օր (45 րոպե)**

- Ծրագրի կամ միջոցառման ավարտից հետո մասնակիցներին տրամադրե՛ք ժամանակ (10 րոպե) մտորելու համար:
- Տրամադրե՛ք լրացուցիչ ժամանակ դասընթացավարի և մասնակիցների միջև անհատական քննարկումների համար:
- Խնդրե՛ք մասնակիցներին ամփոփել իրենց անհատական ուսուցման արդյունքները և գրի առնել դրանք մատյանի «ժամանում» էջում (20 րոպե):
- Տրամադրե՛ք հստակ ցուցումներ Youthpass-ի հավաստագրերի համար վերջնական մանրամասներ ուղարկելու վերաբերյալ և սահմանե՛ք տեղեկատվության ստացման վերջնաժամկետ: Կազմակերպիչները կարող են տրամադրել առցանց ձև՝ հավաստագրերի համար անհրաժեշտ բոլոր դաշտերով (օրինակ՝ Google Փաստաթղթեր (Google Docs)), կամ մասնակիցներին տրամադրե՛ք ձևանմուշ՝ լրացնելու և էլ. փոստով ուղարկելու համար:
- Տրամադրե՛ք վերը նշված տեղեկատվությունը մասնակիցներին տպագրի ձևով կամ էլ. փոստով (որպես առձեռն նյութ), համապատասխան հղումներով կամ ձևանմուշներով:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Սահմանափակ լեզվական հմտություններ կամ կրթական դժվարություններ ունեցող մարդիկ նույնպես կարող են օգտագործել նավապետի մատյանը, քանի որ նրանք կարող են արտահայտվել այլ միջոցներով, ինչպիսիք են գծանկարները, կոլաժները, պատկերները և այլն:
- Այս վարժությունը հիմնականում ուսումնական ճամփորդության օրագիր է և կարող է հարմարեցվել կամ օգտագործվել գրեթե ցանկացած համատեքստում: Այն կարող է նաև թարգմանվել տարբեր լեզուներով կամ վերածվել առցանց հավելվածի (նավապետի մատյան)՝ այն ավելի գրավիչ և էկոլոգիապես անվնաս դարձնելու համար:



ԽՈՐՀՈՒԴԴՆԵՐ

Ամաթվերի տողում նշված օրերը կամ նավահանգիստ մուտքերը օրացուցային օրեր չեն և պետք է ընկալվեն որպես փուլեր կամ էտապներ: Օրինակ, վերապատրաստման դասընթացի ընթացքում մատյանում մեկ օրը կարող է համապատասխանել մեկ դասընթացի օրվան: Այնուամենայնիվ, ավելի երկար միջոցառումների ընթացքում, ինչպիսին է կամավորական նախագիծը կամ երիտասարդական նախաձեռնությունը, նավապետի մատյանում ամաթվերը կարող են լինել որոշակի փուլեր, շաբաթներ կամ ամիսներ՝ կախված ծրագրի տևողությունից:

Միջոցառման յուրաքանչյուր օրվա/փուլի վերջում պետք է ժամանակ հատկացվի մասնակիցներին աշխատելու իրենց նավապետի մատյանում: Այն պետք է ներառվի միջոցառման մեջ՝ մասնակիցներին մոտիվացնելու համար:



Նավապետի մատյանը ներդրվել է ԵԿԾ՝ ծրագիրը հյուրընկալող կազմակերպությունների կողմից՝ իրենց կամավորներին տրամադրելու իրենց ուսուցման արդյունքներին հետևելու և դրանք գրանցելու գործիք:



ՆԱԿԱՊԵՏԻ ՄԱՏՅԱՆ ԳՐԹՈՒՅԿ

Նյութը հասանելի է ներբեռնման համար ՍԱԼՏՈ Գործիքակազմից՝

[www.salto-youth.net/find-a-tool/1223.html](http://www.salto-youth.net/find-a-tool/1223.html)



## My Competences

- 1. Communication in mother tongue**  
How effectively have I used my own language?  
What opportunities have I had to use it?
- 2. Communication in foreign languages**  
How well have I coped using my host country's language?  
What difficulties did I have and how did I overcome them?
- 3. Mathematical competence and basic competence in science and technology**  
What sort of problems have I faced and how have I solved them?  
When have I used my number skills?
- 4. Digital competence**  
What information sources did I use to prepare myself for this project?  
Did I use computers and the internet before the project?  
Did I learn anything about the use of computers in other countries?
- 5. Learning to learn**  
What were my goals before the project and did I achieve them?  
Which activities do I find the most out of?  
How will I use what I have learned?
- 6. Social and civic competence**  
What have I learned about other cultures?  
What have I been successful in communicating with others?  
What have I done to resolve any conflicts within the group?
- 7. Sense of initiative and entrepreneurship**  
When have I turned ideas into actions?  
Have I taken any risks and what have I learned from them?
- 8. Cultural awareness and expression**  
How willing was I to get involved with different cultures?  
What cultural differences have I learned between my sending and hosting countries?

LIFELONG LEARNING ACTIONS  
inter-accion.org  
INTERNATIONAL MOBILITY

(CC) 2010 - Juan Ratto-Nielsen

## Dateline: Departure

1. Communication in mother tongue
2. Communication in foreign languages
3. Mathematical competence and basic competence in science and technology
4. Digital competence
5. Learning to learn
6. Social and civic competence
7. Sense of initiative and entrepreneurship
8. Cultural awareness and expression

(CC) 2010 - Juan Ratto-Nielsen

## Dateline: Departure

### My Youthpass Compass

Everyday, you can assess your learning outcomes with this compass to know your strongest competences and the ones you would like to improve. (0 is the lowest score and 5 is the highest one).

LIFELONG LEARNING ACTIONS  
inter-accion.org  
INTERNATIONAL MOBILITY

(CC) 2010 - Juan Ratto-Nielsen

ՀԵՏԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ, ՈՐԸ ԿՕԳՆԻ ՄԱՐԿԿԱՆՑ ԽՈՍԵԼ ԻՐԵՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՒՐՋ ԵՎ ԽՈՐՔԱՅԻՆ ՁԵՎՈՎ:



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Բարձրացնել իրազեկվածությունը և մտորել սեփական ուսուցման վերաբերյալ
- Կիսվել ուսումնական փորձով և փոխանակել այն
- Հետազոտել ապագա ուսուցումը



ԽՈՒՄԲ

• 6-40 հոգի



ԻՆՉԷ  
ԱՆՀՐԱԺԵՇՏ

- Հարցազրույցի ուղեցույց բոլոր մասնակիցների համար
- Թույլ և գրիչներ
- Ֆլիպչարտի թույլթ (մեկ թերթիկ յուրաքանչյուր մասնակցի համար)
- Մարկերներ"



ԺԱՄԱՆԱԿ

• 2-3 ժամ



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՀԱՆՎՆԵՐ

Մասնակիցներին ներկայացվում են վարժության նպատակները և յուրաքանչյուրը ստանում է հարցազրույցի ուղեցույցի պատճենը: Հստակեցրե՛ք, որ ուղեցույցի ոչ բոլոր հարցերը պետք է օգտագործվեն: Հարցերի նպատակն է օգնել հարցազրուցավարին և, անհրաժեշտության դեպքում, առաջարկել գաղափարներ հետագա հարցերի համար: Դրանք պետք է դիտվեն որպես ոգեշնչման աղբյուր: Հարցազրուցավարը կարող է ավելացնել այլ հարցեր: Հարցազրույցի հիմնական նպատակն է օգնել զրուցակիցներին մտորել իրենց ուսուցման մասին:

Բաժանեք խումբը երեք հոգանոց փոքր խմբերի: Նախատեսվում են երեք տարբեր դերեր հարցազրուցավար, զրուցակից և թղթակից: Վարժությունների ընթացքում դերերը փոխվում են, և բոլորը լինում են: Թղթակիցը գրի է առնում հարցազրույցի հիմնական գաղափարները, բայց այնպես, որ զեկույցն իմաստ ունենա այն հետագայում կարդացողների համար:

Մեկ հարցազրույցը տևում է առնվազն 20 րոպե:

Հարցազրույցների զեկույցները հասանելի են դառնում ամբողջ խմբին (օրինակ՝ պատի վրայի ֆլիպչարթերում, մատյանում և այլն):

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՍԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐՎԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երեք հարցազրույցների վերջում տեղի է ունենում կարճ քննարկում երեք հոգուց բաղկացած փոքր խմբերով՝

- Ինչպե՞ս էին երեք տարբեր դերերը ձեզ համար:
- Ի՞նչն էր զարմանալի:

Ավելի մեծ խմբում կարող են տրվել հետևյալ հարցերը՝

- Ինչպե՞ս էր հարցազրույց տալը:
- Ինչպե՞ս էր հարցազրույց վերցնելը:
- Ինչպե՞ս էր զեկուցելը:
- Ի՞նչ իմացաք ձեր սեփական ուսուցման մասին:
- Ի՞նչ իմացաք ուրիշների ուսուցման մասին:
- Որո՞նք էին զարմանալի տարբերությունները կամ նմանությունները:
- Արդյո՞ք նոր գաղափարներ ստացաք ձեր ապագա ուսուցման համար: Միգու՞ցե այլ ուղիներ, մեթոդներ և այլն:
- Ինչպե՞ս վարժությունն օգնեց ձեզ:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

• ԵԿԾ ծրագրերում մենթորը կարող է օգտագործել հարցազրույցի ուղեցույցը կամավորների հետ նրանց ուսուցման վերաբերյալ զրույց կառուցելու համար:

• Վարժությանը կարող եք նաև դիտորդ ավելացնել (չորրորդ դեր): Նա կարող է կարծիք հայտնել հարցազրույցավարին՝ հարցեր տալու ոճի և որակի վերաբերյալ: Սա լրացուցիչ հարթություն է ավելացնում վարժությանը, ինչը կարող է օգտակար լինել որոշ խմբերի համար:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ուսումնական հարցազրույցը հաճախ հանգեցնում է շատ անձնական քննարկումների: Ձեր ուսուցման մասին խոսելը շատ նման է ձեր մասին խոսելուն: Որոշ խմբերում լավ կլինի մասնակիցներին տեղեկացնել այս մասին նախքան հարցազրույցը սկսելը: Այս իրազեկվածությունը կարող է օգնել նրանց կատարել գիտակցված ընտրություն հարցազրույցի ընթացքում: Միևնույն ժամանակ, այս անհատական տարրը նույնպես մեթոդի ուժեղ կողմերից է: Անձնական վերշուժությունը խրախուսվում է:

Հարցազրույցների զեկույցներն արժեքավոր փաստաթղթեր են: Եթե դրանք կիսվում են խմբի հետ, դա հնարավորություն է տալիս շարունակել քննարկումը: Այն թույլ է տալիս մասնակիցներին շարունակել զրուցել այն մարդկանց հետ, ովքեր իրենց փոքր խմբում չէին: Հետագայում հարցազրույցները կարող են կրկին անցկացվել՝ տեսնելու, թե ինչպես են փոխվել հեռանկարները:



ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԼԻՆԵԼ ՍՈՎՈՐՈՂ

ՁԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՊԼԱՆԱՎՈՐԵԼԸ

- Ինչպե՞ս կրնույթագրեք «լինել սովորող» եզրույթը:
- Արդյո՞ք, ընդհանուր առմամբ, զգում եք ձեզ սովորող:
- Որո՞նք էին «սովորող լինելու» դրական արդյունքները:
- Արդյո՞ք «սովորող լինելը» գիտակցված ընտրություն էր: Ինչպե՞ս:
- Ինչպե՞ս դա դրսևորվեց ձեր մոտեցումներում և գործողություններում:
- Որքանո՞վ էիք ձեզ որպես սովորող տեսնում այս միջոցառման մեջ:

Որքանո՞վ է ուսուցումը պլանավորման ենթակա ձեզ համար:


Ի՞նչը կամ ո՞վ կարող էր օգնել ձեզ ավելի լավ պլանավորել ձեր ուսուցումը:

Արդյո՞ք ձեր ուսուցման ավելի մանրակրկիտ պլանավորումը կօգնի ձեզ:

Արդյո՞ք հստակ էիք այն հարցում, թե ինչ էիք ցանկանում սովորել այս նախագծում:

- Եթե ոչ, ապա ինչո՞ւ ոչ:
- Աթե այո, ապա ինչպե՞ս:

- Արդյո՞ք պարզապես «բաց էիք սովորելու համար»:
- Թե՛ ավելի շատ ուղղության կարիք կար:
- Արդյո՞ք սահմանել էիք նպատակներ:



3

**ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՐ  
ՃԱՆԱԴԱՐՆԸ**

**ՁԵՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**



- Արդյո՞ք ձեր ուսուցման ազդեցությունն այն էր, որ դուք ստացաք պատասխաններ, ավելի շատ հարցեր, կամ գուցե երկուսն էլ:
- Արդյո՞ք պլանավորել եք հետագա ուսուցումը: Ինչպե՞ս:
- Արդյո՞ք կիսվել եք ձեր ուսուցմամբ ձեր կազմակերպության այլ անձանց հետ: Ի՞նչ եղանականով:
- Արդյո՞ք սկզբից մտածել և գնահատել եք: Ինչպե՞ս:
- Արդյո՞ք անմիջապես կիրառել եք այն, ինչ սովորել եք:

**ՁԵՐ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ**



- Ի՞նչ կցանկանայիք ավելացնել ձեր «ուսուցման խաղացանկում»:
- Արդյո՞ք գոհ եք, թե ինչպես եք սովորում:
- Ի՞նչն է քեզ համար սովորելը դարձնում դրական փորձառություն:
- Ինչպե՞ս եք լավագույնս սովորում:



Ատեղծվել է Mark Taylor և Paul Kloosterman, Ձեռնարկ վարողների համար: Սովորում ենք ինչպես սովորել գործնականում, [www.learning2learn.eu](http://www.learning2learn.eu)

ՇԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ՇԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱՉԵԿԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

8

**ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՈՎ**

ԴԻՆԱՄԻԿ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ԴՐՊՈՒՄ Է ՍԱՐԴԱԿԱՆՑ ՄՏԱԾԵԼ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՆՐԱՆՔ ՄԻՆՉ ԱՅԺՄ ՍՈՎՈՐԵԼ ԻՐԵՆՑ ԿՅԱՆՔՈՒՄ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Մտորել կյանքում կարևոր ուսուցման պահերի մասին
- Իրազեկ լինել, թե ինչ և ինչպես եք սովորել
- Կիսվել և համեմատվել ուրիշների հետ



ԽՈՒՄԲ

- Ցանկացած



ԻՆՉԷ  
ԱՆՉՐԱԺԵՇՏ

- Մեծ թղթի կտոր յուրաքանչյուր մասնակցի համար
- Մարկերներ, մատիտներ, ներկ
- Գունավոր թուղթ
- Սոսինձ
- Մկրատ



ԺԱՄԱՆԱԿ

- 2-3 ժամ



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՇՐՎԱՆԱԳՆԵՐ

Մասնակիցներին ներկայացրեք վարժության նպատակները և վերցրեք մեծ թուղթ ու գրիչներ, մատիտներ և ջրաներկ: Խնդրեք մասնակիցներին վերհիշել իրենց կյանքը և մտածել այն ժամանակների կամ իրադարձությունների մասին, երբ նրանք իսկապես զգացել են, որ ինչ-որ բան են սովորել: Այս մտորման արդյունքները պետք է վերջում պատկերվեն թղթի վրա՝ օգտագործելով ծովը հատելու փոխաբերությունը: Օգտագործեք օրինակներ, ինչպիսիք են՝ նավակները, կղզիները, տարբեր հոսքերը, քամին, ձուկը, որոնք կարող են օգնել փոխաբերություն ստեղծել: Նրանց տրվում է կես ժամ դա անելու համար:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երկու կամ երեք հոգուց բաղկացած փոքր խմբերում մարդիկ կարող են իրենց ծովի մասին կիսվել այնքան տեղեկատվությամբ, որքան ցանկանում են: Խնդրեք մասնակիցներին պարզել, թե արդյոք կան նմանություններ կամ մեծ տարբերություններ այն հարցում, թե ինչ և ինչպես են նրանք սովորել:

Փոքր խմբերում մտորելուց հետո մասնակիցները կրկին միանում են հիմնական խմբին: Քննարկումը շարունակելու համար կարելի է տալ հետևյալ հարցերը՝

- Ինչպե՞ս էր այս փոխաբերությունը ձեր ուսուցման առումով օգտագործելը:
- Ի՞նչն էր ամենադժվարը ձեր ամենակարևոր ուսումնական պահերը գտնելու հետ կապված:
- Արդյո՞ք որևէ զարմանալի բան պարզեցիք ձեր անձնական մտորման ընթացքում:
- Որո՞նք էին նմանությունները և որո՞նք էին տարբերությունները, երբ կիսվում էիք ձեր «գետով»:

ԲԱՅԱՆԱՅՑՈՒՄ ԵՎ ՓԱՏՆԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Մասնակիցները կարող են փորձարկումներ անել տարբեր տեսակի նյութերի հետ, ինչպիսիք են խաղային խմորը, օրիգամին, Լեգոյի խորանարդիկները և այլն՝ ստեղծելու խոչընդոտներ, շեղումներ, կերպարներ և տրանսպորտային միջոցներ՝ դրանով իսկ հարմարեցնելով վարժությունն ավելի ինտերակտիվ միջավայրին:
- Այս գործիքը կարող է հարմարեցվել ցանկացած այլ ձևի կամ իրավիճակի: Ծովը կարող է դառնալ ուսումնական ուղի, ուսման գետ, ուսման ճանապարհ, ուսման ծառ կամ նույնիսկ արկածային տեսախաղ՝ խոչընդոտներով, մարտահրավերներով և դժվարության տարբեր մակարդակներով:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Կախված սովորողների խմբից՝ հնարավոր է անհրաժեշտ լինի անդրադառնալ թղթի վրա ինչ-որ բան նկարելու և այն մյուսների հետ կիսվելու հարցին: Որոշ մարդիկ կարող են անհարմար զգալ նկարելուց: Մյուսներն իրենց այնքան ստեղծագործ չեն համարում, որ իրենց մտածողությունը վերածեն նկարազարդ փոխաբերության: Կարևոր է վերացնել այդ վախերը: Երբեմն կարող է օգնել մեկ կամ երկու օրինակ ցույց տալը:

Մասնակիցների համար «զարմանալի» տարրերից մեկը հաճախ այն է, որ նրանց սովորած ամենակարևոր բաները տեղի են ունեցել ավանդական ուսումնական այնպիսի միջավայրերից դուրս, ինչպիսիք են դպրոցները, դասընթացները և այլն: Սա ձեզ հնարավորություն է տալիս վերլուծելու, թե ինչն է իրավիճակը կամ միջավայրը դարձնում հարմար ուսուցման համար: Սա կարող է նաև քննարկում առաջացնել այն մասին, թե «ինչպես ենք մենք ցանկանում ստեղծել ուսումնական միջավայր այստեղ՝ այս միջոցառման ժամանակ կամ այս ծրագրում»:

Վարժությունից հետո նկարները փակցրեք պատին, որպեսզի մարդիկ կարողանան նայել միմյանց ծովերին և շարունակել զրուցել:

Ստեղծվել է Paul Kloosterman (հարմարեցված է Juan Ratto-Nielsen), Ձեռնարկ վարողների համար: Սովորում ենք ինչպես սովորել գործնականում

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

ԱՆՁՆԱԿԱՆ ՄԱՏՅԱՆ՝ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Հետևել ձեր սովորածը
- Արտահայտել ձեր սովորածը բառերով
- Գրավոր մտորել ձեր սովորածի վերաբերյալ



ԽՈՒՄԲ

- Ցանկացած



ԻՆՉԷ  
ԱՆՇՐԱԺԵՇՏ

- Նոթատետր կամ օրագիր յուրաքանչյուր մասնակցի համար



ԺԱՄԱՆԱԿ

- Տարբեր է



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՂՆԱԳՆԵՐ

Ուսումնական մատյանը կարող է ունենալ տարբեր ձևաչափեր և օգտագործվել տարբեր ձևերով: Հիմնական գաղափարն է սովորողներին տալ գործիք՝ նկարագրելու իրենց ուսուցումը և այն, թե ինչպես են նրանք սովորել: Մատյանում գրելն արժեքավոր է այն բանով, որ դուք նստում, մտածում եք ձեր փորձի մասին և բառերով արտահայտում այն: Այն օգնում է ձեզ իրազեկ լինել այն մասին, թե ինչ եք սովորել:

Ձեր ուսուցմանը հետևելու մեկ այլ առավելությունն այն է, որ դուք կարող եք վերադառնալ նախորդ փորձին և մտքերին: Դա ձեր սովորածը հիշելու լավ միջոց է: Ուսումնական մատյանը կարող է լինել ամենօրյա, շաբաթական կամ տարբեր իրադարձությունների հետ կապված: Բայց դա միանշանակ օգնում է ռիթմ ունենալուն:

Ուսումնական մատյանը կարող է լինել գեղեցիկ տեսք ունեցող նոթատետր, որը դուք տալիս եք մասնակիցներին ծրագրի սկզբում: Մարդիկ կարող են իրենց մոտ պահել իրենց մատյանները միջոցառման ընթացքում, գրառումներ կատարել դրանցում և օգտագործել այդ նշումներն իրենց հասակակիցների հետ գրուցելիս:

Հնարավոր է նաև խնդրել սովորողներին վարել իրենց մատյանն առցանց՝ որպես անձնական բլոգ: Բլոգը կարող է լինել խիստ անձնական, կամ մասնակիցները կարող են հրավիրել ընթերցողների ընտրված խմբի, կամ կարող են կիսվել իրենց գիտելիքներով ամբողջ աշխարհի հետ (հանրային բլոգ):

Ծրագրի մասնակիցներին տրամադրեք ժամանակ և տարածք՝ իրենց ուսումնական մատյանում գրառումներ կատարելու համար: Դուք կարող եք, օրինակ, յուրաքանչյուր վերապատրաստման օրվա վերջում կես ժամ հատկացնել ուսուցման վերաբերյալ մտքերը գրի առնելուն: Կարևոր է ընդգծել այս անհատական մտորման կարևորությունը:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



**ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ**

- Սահմանափակ լեզվական հմտություններ կամ կրթական դժվարություններ ունեցող մարդիկ կարող են արտահայտվել այլ միջոցներով, ինչպիսիք են գծանկարները, կոլաժները, պատկերները և այլն:
- Տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող երիտասարդները կարող են օգտագործել էլեկտրոնային գործիքներ՝ իրենց ուսուցման վերաբերյալ մտորումները գրի առնելու և հետագայում կարդալու համար:
- Վարժությունը կարող է հարմարեցվել կամ օգտագործվել գրեթե ցանկացած համատեքստում: Այն կարող է նաև թարգմանվել տարբեր լեզուներով կամ վերածվել առցանց հավելվածի կամ բլոգի:



**ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ**

- Տվե՛ք մասնակիցներին ժամանակ և նյութեր՝ իրենց մատյաններն անհատականացնելու համար (օրինակ՝ տարբեր գույներ, ձևեր, զարդեր): Այդ կերպ այն դառնում է նրանց սեփական գործիքը, և դուք խուսափում եք խառնաշփոթից:
- Տվե՛ք խորհուրդներ և հարցեր՝ մտորումը սկսելու համար, և տեղադրեք դրանք յուրաքանչյուր մատյանի առաջին էջում:
- Խրախուսե՛ք մասնակիցներին օգտագործել մատյանը հասակակիցների հետ՝ իրենց ուսուցումը քննարկելիս:
- Դուք կարող եք նաև օգտագործել հասակակիցների միջև քննարկումը, որտեղ երկու կամ ավելի մասնակիցներ զույգերով կամ փոքր խմբերով քննարկում են իրենց ուսուցման վերաբերյալ: Մատյանը կարող է հիանալի գործիք լինել գաղափարներ փոխանակելու և միմյանց ուսուցման վերաբերյալ մտորումներին աջակցելու համար:



ԱՌՁԵՐՆ  
ԵՅՈՒԹԵՐ

**ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՏՅԱՆ**  
(կարելի է սոսնձել ուսումնական  
մատյանի առաջին էջին)



Ներկայացրել են Paul Kloosterman և Darko Markovic

### ՈՂՋՈՒՅՆ,

Ես ձեր անձնական ուսումնական մատյանն եմ և պատրաստ եմ ձեզ ծառայելու: Իմ նպատակն է օգնել ձեզ աջակցել ձեր սեփական ուսուցմանն այս նախագծի ընթացքում և գրանցել այն:

Այնուամենայնիվ, հենց դուք պետք է գտնեք ինձ օգտագործելու ձեր անձնական եղանակը: Դուք կարող եք գրառումներ անել, խզրզել և նկարել, փակցնել հետաքրքիր նկարներ, գրել ձեր մտորումները, կիսվել մտքերով ու պատկերացումներով և այլն:

Փորձը ցույց է տալիս, որ մարդկանց համար կարող է դժվար լինել այս մտորումները սկսելը և որոշելը, թե ինչ գրել ուսումնական մատյանում: Ուստի, առաջարկվում է վերջացնել ստորև ներկայացված անավարտ նախադասություններից մի քանիսը՝

- Այսօր ես բացահայտեցի...
- Հիմա ես հասկանում եմ...
- Ես ավելի վստահ եմ զգում...
- Բացահայտում էր այն, որ...
- Ճագած նոր հարցը հետևյալն էր...
- Ես պետք է ավելի շատ ուսումնասիրեմ...

Կամ գուցե ցանկանաք մտորել ձեր սեփական ուսուցման գործընթացի և ինքներդ ձեր՝ որպես սովորողի մասին, օգտագործելով ստորև ներկայացված առաջարկներից մի քանիսը՝

- Ես նախընտրում եմ սովորել հետևյալ եղանակով...
- Ես սիրում եմ սովորել, երբ...
- Ուսումնական գործընթացում ինձ խանգարում է...
- Իմ ուսուցման գործընթացում այլ մարդիկ կարող են օգնել ինձ հետևյալ կերպ...
- Ես աջակցում եմ ուրիշներին իրենց ուսումնական գործընթացներում հետևյալ կերպ...
- Ես հետևյալն եմ սովորել ուսուցման մասին...

Հաջողություն և բարի ժամանց:

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿԱՍԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐՈՂՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 10 ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԶԵՆՆԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼ

ՍՈՎՈՐԵԼ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ, ՈՐԸ ԿՍՏԻՊԻ ԶԵՉ ՄՏԱԾԵԼ ԶԵՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ուսուցման փորձ ունենալ
- Մտորել ձեր ուսուցման վերաբերյալ
- Ուսուցման փորձով կիսվել և համեմատվել ուրիշների հետ



ԽՈՒՄԲ

- Ցանկացած



ԻՆՉ Է

ԱՆՉՐԱԺԵՇՏ

- Երեք ձեռնածություն գնդակ յուրաքանչյուր մասնակցի համար
- Երեք գնդակներով ձեռնածություն անելու հրահանգներով տեսանյութ (կարող եք գտնել Youtube.com-ում)
- Համակարգչային սարքավորումներ (համակարգիչ, պրոյեկտոր և ինտերնետի հասանելիություն) տեսանյութը ցուցադրելու համար
- Հրահանգներով թերթիկ այն մասին, թե ինչպես կարելի է ձեռնածություն անել երեք գնդակով (կարող եք գտնել համացանցում)



ԺԱՄԱՆԱԿ

- 2 ժամ



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

- Ցասիլիտատորը մասնակիցներին ներկայացնում է վարժության նպատակները և բացատրում, որ նրանք պետք է սահմանափակ ժամանակում սովորեն ձեռնածություն անել: Յուրաքանչյուր մասնակից ստանում է երեքական գնդակ և սկսում սովորել ձեռնածություն անել: Նրանց առաջարկվում են մի քանի տարբերակներ, որոնք կօգնեն նրանց սովորել՝
- դիտել հրահանգներով տեսանյութը
  - կարդալ հրահանգների թերթիկը
  - դիմել ուսուցչի, ով կսովորեցնի նրանց
  - գտնել սովորելու իրենց ուղին

Նրանք կունենան կես ժամ ձեռնածություն անել սովորելու համար:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Փոքր խմբերով (չորսից վեց մասնակից) անդադարձեք հետևյալ փորձին՝
- Ինչպե՞ս սկսեցիք սովորել: Արդյո՞ք կազմել եք ծրագիր, թե՞ նոր եք սկսել դա անել:
  - Ուսուցման մի քանի տարբերակներից ո՞րն եք ընտրել և ինչու:
  - Արդյո՞ք գոհ եք, թե որքան հեռու եք հասել:
  - Որո՞նք էին դժվար պահերը:
  - Ինչպե՞ս փորձեցիք հաղթահարել այդ պահերը:
  - Արդյո՞ք խնդրել եք օգնություն ուրիշներից:
  - Արդյո՞ք հետևել եք մյուսներին: Արդյո՞ք նրանց ռազմավարություններն այլ էին:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Կարո՞ղ եք այս փորձը կապել նրա հետ, թե ինչպե՞ս եք սովորաբար սովորում:
- Ինչպե՞ս, ձեր կարծիքով, կարող եք շարունակել կատարելագործվել:
- Որո՞նք են լինելու ձեր հաջողո՞ք քայլերը:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Դուք պետք է հատուկ ուշադրություն դարձնեք ձեր թիրախային խմբին, որպեսզի որևէ մեկը դուրս չմնա ուսումնական առաջադրանքի դժվարության պատճառով: Բոլոր մասնակիցները պետք է կարողանան հաղթահարել այս դժվարությունները՝ հաշվի առնելով տարբեր ասպեկտներ, ինչպիսիք են հրահանգների լեզուն, ձեռնածության կամ պարելու մասով ֆիզիկական խոչընդոտները, ըմբռնման մակարդակը և այլն:
- Այստեղ մենք ձեռնածությունը համարում ենք ուսումնական մարտահրավեր, բայց, իհարկե, դուք կարող եք կիրառել այլ գործնական հմտություններ, ինչպիսիք են որոշակի տեսակի պարը (օրինակ՝ վալս, տանգո), օրիգամի ծալելը, փողկապ կապելը և այլն:
- Այս վարժության այլ տարբերակ կարող է լինել գրատախտակի կամ քարտերով խաղերի հետ աշխատելը: Ձեզ անհրաժեշտ է նմանատիպ վեցից տասը (կախված խմբի չափից) խաղ: Դրեք դրանք առանձին սեղանների վրա և մասնակիցներին ասեք, որ նրանք ունեն 30 րոպե առնվազն երեք նոր խաղ սովորելու համար: Հետագայում կարող են օգտագործվել նույն գնահատման հարցերը:



ԽՈՐՀՈՒԿՆԵՐ

Շատ հնարավոր է, որ ձեր խմբում լինեն մարդիկ, ովքեր արդեն գիտեն, թե ինչպես ձեռնածություն անել: Այդ դեպքում, տարբերակներից մեկը կարող է լինել առաջարկել նրանց փորձել ձեռնածություն անել ավելի բարձր մակարդակի վրա (չորս գնդակ կամ տարբեր գործողություններ երեք գնդակով): Այդ դեպքում, դուք պետք է ունենաք պատրաստ հրահանգներ այդ ավելի բարձր մակարդակի համար: Մեկ այլ տարբերակ կարող է լինել նրանց առաջարկելը հանդես գալ որպես ուսուցիչ մյուսների համար:

Ձեզ անհրաժեշտ է ինչ-որ մեկը ձեր թիմում, ով կարող է ձեռնածություն անել (կամ պարել կամ ...)՝ ուսուցիչ լինելու համար:

Ստեղծվել է Paul Kloosterman, [www.salto-youth.net/find-a-tool/351.html](http://www.salto-youth.net/find-a-tool/351.html)

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱՉԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ԻՄ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ, ԻՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ինքնագնահատմանը ՊԱՏՐԱՏՎԵԼՈՒ ՊԱՐՉ ԵՎ ՈԳԵՇՆՉՈՂ ՄԻՋՈՑ՝ ՁԵՉ ՀՐՁՎՊԱՏՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ:



ՊԱՏԱԿՆԵՐ

- Բացահայտել ուսուցման արդյունքները և նկարագրել դրանք
- Գնահատել ուսուցման գործընթացը
- Գտնել ոգեշնչման անձնական աղբյուր, որը կարող է օգնել սովորողին առնչություն զգալ միջոցառման հետ



ԽՈՒՄ

- Առավելագույնը 30 մարդ



ԻՆՉԷ  
ԱՆՏՐԱԺԵՇ

- Առարկաներ հանդիպման վայրից
- Առարկաներ բնությունից



ԺԱՄԱՆԱԿ

- 80 րոպե



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Յուրաքանչյուր մասնակցի առաջարկվում է գտնել բնությունից կամ միջոցառման իրականացման վայրից որևէ առարկա, որը խորհրդանշում է իր ուսուցման գործընթացը և ուսուցման արդյունքները ծրագրի ընթացքում (խնդրեք նրանց վերադառնալ առավելագույնը 20 րոպեից): Երբ բոլորը վերադառնում են որոնումներից, յուրաքանչյուրը ներկայացնում է իր խորհրդանշիչը՝ բացատրելով դրա կապն ուսուցման գործընթացի և ծրագրի ուսուցման արդյունքների հետ:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Այս մեթոդը հատկապես օգտակար է միջոցառման ավարտին գնահատման մասն ամփոփելու համար: Այս հատվածում բոլորին խոսք տվեք՝ բացատրելու իրենց խորհրդանշիչը: Սահմանափակեք ամփոփիչ հարցերի քանակը և կենտրոնացեք ուսուցման գործընթացի վրա.

- Ինչու՞ եք ընտրել այս խորհրդանշիչը:
- Ինչպե՞ս կարող եք դա կապել ձեր ուսուցման հետ:
- Արդյո՞ք դա արդյունք է: Արդյո՞ք դա գործընթացի մաս է:
- Դուք, որպես սովորող, ինչպե՞ս եք վերաբերվում օբյեկտին:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՆԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Առարկաների և խորհրդանիշների հետ աշխատելը հարմար է մի շարք խմբերի դեպքում, քանի որ յուրաքանչյուր անհատ կարող է ընտրել դրանք ըստ իր զգացողությունների, կարիքների և կարողությունների:
- Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կիսվելու հատվածին, որպեսզի բոլորը, անկախ լեզվի իմացությունից, կարողանան կիսվել իրենց մտքերով:
- Թեև ի սկզբանե ենթադրվում էր, որ խորհրդանիշը բնության գրկից պետք է լինի, դուք կարող եք նաև օգտագործել այլ առարկաներ, օրինակ՝ այնպիսի առարկաներ, որոնք ֆասիլիտատորը բերում է իր հետ, կամ որոնք կարելի է գտնել այլ տեղեր:
- Դուք կարող եք ընտրել ուսուցման խորհրդանիշը նաև դասընթացի այլ հատվածներում, օրինակ՝ ամենօրյա գնահատման ժամանակ: Մասնակիցները կարող են նկարել կամ փակցնել իրենց խորհրդանիշները մատյանի կամ թղթի վրա, որը կարող է օգտագործվել վերջնական գնահատման համար:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Երբեմն մարդիկ ավելի շատ խոսում են խորհրդանիշի, և ոչ թե այն մասին, թե ինչ է այն ներկայացնում: Համոզվեք, որ վարժությունը կենտրոնացված է ուսումնական գործընթացի վրա: Խորհրդանիշը պարզապես ոգեշնչման աղբյուր է:
- Այս մեթոդը նաև լավ հնարավորություն է հավաքելու մասնակիցների կարծիքը կամ գնահատականը դասընթացի վերաբերյալ, քանի որ այն սովորաբար տեղի է ունենում գնահատման գործընթացի վերջում:

ՇԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՇԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱՉԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## 12 ԻՆՉ ՍՈՎՈՐԵՑԻ ԱՅՍՕՐ

ՈՏՔԵՐԻ ԵՎ ՔԱՅԼԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ՝ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՉԱՄԱՐ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Մտորել անհատական և խմբային ուսուցման վերաբերյալ՝ վերապատրաստման դասընթացի կամ երիտասարդական փոխանակման ընթացքում
- Ձեռք բերել վերապատրաստման դասընթացի ուսուցումն ամփոփելու անձնական փորձ
- Կիրառել և մասնակիցներին բացատրել Youthpass-ի օգտագործումը



ԽՈՒՄԲ

- Առավելագույնը 25 մարդ



ԻՆՉ Ե  
ԱՆՉՐԱԺԵՇՏ

- Գունավոր A4 թուղթ
- Գրիչներ
- Ոտքերի նկարներ
- Երաժշտություն մտորման ժամանակի համար



ԺԱՄԱՆԱԿ

- 15-25 րոպե/օրական
- 40 րոպե՝ վերջին օրը



ՔԱՅԼ ԱՌ-ՔԱՅԼ  
ՇՐՎԱՆԱԳՆԵՐ

Առաջին վերապատրաստման օրվա վերջում բացատրե՛ք սեփական ուսուցման մասին մտորելու անհրաժեշտությունը՝ ցույց տալով ոտքերի նկար: Ոտքերը խորհրդանշում են, որ մենք սովորում ենք քայլերով՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ: Այնուհետև բերե՛ք սովորելու օրինակներ (ներառյալ զվարճալիները. օրինակ՝ ես իմացա, որ Հունգարիայում ճաշին միշտ տաք ապուր են մատուցում) և խնդրեք մարդկանց պատասխանել «Ի՞նչ սովորեցիք այսօր» հարցին:

Մասնակիցներին խնդրում են պատասխանել հարցին գրավոր (միջոցառման աշխատանքային լեզվով) կամ ոտքի ձևով կտրված թղթի վրա նկարելով: Համարակալեք ոտքերը՝ ըստ դասընթացի օրերի (1՝ առաջին օրվա համար, և այլն):

Բացատրե՛ք որ վերապատրաստման յուրաքանչյուր օրվա ընթացքում նրանք հետ կստանան իրենց նախկին «ոտքերը» և կշարունակեն նույնանման հարցով: Դուք կարող եք հարցին տալ այլ շեշտադրումներ, ինչպիսիք են՝ «Ի՞նչ եք սովորել մյուսներից: Կամ ի՞նչ սովորեցիք ձեր մասին»:

Վերապատրաստման դասընթացի վերջում մասնակիցներին ժամանակ տվեք անդրադառնալու նախորդ օրերի իրենց ուսուցման քայլերին (ոտքերին) և խնդրեք նրանց ամփոփել, թե, իրենց կարծիքով, որոնք են իրենց համար ամենակարևոր ուսուցման արդյունքները: Այս մտորման արդյունքը կարող է օգտագործվել մասնակիցների կողմից՝ նկարագրելու իրենց ուսուցման արդյունքները իրենց Youthpass-ում:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՆԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԽԼԻՏԱՑՈՐԻ ԴԵՐԸ



ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գլխավոր հարցն ամեն օր նույնն է՝

- Ի՞նչ սովորեցիք այսօր:

Վարողը կարող է ամեն օր շեշտադրումները թեթևակի փոխել՝ վարժությունը համալրելու համար՝

- Ի՞նչ սովորեցիք մասնակիցների խմբից:
- Ի՞նչ սովորեցիք ինքներդ ձեր մասին:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Մասնակիցները կարող են օգտագործել տարբեր տեսակի միջոցներ՝ հարցերին պատասխանելու համար (օրինակ՝ կավ, կոլաժ, մատիտներ և այլն):

Կարող եք նաև օգտագործել այլ խորհրդանիշ՝ կախված ձեր գտնվելու վայրից, մասնակիցներից և վերապատրաստման դասընթացի կամ երիտասարդական փոխանակման թեմայից: Ուղքերի փոխարեն, օրինակ, դուք կարող եք նկարել ծառ յուրաքանչյուր մասնակցի համար և յուրաքանչյուր օրվա համար ավելացնել նոր ճյուղեր, որոնց վրա նրանք կարող են կախել իրենց ուսուցումը ներկայացնող առարկաներ:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Այս վարժությունը մշակվել է որպես ամենօրյա վարժություն, ուստի կարևոր է մասնակիցներին մոտիվացված պահել և թույլ չտալ, որ այն վերածվի ձանձրալի առօրյալի: Դա կանխելու համար առաջարկվում է թույլ տալ թեթևակի շեղումներ և հարմարեցումներ (տարբեր հարցեր, տարբեր գույներ ուղքերի համար, հանդերձարաններ և այլն):

ՇԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՇԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱՉԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13

### ԿՈՒՆԺԱՎՈՐԵՔ ԶԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ՏԵՄՈՂԱԿԱՆ ՄԵԹՈԴ, ՈՐԸ ԿՕԳՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԳՏՆԵԼ ԻՐԵՆՑ ԱՐԺԵՔՆԵՐԸ, ՇԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Մասնակիցներին ծանոթացնել միմյանց հետ
- Նպաստել անհատների (որպես սովորողների) արժեքների, հետաքրքրությունների, ուժեղ կողմերի և առանձնահատկությունների մասին մտորմանը



ԽՈՒՄԲ

- Առավելագույնը 30 մարդ



ԻՆՉԷ  
ԱՆՆՐԱԺԵՇՏ

- Հին ամսագրեր
- Սոսինձ
- A4 գրունավոր թղթեր
- Մկրատ



ԺԱՄԱՆԱԿ

- 90 րոպե



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՇՐԱՆԱԳՆԵՐ

Քայլ առ քայլ հրահանգներ

Տախիլիտատորը ներկայացնում է վարժությունը՝ ասելով հետևյալը՝

«Յուրաքանչյուր ոք ունի լավ սովորող դասնալու ներուժ: Իրական խնդիրն այն է, որ ուսուցման զարգացումը կարող է ժամանակ պահանջել: Մեզ ժամանակ է պետք, որպեսզի՝»

- պարզենք, թե ինչն է մեզ հետաքրքրում
- հասկանանք մեր անձնական կարիքները, արժեքները և նպատակը
- սովորենք արտահայտել, թե ով ենք մենք
- սովորենք, թե ինչպես օգտագործել մեր յուրահատուկ ուժեղ կողմերն ու հմտությունները
- սովորենք, թե ինչպես արտահայտել մեր նպատակը մեր ուրույն ձևով
- պարզենք, թե որն է մեր յուրահատուկ տեսլականն ու նպատակը»

Խնդրե՛ք մասնակիցներին պատրաստել կոլաժ՝ օգտագործելով ամսագրերի լուսանկարներն ու տեքստը, որը ներկայացնում է նրանց անհատական ուժեղ կողմերը, անձնական արժեքները, հետաքրքրությունները և այն, ինչը նրանց յուրահատուկ է դարձնում:

30 րոպե նախապատրաստվելուց հետո մասնակիցները կազմում են շրջան և ներկայացնում իրենց կոլաժը խմբի մնացած անդամներին:

ԲԱՅԱՀԱՅՑՈՒՄ ԵՎ ՓԱՏՆԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ի՞նչ է ներկայացնում ձեր կոլաժը:
- Ինչպե՞ս էր ձեր կոլաժը պատրաստելը:
- Ինչո՞ւ եք այդ պատկերը/բառը/գույնը ներառել կոլաժում:
- Ի՞նչ էիք ցանկանում արտահայտել:
- Արդյո՞ք կենտրոնացել եք ձեր՝ որպես սովորողի որոշակի հատկանիշների վրա: Որո՞նք են դրանք (օրինակ, արժեքները, հետաքրքրության ոլորտները, անձնական կարողությունները, ուսուցման ոճը և այլն):



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Այս վարժությունը հարմար է տարբեր լեզվական հմտություններ ունեցող մարդկանց համար, քանի որ մասնակիցներն արտահայտվում են արվեստի միջոցներով: Մենթորը կամ ֆասիլիտատորը կարող է օգնել մասնակիցներին բացատրել իրենց կոլաժները (ավելի կոնկրետ կամ պարզ հարցեր տալով): Նրանք կարող են նաև օգնել մասնակիցներին քննարկման մասում՝ վարժության նպատակին հաջողությամբ հասնելու համար:
- Հատուկ ուղեցույց է անհրաժեշտ այն երիտասարդների համար, ովքեր կարող են ծանոթ չլինել ուսուցման հայեցակարգին, և սկզբնական ներածական տեքստը պետք է համապատասխանաբար հարմարեցվի:
- Սա լավ վարժություն է, որը կարող է օգտագործվել արժեքների, հետաքրքրությունների, ուժեղ կողմերի և դրական այն կետերի մասին մտածելու համար, որոնք կարող են ոգեշնչել ուսուցման հարցում կամ առնվազն օգնել մարդկանց գիտակցել իրենց ուսումնական ներուժը:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Այս վարժությունը կարող է լինել շատ անձնական, քանի որ մասնակիցները պետք է խոսեն իրենք իրենց և իրենց ուժեղ կողմերի մասին որպես սովորողներ: Ֆասիլիտատորը պետք է յուրաքանչյուր մասնակցի տրամադրի հավասար ժամանակ՝ ցույց տալու իր կոլաժը և բացատրելու այն: Պետք է խուսափել այն մասին քննարկումներից, թե արդյոք անձը տիրապետում է որոշակի հմտության, եթե մարդիկ միմյանց լավ չեն ճանաչում և փոխադարձ վստահության մթնոլորտ չի ստեղծվում:

Ներկայացված է Inese Priedite կողմից որպես «Կոլաժավորեք ձեր առաջնորդությունը» վարժություն, հարմարեցված է, հարմարեցված է Juan Ratto-Nielsen ի կողմից ուսուցման թեմայի համար [www.salto-youth.net/find-a-tool/1194.html](http://www.salto-youth.net/find-a-tool/1194.html)

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿԱՍԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14

**ՖՈՏՈՆՈՎԵԼ**

ՁՎԱՐՃԱԼԻ ԽՄԲԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ՝ ՄՏՈՐԵԼՈՒ, ԲԱՅԱՀԱՅՏԵԼՈՒ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐԵԼՈՒ ԽՄԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ



ՄՊԱՏԱԿՆԵՐ

- Ձանձրալի վերանայման վարժությունը դարձնել մասնակիցների կողմից ավելի սերտ ուշադրությունը և ակտիվ ներգրավվածությունը խրախուսող:
- Տրամադրել այլընտրանքային գործիք խմբային ուսուցման փաստաթղթավորման համար:
- Բարձրացնել իրազեկվածությունը թիմային ուսուցման մաս կազմող տարրեր մարտահրավերների և հնարավորությունների մասին:



ԽՈՒՄԲ

• 4-5 հոգի/խմբում



ԻՆՉԷ

ԱՆՉՐԱԺԵՇՏ

**Տարածք**

- Մեկ մեծ աշխատասենյակ

**Նյութեր**

- Համակարգիչ և թվային տեսախցիկ յուրաքանչյուր խմբի համար՝ ներկայացում ստեղծելու հնարավորությամբ ծրագրակազմով (Openoffice, Power Point, Google Docs և այլն)
- Պրոյկտոր՝ ընդհանուր քննարկման ժամանակ ներկայացման համար



ԺԱՄԱՆԱԿ

• 1 ժամ



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Հակիրճ նեշկայացրե՛ք ֆոտոնովել հասկացությունը և ցույց տվեք դրա մի քանի նմուշ:

«Ֆոտոնովելն իտալական հանրաճանաչ մշակույթին բնորոշ արտահայտություն է՝ ռոմանտիկ վեպերի, լուսանկարչության, կոմիքսների և կինոյի միախառնում: Դա 60-ականներից և 70-ականներից եկած մի բան է, որն ազդել և կրթել է իտալացի կանանց մի քանի սերունդ (1976-ին ամենկան վաճառվում էր ֆոտոնովելի 8,600,000 օրինակ): Դրանք պարզ պատմություններ են, որոնք ներկայացվում են նկարներով, որոնց վրա տեղադրված են դասական զավեշտական խոսքի փուջիկներ: Սյուժեն սովորաբար սիրավեպի կամ չարի և բարու մասին է՝ կյանքի վերաբերյալ սև և սպիտակ հայացքներով (հարուստները չարիք են, աղքատները՝ բարիք, սիրահարները դավաճանվում են և այլն...): Բայց, երբեմն, կյանքի նկատմամբ պարզեցված մոտեցումից բացի ֆոտոնովելը շատ օգտակար միջոց է ուսումնական գործընթացի գրանցման և փաստաթղթավորման համար: Դուք պետք է որպես խումբ ցույց տաք ձեր ուսուցման գործընթացը և վերածեք այն շնորհանդեսի՝ Ֆոտոնովելի: Դա հենց այն է, ինչ մեծք խնդրում ենք ձեզ անել վերապատրաստման դասընթացի ժամանակ (այսօր):»

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՆԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



Բաժանեք խումբը չորսից վեց մասնակիցներից բաղկացած ենթախմբերի: Կարողացեք կանոնները և ժամանակային սահմանափակումները (կանոնները և ժամանակային սահմանափակումները կարող են տարբեր լինել՝ կախված այն բանից, թե որն է ընտրվել՝ հիմնական տարբերակ, թե ավելի բարդ վարժություն, որը շարունակվում է դասընթացի ամբողջ ընթացքում)։

«Մտածե՛ք այնպիսի պատմության մասին, որը ներկայացնում է ձեր ուսումնական փորձը ծրագրի ընթացքում: Քննարկե՛ք ձեր գաղափարը խմբում և որպես խումբ ընտրեք մեկ անձի՝ այն ներկայացնելու համար: Դրանից սարքեք ֆոտոնովել: Դուրս եկեք, գտեք կատարյալ միջավայր և սկսեք նկարել: Օգտագործելով ներկայացում ստեղծելու հնարավորությամբ ծրագրակազմը (Openoffice, Power Point, Google Docs և այլն)՝ ստեղծեք ձեր ֆոտոնովելը»:

Եթե ցանկանում եք վարժությունը նույն օրն ավարտել, ապա տվեք նրանց մեկ ամբողջ առավիտ կամ կեսօր այս գործընթացի համար: Եթե իրականացնում եք երկարատև տարբերակը, ապա մասնակիցները կարող են օգտագործել դասընթացներին հաջորդող ժամանակը (կամ որոշ ժամանակ հատկացնել յուրաքանչյուր օրվա վերջում): Հիշեք, որ դուք պետք է օրվա ընթացքում ժամանակ հատկացնեք ֆոտոնովելին, քանի որ բացօթյա նկարների համար կարող է անհրաժեշտ լինել ցերեկային լույս՝ կախված միջավայրից:

Երբ խմբերը վերադառնան իրենց ներկայացումներին, խնդրեք նրանց խաղալով ներկայացնել յուրաքանչյուր ֆոտոնովելը՝ այն պատին ցուցադրելու ընթացքում: Ներկայացումներից հետո սկսեք քննարկում այն մասին, թե ինչու ֆոտոնովելը կարող է փոխաբերություն լինել ուսումնական գործընթացի համար:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ինչո՞ւ եք ընտրել այս պատմությունը:
- Ինչպե՞ս է ձեր ուսուցումը կամ ուսումնական գործընթացը ցուցադրվում այս ֆոտոնովելում:
- Ինչպե՞ս եք դուք, որպես խումբ, որոշում կայացրել ստեղծել այս սյուժեն:
- Ինչպե՞ս են նշանակվել դերերը ձեր խմբում:
- Ի՞նչ սովորեցիք այս փորձից:
- Արդյո՞ք դա միայն գիտելիք էր: Ինչպե՞ս են արժեքները և հմտությունները ներկայացված ձեր աշխատանքում:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Այս վարժությունը սովորաբար իրականացվում է փոքր խմբերով, այնպես որ կարող եք հեշտությամբ ինտեգրել այն մասնակիցներին, ովքեր կարող են լրացուցիչ աջակցության կարիք ունենալ: Օրինակ, դուք կարող եք փոխարինել «խոսքի փոփոխները» նախապես ձայնագրված ձայնով (առաջարկվող ծրագիր՝ Audacity) և խնդրել նրանց դերախաղով ներկայացնել այդ կտորը՝ ականջակալով լսվող ձայնի ուղեկցությամբ:
- Ինչ վերաբերում է ոչ ֆիզիկական դժվարություններ ունեցող մասնակիցներին, ապա վարժությունը շատ հեշտ է հարմարեցնել բոլորի կարիքներին: Նրանք, ովքեր չեն սիրում ելույթ ունենալ, կարող են ստանձնել մեկ այլ դեր՝ որպես լրասանկարիչ կամ համակարգչային ձևավորող:
- Ինչ վերաբերում է ուսուցմանը, ապա հայեցակարգը դերախաղով ներկայացնելն այն հասկանալու հզոր միջոց է: Այնուամենայնիվ, «կենդանի» կատարումը կարող է չափազանց պրեսային լինել որոշ երիտասարդների համար: Դուք կարող եք որոշել պարզապես ցուցադրել ֆոտոնովելը՝ առանց բեմային ցուցադրության:
- Ֆոտոնովելը կարելի է հեշտությամբ հարմարեցնել որպես ուսուցման գործընթացի գրանցման միջոց տարբեր գործունեությունների ընթացքում, ինչպիսիք են վերապատրաստման դասընթացները, երիտասարդական փոխանակումները կամ խմբային ԵԿԾ նախագծերը: Ինչ վերաբերում է տարբեր թիրախային խմբերի համար այն հարմարեցնելուն, ապա միակ պահանջը տարրական թվային հմտություններն են:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Վարժությունն ի սկզբանե նախատեսված է թիմ ստեղծելու գործողություն բազմամշակութային այնպիսի միջավայրերում, ինչպիսիք են վերապատրաստման դասընթացները կամ երիտասարդական փոխանակումները: Այն մի քանի անգամ բարեհաջող փորձարկվել է: Այն ապացուցել է, որ շատ արդյունավետ է և՛ թիմ ստեղծելու պարզ վարժություն, և՛ ծրագրի ուսումնական ցիկլի մոդելավորում (ավելի երկար տարբերակ):
- Բարձր ճնշման իրավիճակներում (սահմանափակ ժամանակ, նկարների սահմանափակ քանակ, բոլոր անդամների պարտադիր մասնակցություն և թիմի ներսում հաղորդակցության խնդիրներ) այն կարող է ի հայտ բերել շատ բարդ և բազմազան դինամիկաներ: Բացի դրանից, թեման ընտրելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել մասնակիցների կարողություններին՝ այն պատմության վերածելու տեսանկյունից:
- Լավագույն արդյունքների կարելի է հասնել, եթե նրանց տրամադրվի երկու ժամից ավելի՝ պատմություններ ստեղծելու համար: Եվ վերջապես, ժամանակացույցը պլանավորելիս մի մոռացեք, որ եթե կան մի քանի խմբեր, ապա պետք է բավարար ժամանակ նախատեսել բոլոր ֆոտոնովելները դիտարկելու համար: Հինգ խումբը կարող է մինչև 30 րոպե պահանջել միայն դրանք ներկայացնելու համար՝ առանց որևէ դեբրիֆինգ անելու:



ԱՌՁԵՌՆ  
ԵՅՈՒԹԵՐ

Ներբեռնեք առձեռն նյութը ԱԱԼՏՈ Գործիքակազմից՝

[www.salto-youth.net/find-a-tool/1182.htm](http://www.salto-youth.net/find-a-tool/1182.htm)



Ստեղծվել է Alexandro Jan Lai և Marija Pilipović (հարմարեցված է Juan Ratto-Nielsen (Իռլանդացի Ռատտո-Նիլսենի կողմից՝ ուսուցման թեմայի համար) [www.salto-youth.net/find-a-tool/1182.html](http://www.salto-youth.net/find-a-tool/1182.html) և <http://it.wikipedia.org/wiki/Fotoromanzo>

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐՈՐՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15

### ՈՒՍՈՒՑՄԱՆ «ՖՐԱՆԿԵԼՆՏԵՅՆԻ ՄԵԹՈՂ»

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՈՒՍՈՒՑՈՒՄԸ:



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Օգնել մասնակիցներին ամեն օր մտորել իրենց ուսումնական ուղիների մասին և վերլուծել դրանք:
- Ապահովել մասնակիցների ուսուցման միջանկյալ ստուգման կետեր:



ԽՈՒՄԲ

- Ցանկացած



ԻՆՉԷ  
ԱՆՉՐԱԺԵՇՏ

- Ֆիլաչարթի թուղթ
- Գունավոր մարքերներ
- Մկրատ
- Սոսինձ



ԺԱՄԱՆԱԿ

- 30 րոպե՝ առավոտյան
- 60 րոպե՝ վերջին օրը



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՆԱԳՆԵՐ

#### Ներկայացման օր

Խումբը բաժանեք զույգերի: Բացատրեք, որ ամեն առավոտ յուրաքանչյուր զույգ կստանա երկու ֆիլաչարտի թուղթ (մեկական՝ յուրաքանչյուր անձի համար), որտեղ նրանք պետք է նկարեն մարմնի տարբեր մասեր.

- օր 1-ին՝ ձեռքեր
- օր 2-րդ՝ ոտքեր
- օր 3-րդ՝ կրծքավանդակ
- օր 4-րդ՝ գլուխ և այլն:

Խնդրե՛ք, որ զույգերը ամեն օր քննարկեն և վերլուծեն իրենց ուսուցման գործընթացը՝ կենտրոնանալով այն բանի վրա, ինչ նրանք սովորել են նախորդ օրը՝ նոր հմտություններ, վերաբերմունքներ և գիտելիքներ:

#### Ամեն առավոտ

Բաժանե՛ք ֆիլաչարթի թղթերը և մասնակիցներին տվեք 20-30 րոպե՝ զույգերով քննարկելու այն, ինչ նրանք սովորեցին նախորդ օրը: Խնդրե՛ք նրանց գրել և մարմնի մասերի վրա նկարել իրենց անհատական ուսուցման արդյունքները: Հավքե՛ք նկարած մարմնի մասերը և պահեք դրանք մինչև վերջին օրը:

#### Եզրափակիչ օր՝ Գնահատում

Վերջին օրը յուրաքանչյուր մասնակցի վերադարձրեք նկարած ֆիլաչարտի թղթերը: Խնդրե՛ք նրանց կտրել մասերը և հավաքել իրենց «սովորող արարածներին»: Ժամանակ տրամադրեք մասնակիցներին իրենց արարածին որպես ամբողջություն նայելու համար:

«Այժմ ձեր առջև անկեղծան մարմին է, մի արարած՝ տարբեր մասերից հավաքված: Եթե ցանկանում եք այն կյանքի կոչել, անհրաժեշտ է լրացուցիչ տարր՝ սիրտ»:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐՎԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏՏԱՏՈՐԻ ԴԵՐՆ

Տվեք նրանց լրացուցիչ ֆիլաչարթի թուղթ և խնդրեք նրանց սիրտ սարքել: Խնդրեք նրանց սրտի վրա գրել վերապատրաստման դասընթացի հիմնական ուսումնական արդյունքները և դնել այն իրենց արարածների վրա: Խնդրեք մասնակիցներին ներկայացնել իրենց արարածներին ու նկարագրել նրանց հիմնական հատկանիշները, անունները և այն, ինչը ստիպում է նրանց սրտերին բաբախել՝ նրանց կյանքի (ուսուցման) հետ բերելով: Այնուհետև անցեք քննարկմանը՝ ընդհանուր հանդիպման ժամանակ:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ի՞նչ տեսք ունի ձեր Ֆրանկենշտեյնը:
- Ինչպե՞ս է անցել ձեր ուսուցումը ծրագրի ընթացքում:
- Արդյո՞ք կարող եք պատկերացում կազմել ուսուցման յուրաքանչյուր փուլի մասին մարմնի տարբեր մասերից:
- Ո՞րն է ամենատարօրինակը, ամենազվարճալիին: Ինչո՞ւ:
- Այժմ, երբ հավաքել եք ամբողջ մարմինը, կարո՞ղ եք որոշ եզրակացություններ անել ձեր ուսուցման արդյունքների վերաբերյալ:
- Եթե կարողանայիք ձեր Ֆրանկենշտեյնին շարժման մեջ դնել (հիշեք ձեր սովորածը), ի՞նչ կխնդրեիք նրան անել: Որտե՞ղ: Ինչպե՞ս:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Այս վարժությունը հարմար է գրեթե ցանկացած խմբի համար՝ տեսողական և գրաֆիկական միջոցների շնորհիվ: Եթե մարդիկ չեն կարող կամ չեն ցանկանում մարմնի մասեր նկարել, կարող եք նրանց առաջարկել ձևանմուշներ, որոնք նրանք կարող են լրացնել ինքնուրույն կամ ինչ-որ մեկի օգնությամբ:
- Նկատի ունեցեք, որ որոշ մարդիկ կարող են չցանկանալ կիսվել իրենց մտորումներով և հանրայնորեն ներկայացնել իրենց արարածներին: Դրանց ներկայացնելու մեկ այլ միջոց է գեղարվեստական ցուցահանդես անցկացնելը, որտեղ յուրաքանչյուր ոք կարող է ազատ մոտենալ նկարչին և հարցեր տալ:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Թեև վարժության զվարճալի մասն այն է, որ մասնակիցները չգիտեն, թե ինչ տեսք կունենան իրենց Ֆրանկենշտեյնները մինչև միջոցառման ավարտը, դա կարող է նաև դժվարություն առաջացնել, քանի որ նրանք չեն կարող հետևել իրենց զարգացումներին: Ֆասիլիտատորը կարող է վարժությունը համալրել ուսուցման գրանցման այլ մեթոդներով (Ուսուցման գործարան, Նավապետի մատյան և այլն):

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐՂՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

16

**ԲԱՐԴ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ**

ՀԱՍՏԱԿԱԿՑՆԵՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ ԵՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԱՐԿԱԾԻ ԿԱՄ ԱՐՇԱԿԻ ՀԵՏ:



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Օգնել մասնակիցներին բացահայտել և ճանաչել իրենց անձնական ակնկալիքները, մտահոգությունները և զգացմունքները նախքան ուսումնական միջոցառումը (ԵԿԾ ծրագիր, վերապատրաստման դասընթաց կամ երիտասարդական փոխանակում):
- Խրախուսել մասնակիցներին արտահայտել իրենց անձնական ակնկալիքները, մտահոգությունները և զգացմունքները:
- Կիսել վերոնշյալ տեղեկատվությունը նույն ծրագրի կամ միջոցառման այլ մասնակիցների հետ:



ԽՈՒՄԲ

- Առավելագույնը 30 մարդ



ԻՆՉԷ  
ԱՆՀՐԱԺԵՇՏ

- Մեծ սենյակ
- Գրատախտակ կամ ֆլիպչարթ
- Կաշուն թերթիկներ
- Գրիչներ
- Թուղթ
- Առձեռն նյութեր հարցազրույցի հարցերով
- Հնարավոր հարմարեցման համար՝ համակարգիչ, պրոյեկտոր և ինտերնետի հասանելիություն ողջ մնալու մասին վավերագրական ֆիլմ ցուցադրելու համար



ԺԱՄԱՆԱԿ

- 90 րոպե



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Խումբը բաժանեք զույգերի և բացատրեք հետևյալը.

«Դուք պետք է հարցազրույց վերցնեք ձեր զուգընկերոջից՝ պատկերացնելով, որ զրուցակիցը պատրաստվում է էկզոտիկ վայր մեկնել՝ որպես մարտահրավերի մաս: Հարցրե՛ք, թե ինչ է նա անելու ճամփորդության ընթացքում և ինչի է ակնկալում հասնել ու ինչ սովորել: Դուք պետք է պարզեք, թե ինչպես է ձեր զուգընկերը պատրաստվում ճամփորդությանը, և թե որոնք են այն մտահոգությունները, դժվարությունները կամ խոչընդոտները, որոնց նա ակնկալում է բախվել ճամփորդության ընթացքում»:

Մասնակիցներին տվեք հարցազրույցի սցենարը (վարժության ընթացքում կարող եք տպել այն առձեռն նյութերի վրա կամ գրել ֆլիպչարթի վրա).

- Ինչո՞ւ որոշեցիք հանձն առնել այս նախաձեռնությունը:
- Ի՞նչի եք նախատեսում հասնել և ինչ սովորել քվեստի ընթացքում:
- Ինչի՞ մասին է քվեստը: Ի՞նչ եք պատրաստվում անել: Ինչպիսի՞ն է լինելու ձեր առօրյան:
- Ինչպե՞ս են ընթանում նախապատրաստական աշխատանքները: Արդյո՞ք արդեն հավաքել եք ամբողջ տեղեկատվությունն այն վայրի մասին, ուր պատրաստվում եք գնալ:
- Ո՞րն է լինելու ճամփորդության ամենադժվար մասը, ձեր կարծիքով:



Ասացեք նրանց, որ յուրաքանչյուր անձին պետք է տրամադրեն առավելագույնը 15 րոպե, նախքան զույգերը փոխեն դերերը, և հարցազրուցավարները դառնան զրուցակիցներ: Ինդիդեք նրանց գրել միմյանց մասին ամենակարևոր տեղեկությունները ֆիլպչարթի թղթի վրա, որը նրանք կներկայացնեն հաջորդիվ:

Երբ բոլոր մասնակիցները հարցազրույց վերցնեն միմյանցից, խնդրեք նրանց ներկայացնել իրենց արդյունքները: Յուրաքանչյուր մասնակից կխոսի այն անձի մասին, ումից հարցազրույց է վերցրել: Տրամադրեք 30-40 րոպե ներկայացումների մասի համար:

Տեղեկություններով պատասառները փակցրեք պատին: Ներկայացումներից հետո 10-15 րոպե տրամադրեք քննարկման, մեկնաբանությունների և ամփոփման համար:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Արդյո՞ք բոլոր ճամփորդություններն ընդհանուր բան ունեն:
- Որո՞նք են ամենատարածված մտահոգությունները և ակնկալվող դժվարությունները:
- Որո՞նք են նախապատրաստման ամենաօգտակար խորհուրդները:
- Ձեր գործընկերների կողմից ներկայացվածներից ո՞րն է գրավել ձեր ուշադրությունը: Ինչո՞ւ:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Այս վարժությունը հատկապես օգտակար է իրազեկվածությունը բարձրացնելու և ինքնուրույն մտորելու համար այն մասին, թե ինչ խոչընդոտների են բախվում ավելի քիչ հնարավորություններով երիտասարդները՝ նոր նախագծի կամ միջոցառման մասնակցելիս:
- Հարցազրույցներն օգնում են երիտասարդներին առերեսվել և հասկանալ մեկը մյուսի, ինչպես նաև ավելի քիչ հնարավորություններով երիտասարդների մարտահրավերները:
- Հետնաբեմային նախապատրաստությունը կարող է լրացուցիչ հարթություն տալ միջոցառմանը: Ֆասիլիտատորը կարող է մասնակիցներին տանել բնական միջավայր կամ ցույց տալ նրանց ողջ մնալու մասին վավերագրական ֆիլմ՝ անհրաժեշտ մթնոլորտ ապահովելու համար:



ԽՈՐՀՈՒԴՆԵՐ

- Ժամանակի կառավարումը շատ կարևոր է ներկայացումների համար: Հիշեցրեք մասնակիցներին հնարավորինս հակիրճ լինել: Եթե ունե՞ծ խումբ, սահմանեք 1-2 րոպե ժամանակ յուրաքանչյուր անձի համար:
- Դասընթացավարները պետք է ընդգծեն այն փաստը, որ մասնակիցները պետք է խոսեն իրական խնդիրների և գործողությունների մասին, որոնք նրանք պատրաստվում են իրականացնել նախագծի ընթացքում:

**ԲԱՐԴ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՑԱՀՐՈՒՅՑԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԻՎ**

- Ինչո՞ւ որոշեցիք հանձն առնել այս նախաձեռնությունը:
- Ի՞նչի եք նախատեսում հասնել և ինչ սովորել քվեստի ընթացքում:
- Ինչի՞ մասին է քվեստը: Ի՞նչ եք պատրաստվում անել:  
Ինչպիսի՞ն է լինելու ձեր առօրյան:
- Ինչպե՞ս են ընթանում նախապատրաստական աշխատանքները:  
Արդյո՞ք արդեն հավաքել եք ամբողջ տեղեկատվությունն այն վայրի մասին,  
ուր պատրաստվում եք գնալ:
- Ո՞րն է լինելու ճամփորդության ամենադժվար մասը, ձեր կարծիքով:



Ստեղծվել է Jan Gasiorowski: Survivor (Ողջ մնացածը) (հեռուստասերիալ) Վիքիպեդիայում՝ [http://en.wikipedia.org/wiki/Survivor\\_\(TV\\_series\)](http://en.wikipedia.org/wiki/Survivor_(TV_series)) և  
Alone in the Wild (Միայնակ՝ վայրի բնության մեջ) (National Geographic)՝ <http://channel.nationalgeographic.com/channel/alone-in-the-wild>

ՇԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՇԵՏԱՔՐԵՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱՉԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐՈՂՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԱՆԴԱԼԱ

ՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՁԵՎՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ՄՏՈՐՈՒՄ և ԳՐԱՆՑՈՒՄ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Սահմանել և պարզաբանել անձնական/անհատական ուսուցման հետաքրքրությունները և դարձնել դրանք ուսումնական նվաճումներ:
- Պատրաստվել ուսուցմանը:
- Ճանաչել, բացահայտել և փաստաթղթավորել ուսուցումը:
- Հասնել ուսումնական նվաճումների:



ԽՈՒՄԲ

- Առավելագույնը 30 մարդ



ԻՆՉԷ  
ԱՆՆՐԱԺԵՇՏ

- Երաժշտություն ֆոնային և անհատական աշխատանքի համար
- Գույներ, գունավոր մատիտներ, յուղապատեղիներ և այլն
- Կլոր դատարկ թղթեր (A4)
- Կտրված կլոր դատարկ մանդալաններ (A4)
- Մեծ կլոր թղթի կտոր (իրար փակցված 2-4 ֆլիպչարթի թուղթ) խմբի մանդալայի համար
- Ստվարաթուղթ կտրելու դանակ, մկրատ
- Սոսինձ, կաշուն ժապավեն
- Գունավոր թուղթ՝ կտրված երեք տարբեր չափերի



ԺԱՄԱՆԱԿ

- 60 րոպե՝ ներածություն, + 15 րոպե/օրական
- 80 րոպե եզրակացություն



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՇՐԱՆԱՆԳՆԵՐ

### Նախապատրաստում

- Այն մասնակիցների համար, ովքեր չեն ցանկանում նկարել, հավաքեք տարբեր ձևերի և չափերի տարատեսակ մանդալաներ ու մի քանի անգամ պատճենեք դրանք:
- Իրար փակցրեք ֆլիպչարթի թղթերը՝ մեծ խմբի մանդալան ստեղծելու համար

### Դասընթացի սկզբում

- 1) Ստեղծե՛ք հաճելի, յուրահատուկ, հանգիստ և ոգեշնչող մթնոլորտ հատուկ երաժշտությամբ: Այն կարող է լինել արևելյան, հնդկական, տիբեթյան և այլն:
  - Առաջարկ երեկոյան դասընթացների համար - անջատեք լույսերը և վատեք մի քանի մոմ:
  - Զարդարման առաջարկ - ստեղծեք մանդալա սենյակի մեջտեղում՝ օգտագործելով գույներ, իրեր, առարկաներ, բնական նյութեր, գնդակներ և այլն:
  - Առաջարկ սկսելու համար - պատմեք կարճ պատմություն մանդալայի ընդհանուր նշանակության մասին և այն մասին, թե որտեղից է այն գալիս և ինչպես է այն աշխատում ընդհանուր առմամբ կամ տարբեր երկրներում:

Սա բացատրում է մանդալայի գաղափարը մասնակիցներին և տրամադրում նրանց՝ իրենց ուսուցման հետ կապված մանդալա ստեղծելու:

- 2) Բացատրեք, որ սա անհատական առաջադրանք է: Բացատրե՛ք, սովորողներին նստել այնտեղ, որտեղ հարմար են զգում վարժությունը կատարելու համար:
  
- 3) Ուղեցույցի հրահանգներ
  - Խնդրեք մասնակիցներին սահմանել, թե ինչ են նրանք ցանկանում սովորել դասընթացի ընթացքում, իրենց ուսուցման ակնկալիքները: Ի՞նչ եք ցանկանում ձեռք բերել: Ի՞նչ եք ցանկանում տանել ձեզ հետ տուն:
  - Ինչո՞ւ է ինձ հետաքրքրում այս դասընթացի թեման:
  - Ի՞նչ եմ ցանկանում սովորել այս միջոցառմանը:
  - Ի՞նչ եմ ակնկալում այս միջոցառումից: Ի՞նչ պետք է տեղի ունենա, որ այս միջոցառումը հաջող անցնի: Ի՞նչ է ինձ անհրաժեշտ միջոցառման ընթացքում ինձ հարմարավետ զգալու համար:
  - Տեղեկացրեք մասնակիցներին, որ մանդալայի կենտրոնում իրենք են՝ «սովորողները»՝ շրջապատված տարբեր ուսումնական հետաքրքրություններով:
  
- 4) Խնդրեք սովորողներին նկարել իրենց «ուսումնական մանդալան» (կամ կարող եք դատարկ մանդալաներ տրամադրել նրանց, ովքեր չեն ցանկանում նկարել): Յուրաքանչյուր ուսումնական հետաքրքրություն կապված է մանդալայի մեկ «տարրի» հետ:
 

Յուրաքանչյուր տարրի չափը պետք է համաչափ լինի տվյալ ուսումնական հետաքրքրության կարևորությանը՝ որքան կարևոր է ուսումնական հետաքրքրությունը, այնքան մեծ պետք է լինի տարրը: Սովորողները պետք է համառոտ անվանեն և նկարագրեն իրենց ուսումնական հետաքրքրությունները: Նրանք պետք է գծեն միայն մանդալայի և նրա տարրերի ուրվագծերը՝ առանց բացատրների գունավորման: Նրանց ուսումնական հետաքրքրությունների հետ կապված հիմնաբառերը կարող են այնուհետև գրի առնվել այդ բացատրներում: Բերե՛ք արագ օրինակ այն մասին, թե ինչպես սովորողների մանդալան կարող է դիտվել ֆիլաչարթի վրա:
  
- 5) Անհատական նախապատրաստումից հետո (մոտավորապես 30 րոպե), խնդրեք մասնակիցներին կիսվել իրենց ուսումնական հետաքրքրություններով երեք հոգուց բաղկացած փոքր խմբերում (20 րոպե): Գրեք հետևյալ ուղղորդող հարցերը ֆիլաչարթի վրա կամ տպեք դրանք յուրաքանչյուր խմբի համար՝
  - Որո՞նք են այս ուսումնական միջոցառման ընթացքում ձեզանից յուրաքանչյուրի ուսումնական ամենակարևոր հետաքրքրությունները:
  - Ո՞ր ուսումնական հետաքրքրություններն են կապված դասընթացի թեմայի հետ:
  - Ո՞ր ուսումնական հետաքրքրություններն են կապված ձեր երիտասարդական աշխատանքի հետ:
  - Արդյո՞ք ձեր խմբում կան ուսումնական հետաքրքրության այլ ոլորտներ (օրինակ՝ անձնական մակարդակով):
  - Արդյո՞ք գտաք ընդհանուր ուսումնական հետաքրքրություններ ձեր խմբում:
  
- 6) Փոքր խմբային վարժությունից հետո մասնակիցներին խնդրեք արագ ուսումնասիրել ամբողջ խմբի ուսումնական մանդալաները, օրինակ՝ մանդալանները շրջանաձև դրեք հատակին և խնդրեք բոլորին շրջել դրանց կողքով: Մասնակիցները կարող են պահել իրենց ուսումնական մանդալաները, բայց խնդրեք նրանց ավելի շատ հետաքրքրություններ ավելացնել դասընթացի ընթացքում, եթե ցանկանան: Դուք կարող եք դրա համար ժամանակ հատկացնել ծրագրի տարբեր փուլերում:

**Դասընթացի ժամանակ**

- 1) Ինքնուրույն մտորման վարժություն (15 րոպե): Կարգրեք սովորողներին, թե ուսումնական որ հետաքրքրություններն են օրվա ընթացքում վերածվել ուսումնական նվաճումների, և խնդրեք նրանց համապատասխանաբար գունավորել այդ տարրերը՝ ուսուցումը տեսանելի դարձնելու համար: Գունավոր տարրը նշանակում է, որ ուսումնական հետաքրքրությունը վերածվել է ուսումնական նվաճման: Սա տեսանելի է դարձնում ուսուցումը:
- 2) Ինքնուրույն մտորումը կարող է նաև օգնել բացահայտելու նոր ուսումնական հետաքրքրություններ: Սրանք կարող են ավելացվել մանդալային՝ առկա դատարկ տարրերում:

**Դասընթացի վերջում**

- 1) Ինքնուրույն մտորման վարժություն (15-20 րոպե): Վերջին անգամ հարցրեք սովորողներին, թե ուսումնական որ հետաքրքրություններն են վերածվել ուսումնական նվաճումների: Այս տարրերն այնուհետև կարող են գունավորվել: Եթե մասնակիցներն ուսումնական որոշ նվաճումների ամբողջությամբ չեն հասել, ապա նրանք կարող են պարզապես գունավորել տարրի կեսը:
- 2) Եթե սովորողների ճանապարհին հանդիպում են ուսումնական նվաճումներ, որոնք չեն նշվել ուսումնական հետաքրքրությունների մեջ, ապա նրանք կարող են դրանք ավելացնել իրենց մանդալային և գունավորել դրանք:
- 3) Խնդրեք նրանց գրի առնել իրենց ուսումնական նվաճումները տարբեր չափերի կտրված թղթի վրա: Գոյություն ունի երեք չափ՝ ըստ այն կարևորության, որը նրանք վերագրում են նվաճմանը (20 րոպե):
- 4) Երբ բոլոր սովորողներն ավարտեն տվյալ գործողությունը, խնդրեք նրանց միանալ ընդհանուր քննարկմանը և յուրաքանչյուր անձի հնարավորություն տվեք տեղադրելու ձևերը (ուսումնական նվաճումները) հատակին դրված մեծ ուսումնական մանդալայի վրա:  
Դա անելիս նրանք համառոտ բացատրում են իրենց ուսումնական նվաճումները: Այս կերպ սովորողները դասընթացի արդյունքում (20 րոպե) ստեղծում են ուսումնական նվաճումների հսկայական հավաքական մանդալա:



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ինչպե՞ս էր դա ձեզ համար (զգացմունքներ, առաջին տպավորություններ, մտքեր, անակնկալներ...):
- Արդյո՞ք գոհ եք արդյունքից, ձեր սեփական մանդալայից:
- Ի՞նչ խոչընդոտների եք հանդիպել (ուսումնական հետաքրքրություններ փնտրելիս...):
- Ինչպե՞ս հաղթահարեցիք այդ խոչընդոտները:
- Արդյո՞ք կան տարբերություններ «ուսումնական հետաքրքրություն» հասկացության ընկալման հետ կապված:
- Ի՞նչ մարտահրավերներ և հարցեր եք դեռ տեսնում:
- Արդյո՞ք այս վարժությունն օգտակար էր ձեր սեփական ուսուցման մասին ավելի խորը պատկերացում կազմելու համար:
- Արդյո՞ք կա որևէ բան, որը կցանկանայիք ավելացնել:



ՀԱՆՄԱՐԵՑՈՒՄ

Դուք կարող եք այս վարժությունը կապել ութ բանալի կարողությունների հետ:

Հսկայական ուսումնական մանդալային պատրաստվելիս (վերը բերված երրորդ քայլ), խնդրեք մասնակիցներին կապել իրենց ուսումնական նվաճումներն ութ բանալի կարողությունների հետ: Ֆասիլիտատորը նախապատրաստում է տարբեր գունավոր թղթեր, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է մեկ բանալի կարողություն: Եթե մասնակիցները հասել են




իրենց ուսումնական նպատակին բանալի կարողություններից մեկի մասով, ապա նրանք վերցնում են այլ չափի թղթի կտոր այդ կարողության գույնով: Գունավոր թղթի չափը ցույց է տալիս, թե որքան կարևոր էր այդ ուսումնական նվաճումը նրանց համար:


Այնուհետև, մասնակիցները կրկին, մեկ առ մեկ դնում են իրենց ուսումնական նվաճումները հսկայական խմբային մանդալայի վրա և բացատրում, թե ինչու են նրանք ընտրել այդ չափը (ինչու՞ էր այդ ուսուցումը կարևոր նրանց համար) և գույնը (ինչ բանալի կարողության հետ են կապում իրենց ուսուցումը):




**Լրացուցիչ նախապատրաստություն**

- Ութ տարբեր գույներով թղթի կտորներ, որոնց վրա գրված են ութ բանալի կարողություններ:
- Երեք տարբեր չափերի թուղթ՝ յուրաքանչյուրի վրա ութ բանալի կարողությունների գույներով:







Մեթոդը մշակվել է Julia Kastler, Paola Bortini և Torben Grochol: Մանդալայի նկարները՝ Julia Kastler: [www.free-mandala.com](http://www.free-mandala.com)

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐԲՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿԱՎՈՐՈՒՄ

ՈՒՂՈՐՈՐԻՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԵՏՔՐԲՐՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՐՑԱԴՐՄԱՆ ՍԿԶՈՒՆՔՆԵՐԸ՝ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄՏՈՐՄԱՆ, ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ, ՎԻԶՈՒԿԱԼ ԻՋԱՑԻՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՂՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՑՄԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ուսուցման նկատմամբ հետաքրքրություն ունենալ
- Բարձրացնել իրազեկվածությունը ձեր սեփական ուսուցման և ձեր ուժեղ կողմերի մասին որպես սովորողի
- Խրախուսել ուսուցման նկատմամբ դրական մոտեցումը միջոցառման ընթացքում



ԽՈՒՄ

- Ցանկացած



ԻՆՉԷ  
ԱՆՉՐԱԺԵՇ

- Գնահատող հարցադրումը՝ որպես ուսուցման նկատմամբ հետաքրքրություն» առձեռն նյութը
- Նկարչության կամ ստեղծագործական արտահայտման համար նախատեսված նյութեր (օրինակ՝ պատկերներ, մատիտներ, ջրաներկեր, ֆլիքարթի թուղթ, կավ, խաղային խմոր և այլն)
- Գեղեցիկ ֆոնային երաժշտություն



ԺԱՄԱՆԱԿ

- 90 րոպե



ՔԱՅԼ ԱՌ-ՔԱՅԼ  
ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Մասնակիցներին բաժանեք զույգերի և տվեք նրանց առձեռն նյութ այս վարժության վերաբերյալ երեք քայլով.

### Քայլ 1. Հիշե՛ք ձեր պատմությունը

Սկզբից մասնակիցներն առանձին-առանձին մի քանի րոպե հատկացնում են իրենց կյանքի այն պահը հիշելուն, երբ նրանք **իսկապես ցանկացել են ինչ-որ բան սովորել**, և գրի են առնում այն:

### Քայլ 2. Պատմե՛ք ձեր պատմությունը

Այնուհետև, նրանք հնարավորինս մանրամասն պատմում են իրենց պատմությունը զուգընկերոջը: Նրանց խնդրում են միասին ավելի խորը դիտարկել պատմությանը ներկայացված փորձը՝ օգտագործելով առձեռն նյութում տրված հարցերը: Այս քայլից հետո նրանք փոխում են դերերը՝ պատմողը դառնում է ունկնդիր և հակառակը:

### Քայլ 3. Պատկերացրե՛ք ապագան

Մասնակիցներն իրենց պատկերացնում են ապագայում, երբ խանդավառություն են զգում ուսուցման նկատմամբ նմանատիպ միջոցառման ընթացքում (օրինակ՝ վերապատրաստման դասընթաց, ԵԿԾ ծրագիր): Զուգընկերն օգնում է վիզուալիզացիայի գործընթացում օգտագործելով առձեռն նյութի ուղղորդող հարցերը: Որոշ ժամանակ անց նրանք կրկին փոխում են դերերը:

Այնուհետև երկուսն էլ խնդրում են նկարել իրենց ապագա պատկերը՝ օգտագործելով տրամադրված ստեղծագործական նյութերը և գործիքները (ֆոնային գեղեցիկ ոգեշնչող երաժշտությամբ):

Երբ նկարները պատրաստ են, նրանք կիսվում են դրանցով «Խանդավառ ուսուցման պատին»: Պատկերասրահը մնում է ողջ միջոցառման ընթացքում և ծառայում որպես ոգեշնչման աղբյուր ուսումնական գործընթացում:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՆԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՖԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Վարժությունը սովորաբար ավարտվում է ցուցահանդեսով, բայց ժամանակի առկայության դեպքում, կարող եք օգտագործել հետևյալ քննարկման հարցերից մի քանիսը՝
- Ի՞նչպես էիք գգում ձեր խանդավառության մասին խոսելիս:
  - Արդյո՞ք հեշտ էր պատմություններ հիշելը:
  - Ինչպե՞ս միմյանց պատմությունները լսելն ազդեց ձեզ վրա որպես ունկնդրի:
  - Ի՞նչ եք սովորել «խանդավառ ուսուցման» մասին:
  - Ինչպե՞ս էր ապագայում «խանդավառ ուսուցումը» պատկերացնելը:
  - Ի՞նչ քայլեր եք պատրաստ ձեռնարկել այդ տեսլականի ուղղությամբ:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Մեթոդի հիմնական մասը հիմնված է անձնական փորձի մասին պատմելու վրա: Որոշ մարդիկ կարող են հակված լինել կենտրոնանալու միայն ֆորմալ կրթական համակարգում ուսուցման (բացասական) փորձի վրա: Հավանաբար, դուք ստիպված կլինեք հիշեցնել նրանց, որ ուսուցումը տեղի է ունենում ոչ միայն դպրոցներում, այլև առօրյա կյանքում:
- Այս վարժությունը կարող է օգտագործվել նաև առանձին կամավորների հետ մենթորական զրույցների համատեքստում, ինչպես նաև խմբային ԵԿԾ ծրագրերի մենթորական հանդիպումների ժամանակ՝ կամավորականության ընթացքում ուսուցման հարթակ ստեղծելիս:
- Հավանաբար, առձեռն նյութում հարմարեցված հրահանգների և հարցերի միջոցով նույն մեթոդը կարող է կիրառվել նաև երիտասարդական փոխանակման և երիտասարդական մասնակցության համատեքստում:



ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Նախքան այս մեթոդն օգտագործելը, մի փոքր ավելին կարդացեք Գնահատող հարցադրման մասին, որպեսզի ավելի լավ պատկերացում կազմեք դրա հիմքում ընկած տրամաբանության և փիլիսոփայության մասին: Դուք կարող եք նաև բերել անձնական օրինակ, երբ խանդավառ սովորող եք եղել, և պատմեք այդ պատմությունը խմբին՝ հրահանգները պարզաբանելու համար:



## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՐՑԱԴՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՇԵՏՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ

### Քայլ 1. Հիշե՛ք ձեր պատմությունը

Առանձին մի քանի թույլ հատկացրեք **ձեր կյանքի այն պահը հիշելու համար, երբ իսկապես խանդավառ կերպով ինչ-որ բան եք սովորել**, երբ լիովին ներգրավված և մոտիվացված եք եղել ավելին իմանալու այդ բանի մասին և, հնարավոր է, նույնիսկ կորցրել եք ժամանակի զգացումը: Ի՞նչ էր պատահել: Խնդրում ենք գրի առնել դա...

### Քայլ 2. Պատմե՛ք ձեր պատմությունը

Պատմեք այս պատմությունը ձեր զուգընկերոջը հնարավորինս մանրամասնորեն և **միասին ավելի խորը դիտարկեք պատմության հիմքում ընկած փորձը՝** օգտագործելով հետևյալ հարցերը՝

- 1) Ինչպե՞ս էիք զգում այդ միջոցառման ընթացքում: Որո՞նք էին հիմնական հույզերը:
- 2) Ո՞րն էր ձեր խանդավառության գույնը:
- 3) Ի՞նչ հետևանքներ ունեցավ խանդավառությունն ուսումնական գործընթացի վրա:
- 4) Ինչպե՞ս է դա ազդել ուսուցման արդյունքների վրա:
- 5) Ինչպե՞ս է դա ազդել ձեր շրջապատի մարդկանց վրա:
- 6) Եթե մտածեք այդ խանդավառության հիմքերի մասին, ի՞նչն այդ իրավիճակում (օրինակ՝ միջավայրը, թեման, մոտեցումը, այլ մարդիկ և այլն) ոգեշնչեց ձեզ:
- 7) Ի՞նչը ձեր մեջ օգնեց ձեզ խանդավառությամբ մոտենալ ուսուցմանը:
- 8) Ի՞նչ է այս ամենն ասում ձեզ ձեր ուժեղ կողմերի մասին որպես սովորողի:

Այժմ **փոխե՛ք դերերը:** Պատմողը դառնում է ունկնդիր և հակառակը:

### Քայլ 3. Պատկերացրե՛ք ապագան

Օգնեք ձեր զուգընկերոջը պատկերացնել ապագան՝ հետևելով ուղղորդող հրահանգներին և հարցերին՝

Պատկերացրեք, որ ձեր ուսումնական գործընթացն այս միջոցառման ընթացքում (օրինակ՝ վերապատրաստման դասընթաց, կամավորական ծրագիր) ավելի ոգեշնչող է: Ի՞նչ տեսք ունի այն: Ո՞րն է ձեզ համար ոգեշնչման աղբյուրը: Ի՞նչն է խանդավառություն արթնացնում ձեր մեջ: Ինչպե՞ս եք պատկերացնում ձեզ այդ կերպարում: Ինչո՞վ եք զբաղվում: Եթե ինչ-որ բան եք ասում, ապա ի՞նչ: Ի՞նչ արժեքներ եք դրսևորում: Այժմ ձեր ուզած ձևով պահպանեք այդ պատկերը:

Երբ պատկերը պարզ է ձեր գլխում, փոխեք դերերը:

Վերջում, ձեզ երկուսիդ խնդրում են **նկարել այդ պատկերները՝** օգտագործելով տրամադրված ստեղծագործական նյութերն ու գործիքները: Դա անելիս շատ մի մտածեք և խիստ մի դատեք ձեր գեղարվեստական հմտությունները: Պարզապես հետևեք ձեր զգացմունքներին: Բարի ժամանց:



Ստեղծվել է Darko Markovic, <http://appreciativeinquiry.case.edu/>

ՀԵՏՆԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՂՂՈՐԴՈՒՄ ԵՎ  
ՊԼԱՆՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



## ՈՐՏԵՂ ԵՔ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

ԱՇԽՈՒՅԺ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Խթանել ուսուցման թեմայով քննարկում խմբում:
- Վիճարկել ենթադրություններն այն մասին, թե ինչպես է ուսուցումը տեղի ունենում:
- Բարձրացնել մեր սեփական ուսումնական նախասիրությունների մասին իրազեկվածությունը:



ԽՈՒՄԲ

- Նվազագույնը 6 մարդ



ԻՆՉԷ  
ԱՆՂՐԱԺԵՇՏ

- «Համաձայն եմ» և «Համաձայն չեմ» գրառումներով նշաններ սենյակի հանդիպակաց կողմերում:
- Բավականաչափ մեծ սենյակ, որպեսզի խումբը կարողանա տեղաշարժվել:
- Առանձին ֆլիպչարթի թղթերի վրա գրված պնդումներ:
- Հատակի վրա գիծ (օրինակ՝ օգտագործելով կաշուն ժապավեն, պարան, կավիճ) «Համաձայն եմ» և «Համաձայն չեմ» նշանների միջև:



ԺԱՄԱՆԱԿ

- 60-90 րոպե



ՔԱՅԼ ԱՌՔԱՅԼ  
ՀՐԱՆԱՆԳՆԵՐ

Տվյալ մեթոդը դասական «պնդումներով վարժուպան» հարմարեցված տարբերակն է: Ֆասիլիտատորը կարողում է պնդումը և մասնակիցներին խնդրում կանգնել սենյակի հանդիպակաց կողմերում գտնվող «Համաձայն եմ» և «Համաձայն չեմ» նշանների մոտ: Որքան մոտ են նրանք կանգնում նշաններին, այնքան ավելի շատ են համաձայն կամ համաձայն չեն: Որքան մոտ են կանգնում բաժանարար գծին, այնքան քիչ են համաձայն կամ համաձայն չեն: Բոլորը պետք է տեղ զբաղեցնեն «Համաձայն եմ» կամ «Համաձայն չեմ» կողմում:

Այն բանից հետո, երբ բոլորը զբաղեցնում են իրենց տեղերը, ֆասիլիտատորը խնդրում է մարդկանց բացատրել իրենց դիրքորոշումները և փորձել համոզել բաժանարար գծի մյուս կողմում գտնվող մասնակիցներին: Խրախուսեք ակտիվ անկրնդորումը և թույլ մի տվեք բոտն բանավեճեր: Բոլոր փաստարկները լսելուց հետո հարցրեք՝ արդյոք որևէ մեկը պատրաստ է փոխել իր դիրքորոշումը: Եթե այո, ապա թույլ տվեք որ տեղափոխվածները լրացուցիչ մեկնաբանություններ անեն: Կրկնեք մի քանի պնդում:

Այնուհետև խնդրեք խմբին շրջան նստել՝ քննարկման համար:

### Հնարավոր պնդումներ

- Երիտասարդները միշտ մոտիվացված են սովորելու, եթե միջավայրը բավականաչափ աջակցող է:
- Եթե վարքի տեսանելի փոփոխություն չկա, ապա չեք կարող ասել, որ ուսուցումն իսկապես տեղի է ունեցել:
- Ավելի արդյունավետ է սովորել անհաջողությունից, քան հաջողությունից:
- Ուսուցումը հիմնականում անգիտակցական գործընթաց է:
- Ուսուցումը չի կարող լինել առանց մտորման:
- Իսկապես ինքնուրույն սովորող դառնալու համար ուսուցումը պլանավորել կարողանալն ավելի կարևոր է, քան ինքնահոսի թողնելը:
- Սովորել թե ինչպես սովորել ավելի կարևոր է, քան որևէ թեմա սովորելը:

ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ ԵՎ ՓԱՏՆԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

YOUTHPASS-ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԱՍԻԼԻՏԱՏՈՐԻ ԴԵՐԸ



ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ինչպե՞ս էիք զգում վարժության ընթացքում:
- Վարժության ո՞ր փաստարկն էր ձեզ համար անսպասելի:
- Ի՞նչ ենթադրություններ ունեք ուսուցման վերաբերյալ:
- Որտեղի՞ց են գալիս այդ ենթադրությունները:
- Արդյո՞ք այս վարժությունը նաև ուսուցման գործընթաց էր:
- Ի՞նչ սովորեցիք այս վարժության ընթացքում:



ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄ

- Այս վարժությունը հատուկ մարտահրավեր է ներկայացնում այն երիտասարդների համար, ովքեր չեն տիրապետում լեզվական նույն հմտությունների՝ պնդումները և դրանց նրբությունները լիովին հասկանալու համար: Այս դեպքում, պնդումներն ավելի կոնկրետացրեք, օրինակ՝ «Ես ավելի շատ բան եմ սովորում մեկ ժամ հեռուստացույց դիտելով, քան մեկ ժամ դասի նստելով»:
- Եթե երիտասարդները չեն խոսում նույն լեզվով, կարող եք թարգմանել պնդումները և տպել դրանք ֆլեշ քարտերի վրա:
- Փոքր խմբերի դեպքում այս վարժությունը կարող եք խաղալ որպես սեղանի խաղ:
- Եթե վարժությունն օգտագործվում է կամավորի հետ մենթորի անհատական զրույցներում, ապա կարող եք օգտագործել պնդումները որպես ինքնուրույն մտորման հարցաթերթ:
- Այս վարժությունը կարող է ուղեկցվել TED Talks-ի կրթական տեսանյութերով, որոնք մարտահրավեր են նետում ուսուցման վերաբերյալ որոշ նախապաշարմունքներին և այդ գործընթացում ուսուցանողների դերին: Համապատասխան տեսանյութերից են՝

Sugata Mitra – Child driven Education (Երեխայակենտրոն կրթություն)  
[http://www.ted.com/talks/lang/eng/sugata\\_mitra\\_the\\_child\\_driven\\_education.html](http://www.ted.com/talks/lang/eng/sugata_mitra_the_child_driven_education.html)

Ken Robinson – Changing Education Paradigms (Քեն Ռոբինսոն՝ Կրթության պարադիգմների փոփոխում)  
[http://www.ted.com/talks/lang/eng/ken\\_robinson\\_changing\\_education\\_paradigms.html](http://www.ted.com/talks/lang/eng/ken_robinson_changing_education_paradigms.html)



ԽՈՐՀՈՒԴՆԵՐ

Թեև մասնակիցներին ասվում է, որ բանավեճ թույլատրելի չէ, շատ հաճախ մարդիկ բուռն քննարկումների մեջ են մտնում: Եթե դա տեղի ունենա, հիշեցրեք նրանց կանոնների մասին, խնդրեք նրանց մտածել, թե ինչու են նրանք այդպես արձագանքել, և պահեք դա քննարկման համար:

Որպես ֆասիլիտատոր՝ փորձեք ներգրավել լուռ մասնակիցներին, ինչպես նաև այն մարդկանց, ովքեր կանգնել են տարածքի տարբեր մասերում: Սա լավ միջոց է տարբեր կարծիքների արտահայտումը թույլ տալու համար:

ՀԵՏԱԲԵՄԱՅԻՆ  
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԱՑՈՒՄ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՈՐՈՐԻՄ ԵՎ  
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՄՏՈՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

20

## ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀԱՐՑԱԹԵՐԹ՝ ձԵՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ինքնագիտակցության ձևավորում սեփական ուսուցումն ուղղորդելու կարողության մասով



ԽՈՒՄԲ

- Ցանկացած



ԻՆՉԷ  
ԱՆՉՐԱԺԵՇՏ

- Հարցաթերթ յուրաքանչյուր մասնակցի համար



ԺԱՄԱՆԱԿ

- 60 րոպե



ՔԱՅԼ ԱՌ-ՔԱՅԼ  
ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Բացատրե՛ք մասնակիցներին, որ սեփական ուսուցումն ուղղորդելու կարողությունը վերլուծվել և նկարագրվել է շատ տարբեր ձևերով: Նրանք կստանան թղթի կտոր, որը նկարագրում է ինքնուրույն սովորողի հիմնական հատկանիշները: Նրանցից պահանջվում է քսան րոպեում ուսումնասիրել դրանք և անհատապես մտորել, թե արդյոք իրենք իրենց վերագրում են այդ հատկանիշները:

Ինքնադիտարկմանը տրամադրված ժամանակի ավարտից հետո խնդրեք նրանց կազմել զույգեր՝ խոսելու իրենց բացահայտածի մասին (20 րոպե): Ավարտեք ամբողջ խմբով վերջնական քննարկմամբ (20-ից 30 րոպե):



ՔՆՆԱՐՎՈՒՄ

### Զույգերի համար

- Ինչպե՞ս էր այս մասին մտածելը:
- Արդյո՞ք դա ձեզ նոր տեսակետ տվեց ձեր ուսման վերաբերյալ: Ինչպե՞ս:
- Արդյո՞ք գիտեք, թե ինչի վրա եք ցանկանում այժմ աշխատել:

### Ամբողջ խմբի համար

- Ի՞նչն է ձեզ զարմացրել, ի՞նչն եք ուշագրավ համարում:
- Համաձա՞յն եք այդ հատկանիշների հետ:
- Ո՞րն եք համարում ինքնուրույն սովորող դառնալու հետ կապված ամենամեծ մարտահրավերը:



**L2L (ՍՈՎՈՐԵԼ՝ ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵԼ)՝  
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՍՈՎՈՐՈՂ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Մտածե՛նք

Հաջողիվ Ձեզ ներկայացվելու է հմտությունների ցանկ, որը Ձեզ ուղղորդելու է ինքնուրույն ուսուցման ժամանակ: Արդյո՞ք զգում եք, որ ունեք այս հմտությունները, կամ դրանց մի մասը, որո՞նք, ձեր կարծիքով, դեռ զարգացման կարիք ունեն:

Ժամանակ տրամադրեք և բաց թողնված տարածքներում կատարեք ձեր գրառումները:

- **Ճանաչել ինքս ինձ որպես ինքնուրույն սովորող:**
- **Ինչպե՞ս եմ ես կարողանում ավելի լավ սովորել:**
- **Ուսումնական միջոցառումների հետ կապված օգնություն խնդրելու և տրամադրելու հարցում հասակակիցների հետ շփվելու հմտություն:**
- **Սեփական ուսումնական կարիքներն ախտորոշելու հմտություն:**
- **Ուսուցման կարիքներն ուսուցման նպատակների, պլանների և գործողությունների վերածելու ունակություն:**
- **Ուսուցիչներին/դասընթացավարներին որպես օգնականներ կամ ֆասիլիտատորներ վերաբերվելու և նրանց փորձն օգտագործելու հարցում նախաձեռնություն ցուցաբերելու հմտություն:**
- **Ուսումնական տարբեր կարիքներին և նպատակներին համապատասխան մարդկային ու նյութական ռեսուրսները բացահայտելու հմտություն:**
- **Սեփական ուսումնական նպատակների իրականացման վերաբերյալ ապացույցներ հավաքելու և դրանք ստուգելու ունակություն:**



## ՀՂՈՒՄՆԵՐ

### ՀԵՏԱԳԱ ԸՆԹԵՐԳՈՒՄ

#### YOUTHPASS

- Youthpass website. [www.youthpass.eu](http://www.youthpass.eu)
- Youthpass guide. [www.youthpass.eu/en/youthpass/guide](http://www.youthpass.eu/en/youthpass/guide)
- Youthpass for all. Recognising skills of young people with fewer opportunities. [www.salto-youth.net/youthpassforall/](http://www.salto-youth.net/youthpassforall/)
- Youthpass in EVS training cycle. [www.youthpass.eu/en/youthpass/downloads/](http://www.youthpass.eu/en/youthpass/downloads/)
- Youthpass and learning to learn. Ideas for practitioners. [www.youthpass.eu/en/youthpass/downloads/](http://www.youthpass.eu/en/youthpass/downloads/)
- Youthpass for absolute beginners. [www.youthpass.eu/en/youthpass/downloads/](http://www.youthpass.eu/en/youthpass/downloads/)

#### ՆԵՐԱՌՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

- SALTO Inclusion for ALL youth work manuals. [www.salto-youth.net/InclusionForALL/](http://www.salto-youth.net/InclusionForALL/)
- Coaching Guide (2008). Coaching youth initiatives. Guide for supporting youth participation. [www.salto-youth.net/ParticipationPublications/](http://www.salto-youth.net/ParticipationPublications/)

#### ԱՎԵԼԻ ՇԱՏ ԳՈՐԾԻՔՆԵՐ

- SALTO Toolbox for youth work and training. [www.salto-youth.net/toolbox/](http://www.salto-youth.net/toolbox/)
- Youth Partnership 'T-Kit' series. <http://youth-partnership-eu.coe.int/>

#### ԱՎԵԼԻՆ՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Coyote magazine #11. Non-formal learning and education. <http://youth-partnership-eu.coe.int/>
- Infed: The encyclopaedia of informal education. [www.infed.org](http://www.infed.org)
- Taylor, M., Kloosterman, P. (2010). The Learning2Learn Handbook for facilitators. [www.learning2learn.eu](http://www.learning2learn.eu)

## ԱՎԵԼԻՆ՝ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Bridges for Recognition. [www.salto-youth.net/BridgesForRecognition/](http://www.salto-youth.net/BridgesForRecognition/)
- European Communities. Key Competences for Lifelong Learning – A European Framework. [http://ec.europa.eu/dgs/education\\_culture/publ/pdf/ll-learning/keycomp\\_en.pdf](http://ec.europa.eu/dgs/education_culture/publ/pdf/ll-learning/keycomp_en.pdf)
- Partnership between the European Commission and the Council of Europe in the field of Youth. Pathways 2.0 towards recognition of non-formal learning/education and of youth work in Europe. <http://youth-partnership-eu.coe.int/>
- Council of Europe. European portfolio for youth workers and youth leaders. [www.coe.int/youth/](http://www.coe.int/youth/)
- Council of Europe. Mini-Compendium on non-formal education. <http://www.coe.int/youth/>
- Unlocking Doors to Recognition. Handbook for setting up strategies for the better recognition of youth work and non-formal education in different contexts. [www.youthpass.eu/en/youthpass/downloads/](http://www.youthpass.eu/en/youthpass/downloads/)

## ԳՐՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀՐՈՒՄՆԵՐ

- Appreciative Inquiry. <http://appreciativeinquiry.case.edu>
- Boyatzis, McKey, Johnston (2008). On becoming a resonant leader. Harvard Business Press, p. 153-158
- Cooperider, W. (2005). Appreciative Inquiry - A positive revolution in change. Berrett-Koehler Publishers, Inc.
- The encyclopaedia of informal education. [www.infed.org](http://www.infed.org)
- Experiential learning. <http://learningfromexperience.com>
- Honey, P., Mumford, A., (2006). The learning styles questionnaire 80-items version. Peter Honey Publications Ltd.
- Honey, P. (2007). Continuing personal development. Peter Honey Publications Ltd.
- Honey, P (2009). How to become a more effective learner. Peter Honey Publications Ltd.
- Kolb, D. A. (1984). Experiential Learning, Englewood Cliffs, NJ.: Prentice Hall.
- Kolb, D (2005). Learning Style Inventory (LSI) (Version 3). The HayGroup
- Robinson, K. (2009). The Element: How finding your passions changes everything. New York: Penguin Group.
- Scaffolding Theory. [http://en.wikipedia.org/wiki/Scaffolding\\_Theory](http://en.wikipedia.org/wiki/Scaffolding_Theory)
- Smith, M. K. (2001). David A. Kolb on experiential learning. The encyclopaedia of informal education. Retrieved [25.03.2011] from <http://www.infed.org/b-explrn.htm>
- UNIQUE Network (2010). Learning to learn – a method in action. Research synthesis report. [www.learning2learn.eu/](http://www.learning2learn.eu/)

# ՆՇՈՒՄՆԵՐ ԶԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ



**Darko Markovic** Բելգրադից է, Սերբիա: Նա դասընթացավար է, քուլչ, հոգեբան և հոգեդրամայի թերապևտ, Grupa «Hajdeda...»-ի ([www.hajdeda.org.rs](http://www.hajdeda.org.rs)) համահիմնադիրներից մեկը և «Inn.Side – people and

training»-ի («Inn.Side՝ մարդիկ և վերապատրաստում») սեփականատերը: Նրա առաքելությունն է օգնել մարդկանց վերագտնել իրենց հետաքրքրությունները, արտահայտել իրենց տեսլականները և զարգացնել այն բանալի կարողությունները, որոնք անհրաժեշտ են ավելի արդյունավետ ու կատարյալ կազմակերպչական և անձնական կյանքի համար: Նրա հետաքրքրության հիմնական ոլորտներն են ուսուցումն ու զարգացումը, միջմշակութային կարողությունը, հուզական բանականությունը, Եվրոպական կամավորական ծառայությունը և ոչ ֆորմալ կրթության ավելի լավ ճանաչումն ինչպես ազգային, այնպես էլ եվրոպական մակարդակով:

<http://trainers.salto-youth.net/DarkoMarkovic/>

Էլ. փոստ՝ [darko@innside.co.rs](mailto:darko@innside.co.rs)



**Juan Ratto-Nielsen** ներկայումս աշխատում է որպես ֆրիլանս դասընթացավար «Երիտասարդները գործելիս» ծրագրում և համակարգում է ուսումնական միջոցառումները INTER-

ACCION-ի հետ միասին (Մուրսիա, Իսպանիա)՝ EVS-ի, երիտասարդական շարժունակության և երիտասարդական նախաձեռնությունների համար՝ ավելի քիչ հնարավորություններով երիտասարդների ներգրավման նպատակով: Նա ներգրավված է եղել մի շարք ազգային և միջազգային երիտասարդական ծրագրերում՝ որպես մենթոր, դասընթացավար և ծրագրի համակարգող՝ EVS-ի, ոչ ֆորմալ ուսուցման ճանաչման և երիտասարդների աշխատունակության վրա կենտրոնացմամբ: Որպես դասընթացավար, ով մասնագիտացված է ուսուցման գործընթացը ոլորացնելու մեթոդների և գործիքների մասով, նա աշխատել է այս հրատարակման «գործիքներ» հատվածի վրա և գրել «ներառման ապացույց» բաժինը:

<http://trainers.salto-youth.net/JuanRattoNielsen/>

Էլ. փոստ՝ [rattonielsen@gmail.com](mailto:rattonielsen@gmail.com)



**Paul Kloosterman** հոլանդացի ֆրիլանս դասընթացավար և գրող է, ով բնակվում է Իտալիայի Մեյխոո դի Պորտո Սպլի քաղաքում: Նա աշխատում է Եվրոպական տարբեր ծրագրերում: Աշխատանքի հիմնական ոլորտները, ի թիվս այլոց, ներառում են սովորել՝ ինչպես սովորելը և դասընթացավարների վերապատրաստումը: Նա ներգրավված է եղել Youthpass-ի զարգացման գործում՝ որպես Youthpass-ի խորհրդատվական խմբի անդամ, Youthpass-ի դասընթացավարների խմբից դասընթացավար և Youthpass ուղեցույցի համահեղինակ:

Էլ. փոստ՝ [paul@pameambro.org](mailto:paul@pameambro.org)

## ՀԱՏՈՒԿ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մեծ շնորհակալություն ենք հայտնում Եվրոպայում գտնվող բոլոր այն մարդկանց, ովքեր կիսել են իրենց գաղափարներն այս Ձեռնարկի կազմման համար:

Հատուկ շնորհակալություն նաև 2010 թվականի նոյեմբերի 22-ից 28-ը Բեռլինում տեղի ունեցած «Youthpass գործիքներ և մեթոդներ» սեմինարի թիմին և մասնակիցներին,

ի դեմս՝ Tatiana Zaitseva, Alexander Kumanov, Pétur Björgvin Thorsteinsson, Juan Ratto-Nielsen, Deirdre Quinlan, Diona Los, Tony Geudens, Anca David, Endre Kiss, Santa Grinberga, Onni Sarvela, Ann Daniels, Vanda Kovács, Tomas Kurapkaitis, Alberto Imprescia, Lucia Pergreffi, Annette Mütter, Ingrid Müller.

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին անգամ հրատարակվել է 2012 թվականին ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության և ՍԱԼՏՈ ներառման ռեսուրսային կենտրոնների և JUGEND für Europa-ի՝ «Էրազմուս+ Երիտասարդները գործելիս» ծրագրի հարցերով Գերմանական ազգային գործակալության կողմից: SALTO (ՍԱԼՏՈ) նշանակում է Support (աջակցություն), Advanced Learning and Training Opportunities (առաջադեմ ուսուցման և վերապատրաստման հնարավորություններ) «Էրազմուս+ Երիտասարդները գործելիս» ծրագրի շրջանակներում: Այն թարմացվել և վերաստվել է 2016 թվականին ՍԱԼՏՈ վերապատրաստման և համագործակցության ռեսուրսային կենտրոնի և JUGEND für Europa-ի կողմից:

ՍԱԼՏՈ վերապատրաստում և համագործակցություն (<http://www.salto-youth.net/TrainingAndCooperation>) և JUGEND für Europa՝ «Էրազմուս+ Երիտասարդները գործելիս» ծրագրի հարցերով Գերմանական ազգային գործակալություն (<http://www.jugendfuereuropa.de/>), Գոդեսբերգեր պողոտա 142-148, D-53175, Բոն: Էլ.փոստ՝ [youthpass@salto-youth.net](mailto:youthpass@salto-youth.net):

ՍԱԼՏՈ ներառում (<http://www.salto-youth.net/inclusion/>), գտնվելու վայր՝ «Էրազմուս+ Երիտասարդները գործելիս» ծրագրի հարցերով Բեյզիական-ֆլամանդական ազգային գործակալություն, JINT vzw, Գրեթրիստրատ 26, B-100, Բրյուսել:

Էլ. փոստ՝ [inclusion@salto-youth.net](mailto:inclusion@salto-youth.net).

### Գրել են՝

Paul Kloostermann, Darko Markovic, Juan Ratto-Nielsen.

### Համակարգել և խմբագրել են՝

Tony Geudens, Rita Bergstein and Kristiina Pernits

### Դասավորություն՝

Kreativraum, [www.kreativraum.de](http://www.kreativraum.de)

### Մուտնկարներ՝

Zomarr

### Սրբագրել է՝

Yasmine Estaphanos, London

Վերարտադրումը և ոչ առևտրային նպատակներով օգտագործումը թույլատրվում է աղբյուրը նշելու և [youthpass@salto-youth.net](mailto:youthpass@salto-youth.net) և [inclusion@salto-youth.net](mailto:inclusion@salto-youth.net) -ին ծանուցելու պայմանով:

Սույն փաստաթուղթը պարտադիր կերպով չի արտահայտում Եվրոպական հանձնաժողովի, ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոնների, JUGEND für Europa-ի կամ դրանց հետ համագործակցող կազմակերպությունների պաշտոնական տեսակետերը:

# ՄԱՆՐԱՄԱՍՆ՝ YOUTHPASS-ի ՄԱՍԻՆ

Գործնական խորհուրդներ և մեթոդներ, որոնք կօգնեն առավելագույնս օգտվել Youthpass գործընթացից:

«Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը երկու բանի մասին է՝

- Youthpass գործընթացն իր տարբեր փուլերում
- Youthpass գործընթացն իրականացնելու տարբեր մեթոդներ և գործիքներ:

Այս Ձեռնարկը նախատեսված է նրանց համար, ովքեր ներգրավված են երիտասարդների ուսումնական գործընթացի ոլորացման մեջ՝ մեթոդներ, երիտասարդական ոլորտի աշխատողներ/ առաջնորդներ, քույրներ, դասընթացավարներ...

Youthpass-ը ստեղծվել է 2007 թվականին՝ որպես «Երիտասարդները գործելիս» ծրագրի ճանաչման գործիք: Դրա ներկայացումից ի վեր բազմաթիվ երիտասարդական աշխատողներ և երիտասարդական առաջնորդներ մշակել են ծրագրի շրջանակներում երիտասարդներին ուսուցման հարցում աջակցելու տարբեր եղանակներ: Youthpass-ը ոգեշնչել է շատ մարդկանց մտածել ուսուցման թեմայի շուրջ և քննարկել այն: Ինչ և ինչպե՞ս են երիտասարդները սովորում երիտասարդական աշխատանքի ծրագրերում: Ինչպե՞ս կարող են երիտասարդական աշխատողները նպաստել այս գործընթացին: Ինչպե՞ս կարող է ուսուցումն ավելի մեծ ճանաչում ձեռք բերել: Ինչպե՞ս կարող ենք փաստաթղթավորել ձեռք բերված կարողությունները: Ինչպե՞ս կարող են մյուսները տեսնել այս գեղեցիկ աշխատանքի արդյունքները:

«Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը մանրամասնորեն դիտարկում է այս բոլոր հարցերը և փորձում պատասխանել դրանցից մի քանիսին: Հատուկ ուշադրություն է դարձվում այն խոչընդոտների հաղթահարմանը, որոնց կարող են բախվել որոշ երիտասարդներ, երբ խոսքը վերաբերում է ուսուցմանը: Այս կերպ Youthpass գործընթացը հասանելի է դառնում բոլորի համար:

«Մանրամասն՝ Youthpass-ի մասին»-ը ՍԱՏՈ վերապատրաստան և համագործակցության ու ՍԱՏՈ ներառման և բազմազանության ռեսուրսային կենտրոնների համատեղ հրատարակությունն է, որը հրատարակվել է JUGEND für Europa-ի՝ «Էրազմուս+ Երիտասարդները գործելիս» ծրագրի հարցերով Գերմանական ազգային գործակալության և Եվրոպական համերաշխության կրթաբաժնի հետ համատեղ:

Այն կարող եք անվճար ներբեռնել [www.salto-youth.net/YouthpassUnfolded/](http://www.salto-youth.net/YouthpassUnfolded/) կամ [www.youthpass.eu/en/youthpass/downloads/](http://www.youthpass.eu/en/youthpass/downloads/) կայքից:

## Հայերեն թարգմանություն

Այս հրատարակումը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «ԵՄ-ն հանուն երիտասարդների».

Երիտասարդության զբաղվածություն և ձեռներեցություն» ծրագիրը և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

## Թարգմանությունը՝

Բելլա Մխիթարյանի

## Սրբագրումը՝

Արլիինե Դավոյանի

